



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

657

S-71

1878<sub>p</sub>



ԳՈՐԾԵԱԿԱՆ

ՏՈՄԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

24 SEP 2010

657  
S-71

*Handwritten signature*

ԳՈՐԾՆԱԿԱՆ

# ՏՈՄԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ



ՊԱՐՁ ԵՒ ԿՐԿՆԱԿ ՏՈՄԱՐ

ՀԱՇՈՒՅՑՈՒՑԻ, ՓՈՒԱՆՍԱԿԱԳՐԻ, ԲՆՈՒՆԱԳՐԻ, ՀԱՇՈՒԸՆԹԱՑԻ,  
ԳՆՄԱՆ ԵՒ ՎԱՃԱՌՄԱՆ ՀԱՇՈՒՈՑ ԵՒՍՅՈՂ ՁԵՒԵՐ ԵՒ ՕՐԻՆՏԱԿՆԵՐ



ի

Ն. ՏԻԻԶԷՆՃԵԱՆԷ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

1878

ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱՐԱՆ  
Կ. ՊՈԼԻՍ

Չագնագնրլար Եօգուռու, Յակոբեան խան, թիւ 13.

ՀԱՅԿ

23 AUG 2013

24.871

**ՉԱՅՆ**

**ԵՐԱՒՏԱԳԷՏ ՍՐՏԻ**

**Ի ՅԻՇՍԱՍԿ**

**ՎԱՂԱՄԵՌԻԿ ԲԱՐԵՐԱՐԻՆ ԻՄՈՅ**

**ԳՍՐԱԿԷՕՁԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ ԷԹԷՆՏԻ**

Հանգիր յերկինս, Դու, արդարոցն ի կանառ .  
 Հոգիդ վըսեմ, սիրոյ, ուսման վեհ տիպար :  
 Աւանդ, ընդ մահ Մեկենասիդ մահացան  
 Ակրնկալիք եւ իղձք համայն Հայուծեան :  
 Վանդ իսկ շիջաւ արեւ պայծառ քոյդ կենաց .  
 Վաղ իսկ Երկինք բարձին զՔեզ ի յաստեաց՝  
 Քաջազարմիկ ընձիւղ տոհմին ԳՍՐԱԿԷՕՁԵԱՆ,  
 Սիրող զըրոց և զըրողաց պերճ պաշտպան :  
 Այլ մինչ աշխարհ կանգնէ կընեայ մահարձան՝  
 Ում ի մարտին հանդիսացեալ յաղթական՝  
 Խըրոխտապանձ կըրէր ի պիղծ ճակատուն  
 Պըսակ ծածաւ յարիւն անմեղ որերոյն :  
 Ձինչ պարտ է ինձ առնել ի շուք Քոյ անուան . . .  
 Բարէ, չիք մեծ ինչ՝ քոց բարեաց տալ փոխան՝  
 Այլ զարգասիս հայրագորով խընամոց,  
 Ձոր ունէիր զինէն մանուկ ի տիոց .  
 Դ ի յիշատակ առաքինւոյդ անսասան,  
 Դոյզն իմ այս երկ լիցի յաւերժ Քեզ արձան :



2955-91

Տոմարակալութիւնը օգտակար եւ գործածական գիտութիւններէն մէկն է. ամեն կարգի արհեստւորն ու վանառականը այս գիտութեան անհրաժեշտ պէտք ունի :

Ով որ վանառականութեան կամ որ եւ է գործի մը ձեռնարկէ պարտի տեղեկութիւն ունենալ այս կարեւոր գիտութեան վրայ, առանց որոյ քիչ ասեցէն կը կործանի՝իւր գործոց բնթացքին վրայ նեղրիտ գողափար մը չ'ունենալուն :

Մեր ազգին մէջ վանառականութիւնը օր ըստ օրէ զարգանալուն համար, բնականաբար Տոմարակալութեան պէտքն ալ աւելի զգալի եղած է : Ինչո՞ւ ուրեմն այսչափ կարեւոր եւ օգտակար գիտութիւն մը չ'ուսանի մարդ, մանաւանդ թէ այնչափ մեծ աշխատութիւն եւ երկար ժամանակ պահանջող բարձր գիտութիւն մ'ալ չէ : Տոմարակալութեան (Կրկնատմարը ըսել կ'ուզեմք) դժուարութեան յարելու համար՝ բաւական է որ առաջին անգամ սկզբունքը լաւ ըմբռնէ մէկը, ալ այնուհետեւ գործը կը դիւրանայ եւ մէկ երկու ամսուան մէջ բաւական տեղեկութիւն կրնայ ունենալ առ այն :

Տոմարակալութեան կարեւորութեան վրայ հոս այսչափ մը խօսիլ բաւ համարելով, սկսինք քանի մը խօսք ալ ըսել մեր այս աշխատասիրութեան վրայ թէ — Ինչ բան եղաւ շարժառիթ մեր այս գործին ձեռնարկութեանը եւ թէ որո՞յ շնորհիւ ի լոյս ընծայուեցաւ :

Ազգերնուս մէջ ասկաւին ընդարձակ եւ պէտք եղած մանրամասնութիւններ պարունակող Տոմարագիտութեան դասագիրք մը չ'ըլլալուն, փորձով գիտեմ որ ազգային վարժարաններու մէջ Տոմարագիտութիւնը ընդհանրապէս Գաղղիերէն գրեւոր առաջնորդութեամբ կ'աւանդուի դասի ժամանակ, որով թէ դասասուն աւելի ժամանակ կ'անցընէ եւ թէ ուսանողը դժուարութեան կը մասնուի եւ չի կրնար լիովին ուսանիլ պէտք եղած մանրամասն տեղեկութիւնները :

Տոմարագիտութիւնը՝ քաջահմուտ Գաբրիէլ Էֆէնտի Ներսիսեանի դասաստուութեամբ ուսնելէս վերջը, Գարակէօզեան Էֆէնտիներուն վանառասան մէջ հինգ տարի գրագրութեան պատշտակ վարելով, Տոմարակալութեան մասին ստացած նախնական եւ ստական ծանօթութիւններս հոն գործնական եւ հիմնական կերպիւ ուսայ եւ մի քանի Գաղղիացի երեւելի հեղինակաց գործերը ինձ առաջնորդ առնելով, վերոյիշեալ դժուարութիւնը եւ անպատեհութիւնը, ըստ կարի, բառնալու համար, սոյն գործին ձեռնարկեցի :

Եւ որովհետեւ երախտագիտական նուիրական պարտք մ'ունէի հասուցանելու Գարակէօզեան Կարապետ Էֆէնտիի, որոյ հայրական

խնամոքը եւ պատշաճութեան հովանոյն սակ վարած էի դպրոցական ընթացքս, ուստի որոշեցի նորա անուան երջանիկ յիշատակին նուիրել զայն :

Աշխատասիրութիւնս պատշաճելէս վերջը ներկայացուցի զայն Գարակէօզեան Տիգրան էֆէնտի, որն որ մեծաւ հաճութեամբ ընդունեց եւ ամենայն սիրով խոստացաւ զայն ի լոյս ընծայել :

Աշխատասիրութիւնս արդարեւ մեծ բան մը չ'է, վասն զի ուզեցի աւելի դպրոցի մէջ դասագիրք ըլլալու յարմար բան մ'ընել: Ամբողջ գործը երկու մասի բաժնեցի. Ա. մասին մէջ առակերսր պիտի ուսանի վաճառականութեան կամ առեւտրին ինչ եւ ինչ կերպով ըլլալը, բէ որո՞ւ կ'ըսեն միջնորդ, յանձնառու վերջապէս վաճառականութեան մէջ եղած զանազան գործողութիւնները, նաեւ վաճառականական գործողութեանց համար գործածուած զանազան բոլորք վրայ տեղեկութիւններ. պիտի տեսնայ հոն նոցա իւրաքանչիւրին ձեւն ու օրինակը, որոց համար դրուած հրահանգներն ալ ինք պիտի պատշաճ իբրեւ տմարակալ կամ գրագիր վաճառականի մը փոխ: Բ. մասին մէջ պիտի ուսանի Տմարակալութիւնը եւ սորա վերաբերեալ զանազան տեսակներուն ձեւերը հանդերձ տեղեկութեամբ. ի վերջոյ իբրեւ հրահանգ տրուած Ձեռատետրին յօդուածներն ալ առակերսր ինքնին լուծելով պէ՛տ է պատշաճ օրհաւելը, Մայր-հաւելը եւ ընդհանուր հաշուէկէիւրը, այնպէս՝ ինչպէս Տմարակալ մը վաճառականի փոխ:

Այս երկու մասերը երբ լաւ մը ուսանի մէկը՝ տարակալս չ'ունիմ որ բառական ընդարձակ եւ լաւ տեղեկութիւն պիտի ունենայ Տմարագիտութեան վրայ, որով դպրոցէն ելած եւ գործի սկսած օրը, բեռնագիր, հաշուեցուցակ եւայլն լսած աստե՛ն ասոնց նշանակութեանը եւ ինչ բանի գործածուելուն վրայ չի պիտի շուարի :

Մի քանի Գաղղիերէն բառերուն, որք վաճառականութեան մէջ ասէպ կը գործածուին, նշանակութեան համապատասխանող Հայերէն բառեր չ'ունենալունս՝ շանացիմ, կարելի եղածին չափ նշանակութիւնները բացատրելու համար, մէկ կամ երկու բառեր գործածել :

Արդարեւ մեկն այն աստե՛ն մեր աշխատութեան վարձք առած պիտի համարիմք՝ երբ ազգը իւր հանելի ընդունելութեամբը պատուէ մեր այս գուղնաճայ աշխատասիրութիւնը եւ վայելէ սորա օգուտները :

Ի մասնաւորի իմ երախտագիտական խորին եւ անկեղծ շնորհակալութիւններս խոնարհաբար մատուցանեմ Գարակէօզեան Տիգրան էֆէնտի, որ ամենայն յօժարութեամբ եւ սիրով հանեցաւ ի լոյս ընծայել սոյն գործս, որով զիս յանուանս երախտագրութեան կացոյց :

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Հին ատենը կամ մարդկային ընկերութեան մանկութեան ժամանակը առեւտուրը ուրիշ բան չ'էր, եթէ ոչ փոխանակութիւն (Երա՛բ) անհրաժեշտ պէտք եղած կամ զարդի վերաբերեալ իրերուն նմանօրինակ կամ տարասեռ նիւթոց հետ: Ժամանակէ մը վերջը պղինձը, ոսկին, արծաթը, շափիղայն եւ ադամանդները եւայլն գտնուեցան եւ այս մետաղներուն ու քարերուն որակը, փայլը եւ գեղեցկութիւնը պատճառ եղան որ փոխանակութեան նիւթ ըլլան: Վերջապէս մարդիկ հետզհետէ յառաջդիմելով ընկերութիւններ հաստատեցին եւ զանազան մեծ մարդիկ առեւտուրին կամ վաճառականութեան դիւրութիւն տալու կամ թերեւս իրենց յիշատակը անմահացնելու նպատակաւ դրամը հնարեցին եւ մետաղի կտորներուն վրայ իրենց պատկերը զարկին: Արդարեւ դրամը մեծ դիւրութիւն տուաւ առեւտուրին եւ պատճառ եղաւ որ վաճառականութիւնը աւելի եւս զարգանայ :

Սակայն մարդոց ըրած թէ փոխանակութեամբ եւ թէ դրամով ամեն առեւտուրներն ալ վստահութեան վրայ միայն հիմնուած են, առանց վստահութեան աշխարհի բոլոր առեւտուրներն մէկէն ի մէկ կը դադրին: Վստահութիւնը երկուքի կրնայ բաժնուիլ մին վայրկեանակալ իսկ միւսը ժամանակաւոր. զոր օրինակ խիտտ պարզ կերպով խօսելով եթէ մարդիկ իրարու վստահութիւն չ'ընէին՝ այն ատեն հացագործէն հաց առած ատենինս պէտք կ'ըլլար որ հացին մէկ կողմէն մենք բռնէինք եւ ստակին մէկ ծայրէն ալ հացագործը եւ առանց հացը առնելու ստակը չի տայինք կամ առանց ստակը տալու հացը չ'առնէինք: Սակայն վստահութիւնը այս անպատեհութեան առջեւ առած է. ուստի նախ հացագործէն հացը կ'առնենք եւ յետոյ ստակը կուտանք, որով ըսել կ'ըլլայ թէ հացագործը մեզի վայրկեանակալ վստահութիւն մը ըրաւ. այսպէս նաեւ նպարավաճառը, մսավաճառը եւայլն: Վայրկեանական վստահութեամբ եղած առեւտուրին կանխիկ առեւտուր կ'ըսուի. իսկ ժամանակաւոր վստահութիւնը այն է, որ հացագործէն հացը նախ կ'առնենք եւ ստակը մէկ քանի օրէն կամ ամիսէն վերջը կուտանք, որով ըսել կ'ըլլայ թէ հացագործը մեզի ժամանակաւոր վստահութեամբ ծախեց հացը, այս կերպով եղած առեւտուրին ալ կ'ըսուի ապառիկ (Աբ-բէնէ) առեւտուր :

Կանխիկ առեւտուր ընող հացագործը, որն որ մէկ կողմէն հացը կուտայ եւ միւս կողմէն ստակը կ'առնէ, երբէք զանոնք տեղ մը



Նշանակելու պէտք չ'ունի: Իսկ շատերու ապագիկ ծախող հացա-  
 գործը չէր կրնար դանոնք զատ զատ միաքը պահել: Վասն որոյ  
 տուած հացերը տեղ մը նշանակելու անհրաժեշտ պէտքն զգալով  
 փայտի կտոր մ'առաւ եւ անոր վրայ դանակով ձեղքելով նշանակեց  
 հետզհետէ ծախած հացերը, որուն Տաճկական լեզուաւ շէքէն  
 անունը կուտան. նոյնպէս նաեւ ջրկիրը (սփփ) կաւիճով կը նշա-  
 նակէ ջուր տարած տանը դրանը վրայ տուած ջրոց քանակութիւնը:  
 Այս գործիքները արհեստներուն աստիճանին համեմատ, իրենց  
 համար մէկ մէկ տետրակներ կրնան համարուիլ:

Աստեղմէ վերջը կուգայ մասվաճառն ու նպարավաճառը, աստեղ-  
 ալ իրենց ազգաբնիկ ըրած տուր եւ առը նշանակելու պէտք ունին,  
 սակայն ծախած ապրանքներնուն զատ զատ հօտան, տրամը, տե-  
 սակը, դինը եւայլն հացագործին պէս փայտի կտորի վրայ չէին  
 կրնար նշանակել, յորմէ թղթի կամ տետրակի վրայ զանոնք գրելու  
 պէտքը յառաջ եկած է:

Տրուած օրինակներէն յայտնի կ'երեւայ որ վստահութիւնը որչափ  
 ընդարձակի նոյնչափ եւս վտտահացեալ իրաց գրութեան պէտքը  
 անհրաժեշտ կ'ըլլայ: Հացագործէն սխեալ աստիճանաբար կը յա-  
 աջանայ եւ կը համի մինչեւ վաճառականը:

Վաճառականը, ըրած աւելի ընդարձակ վտտահութեամբ սլու-  
 այլ անձերու հետ տարբեր տարբեր գործեր կ'ընէ. զոր օրինակ,  
 մէկէ մը սպրանք կ'առնէ, զանոնք ուրիշի կը ծախէ, փոխարէն  
 պարտամուրհակ կուտայ կամ կ'առնէ, գանազան մարդոց հետ հա-  
 չիւններ (ընթացիկ) կ'առննայ. իւր թղթակիցներէն սպրանք ուղելու  
 կամ անոնց սպրանք գրիելու համար նամակներ կը գրէ իրենց:  
 մէկէ մը ստակ կ'առնէ կամ մէկու մը ստակ կուտայ. զանազաննե-  
 րու հետ պայմանաժամով եւ շղթ սյարսար գործեր կ'ընէ այսինքն մէկ  
 կողմանէ սպրանք կուտայ եւ միւս կողմանէ ստակ կ'առնէ, եւ  
 ասոնց նման շատ մը գործողութիւններ, զորս ամենքը մէկտեղ;  
 նպարավաճառին պէս չի կրնար միայն մէկ տեսակ տետրակի մէջ  
 գրել. կամ եթէ գրելու ալ ըլլար արդեօք մըչափ խոշոր (մանաւանդ  
 շատ գործ ընող վաճառատուներու համար) տոմար մը պէտք պիտի  
 ըլլար, որ բոլոր այդ գործողութիւնները կարենար պարունակել եւ  
 մըքան շիթթութիւններ տեղի պիտի ունենային այդպիսի հա-  
 զարու մէկ տեսակ գործողութիւններ պարունակող տետրի մը մէջ՝  
 ուր եթէ վաճառականը բան մը փնտռելու ըլլար, հազիւ թէ ամ-  
 բողջ տետրակը թղթատելով մէկ քանի ժամու մէջ պիտի կարե-  
 նար գտնել:

Սակայն կանոնաւորութիւնն եւ այս գործողութեանց արդիւնքը  
 ուղուած ժամանակին զխոնարու անհրաժեշտ պէտքը, հարկադրած  
 են վաճառականը սլուայլ տեսակ տետրակներ հնարելով անոնց

իւրաքանչիւրը մէկ մէկ ճիւղի յատկացնել, այսինքն ապրանքի առ  
 եւ ծախքը առ այս յատկացեալ տետրին մէջ, պարտամուրհակի  
 կամ տոմարի աւեւտուրը զատ տետրի մը մէջ, շատերու հետ ու-  
 նեցած հաշիւները ուրիշ տետրի մէջ այսպէս կ'ընէ նաեւ իր թղթա-  
 կիցներուն գրած նամակները եւայլն եւայլն:

Ըսել է թէ վաճառական մը, ըրած գործը թէ մեծ ըլլայ եւ թէ  
 վոքը, իւր գործողութիւնները նշանակելու համար գանազան տե-  
 րակներու կամ տոմարներու պէտք ունի, ուստի այն տոմարներուն  
 մէջ իւրաքանչիւրին իրեն յատկացեալ գործողութիւնները ինչ կեր-  
 պով գրելու համար արհեստի մը պէտքը յառաջ կուգայ, որուն  
 Տոմարակաշարիւն կամ Տոմարագիտութիւն կ'ըսուի:



Տոմարակաշարութեան ուսման վրայ խօսելէ յառաջ՝ վաճա-  
 աւականութեան վերաբերեալ նախնական զխաւրքները նոյնպէս  
 նաեւ վաճառականութեան մէջ գործածուած եւ Տոմարակաշար-  
 ութեան մէջ ստեղծ պատահելիք գանազան տեսակ թղթերուն գոր-  
 ծածութեանը եւ ձեւերուն վրայ պէտք եղած տեղեկութիւնները  
 կանխաւ տալ յարմար դատեցինք: Այս տեղեկութիւնները՝ որոց  
 ուսումը մեծ դժուարութիւն չի պահանջեր՝ մանաւանդ թէ ասոնք  
 պատանկութեան ալ գրեթէ զիւրահասականալի են՝ Տոմարակաշար-  
 ութեան սխեմէ առաջ տալով ուրիշ նպատակ չ'ունինք, բայց միայն  
 պարտատեղ ուսանողը այսինքն քիչ կամ շատ հմուտ մտցունել  
 զանի Տոմարակաշարութեան մէջ, առանց որոյ Տոմարակաշարութեան  
 կամ բուն իսկ գործի մէջ հաշուեցոյց, գնման հաշիւ, ֆոնէշիւնկը  
 հաշուընթաց եւայլն ըսուած ժամանակ համարակ պիտի շուարէր  
 անշուշտ յիշեալ բառերուն նշանակութեանը մէջ:

Ուստի կ'սկսինք այժմ վաճառականութեան նախագիտելիքը  
 եւ վաճառականութեան մէջ ընդհանրապէս գործածուած գանա-  
 զան տեսակ թղթերուն եւ նոյն ձեւերուն վրայ խօսիլ, իւրաքան-  
 չիւրին տակ զատ զատ հրահանգներ գրած ենք, զորս յարգոյ ու-  
 սուցիչք պէտք է խստիւ պահանջեն դասի ժամանակ, զատ թղթե-  
 րու վրայ ձեւերը շինել տալով, սրպէս զի ուսանողը կարող ըլլան  
 ինքնին շինել հաշուեցոյց, գնման եւ վաճառման հաշիւներ, եւայլն:

Որովհետեւ վաճառականութեան մէջ գործածուած այս թղթերը  
 ընդհանրապէս Գաղղիարէն լեզուաւ կը գրուին. ուստի մենք ալ  
 ատոնց Գաղղիարէն օրինակները եւս դնել յարմար դատեցինք  
 ի գիւրութիւն ուսանողին:



ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՏՈՄԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Հ Ա Տ ՈՒ Ա Շ Ա .

ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Օրէնքը վաճառականութեան գործողութիւն կը համարի ուտեստի եւ ուրիշ ասորանաց գնումը, գանձը վերադառնալին ինչպէս որ են, կամ գործելով ծախելուն կամ իրեն սխալելին յատկացնելուն, մանրաթուրայի, յանձնարարութեան, փոխադրութեան, մատակարարութեան, գործակատարութեան, դրամական գործոց, եւ տեսարանի շէնքի, փոխանակագրի գործողութեանց, ասորանաց փոխադրութեան եւայլն ձեռնարկութիւնները :

ԱՊՐԱՆՔ ԿԱՄ ՎԱՃԱՌՔ

Ասորանք կամ վաճառք կ'ըսուին այն իրերը՝ որք վաճառատուններու, կրպակներու, տօնավաճառներու, շուկաներու եւ հասարակաց հրապարակի վրայ կը ծախուին: Ուտտի, տունկերը, արմաթները, անասունները, մետաղները, նախնական նիւթերը, սպարատուած կամ գործուած նիւթերը, սյսինքն գինին, օգելից ըմպելիքները, կերպան, գործիքները, կարասիք եւայլն ասոնց ամենքն ալ ասորանք են :

Բայց հողագործին, սյգեարանին, դերձակին, կօշիակարին, եպենագործին, ակնագործին, փայտածախ եւ անխածախին եւ իւր շինող վաճառականին այս ասորանքները գնուլին համար ասորանք

չեն համարուիր, երբ սա առանց այս իրերէն վաճառաչաչութիւն ընելու իւր անձնական պիտոյից համար գործածէ :

Վաճառական մը պէտք է լու ճանչնայ իւր գործած ապրանքը, որպէս զի գնած ատեն կարելի եղածին չափ ածանի առնելու համար մաքառի, եւ ծախած ատենն ալ աւելի զին բռնել տալ աշխատի :

**ՏԱՐԵՐՔ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒՅԵԱՆ**

Այն իրերը, որ կը գնուին, կը վաճառուին, կը փոխանակուին կամ վարձու կ'առնուին, վաճառականական ընդունով, վաճառելի իրեր կամ արեւոյ վաճառականութեան կ'ըսուին : Արդ՝ պաշարք, ապրանք, դրամք, մետաղեայ նիւթեր, տոմսակներ, փոխանակա-գիրներ, հասարակաց թղթեր, բաժնեթղթեր, պարտամուրհակներ եւ բոլոր ընդունելի կամ վճարելի թղթերը, վաճառականական կարասիները, գրամագլուխը, նաւերը եւայլն վաճառելի իրեր ըլլա-լով հետեւաբար վաճառականութեան տարերք կ'ըսուին :

**Հ Ա Տ Ո Ւ Ս Ծ Բ .**

**Վ Ա Ճ Ա Ռ Ս Կ Ա Ն Ք**

Վաճառականութեան օրինագիրքը իւր 1<sup>րդ</sup> յօդուածովը հետեւ-եալ կերպով կը ճանչնայ վաճառականը .

« Թէ՛ճարելի է զըսու շին թէ՛ճարելի է արեւոյս ինչ ճարելի է արեւոյս ինչ ճարելի է արեւոյս ինչ ճարելի է » :

**ԴԱՍԱԿԱՐԳՈՒՅԻՒՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՅ**

Վաճառականները կը դասակարգուին ըստ իրենց ըրած գործին . եւ հետեւեալ անուններով կը զանազանին .

Գործարանատէրք եւ Տարազագործք .

Ներկարարք .

Մեծաքանակ ծախող վաճառականք (en Gros) .

Փոքրաքանակ ծախող » (en Détail) .

Յանձնառուք ապրանաց (Commissionnaires) .

Միջնորդք »

Յանձնառուք փոխադրութեան .

Սեղանաւորք .

Միջնորդք փոխանակագրի .

Չեռնարկուք (Entrepreneurs) .

Յարգարիչք նաու (Armateurs) .

Սւանդաարհք (Consignataires) .

**ԳՈՐԾԱՐԱՆԱՊԵՏՔ ԵՒ ՏԱՐԱՋԱԳՈՐԾՔ**

Գործարանատէրք եւ տարազագործք նախնական նիւթեր կը գործածեն, զորս գործելով կ'արտադրեն կերպաս, կարասիք, գործիք եւայլն, եւ զանոնք կը յանձնեն վաճառականին եւ սղա-նողներուն :

**Ն Ե Ր Կ Ա Ր Ա Ր Ք**

Ներկարարը՝ նախնական եւ հիւսուած նիւթերուն, կերպասնե-րուն, մորթերուն իրենց նախնական գոյնին տարբեր գոյն մը կուտայ, որով այդ նիւթերը աւելի յարմար կ'ըլլան գործածու-թեան եւ շահու մասին :

**ՄԵԾԱՔԱՆԱԿ ԾԱԽՈՂ ՎԱՃԱՌԱԿԱՆՔ**

Մեծաքանակ ծախող վաճառականը՝ գործարանատէրին եւ փոք-րաքանակ ծախող վաճառականին մէջ միջնորդ մ'է : Ապրանքները ինքը մեծաքանակ կը գնէ եւ զանոնք մաս առ մաս կը ծախէ : այսինքն տակառով հակով եւայլն :

**ՓՈՔՐԱՔԱՆԱԿ ԾԱԽՈՂ ՎԱՃԱՌԱԿԱՆՔ**

Փոքրաքանակ ծախող վաճառականը այն է, որ մեծաքանակ ծա-խող վաճառականէն գնած ապրանքները քիչ քիչ կը ծախէ սղա-նողներուն :

**ՅԱՆՁՆԱՌՈՒՔ ԱՊՐԱՆԱՅ**

Յանձնառուք ապրանաց կ'ըսուին ամեն անոնք, որ ուրիշներու հաշուոյն ապրանք կ'առնեն եւ կը ծախեն, իրենց համար վարձք մը առնելով՝ որուն կ'ըսուի յանձնարարական կամ յանձնարարողչէք :

**ՄԻՋՆՈՐԴՔ ԱՊՐԱՆԱՅ**

Այս կարգ անձինքն ալ կ'ըրաղին, վաճառականաց ապրանքները զանազան մարդոց ծախելու, որուն փոխարին ստացած վարձքերն ուն ալ կ'ըսուի միջնորդչէք կամ միջնորդութիւն :

**ՅԱՆՁՆԱՌՈՒՔ ՓՈԽԱԴՐՈՒՅԵԱՆ**

Կան դաս մը անձինքն ալ՝ որք յանձն կ'առնեն փոխադրել ծովով կամ ցամաքէն զանազան ապրանք եւ կարասիք : Վաճառականները իրենց հակերը այս մարդոց կը զրկեն, որք շոգեկառք կամ շոգե-նաւը կը բեռնեն :

Ս Ե Ղ Ա Ն Ա Ի Ո Ր Ք

Ինչպէս որ վաճառականը ապրանքներու, նոյնպէս ալ սեղանաւորը զանազան տեսակ վաճառականական թղթերու եւ տէրութեանց արժէթղթերու վրայ գործեր կ'ընէ. պահեստի համար արժէթղթեր կ'ընդունի. ուրիշներու հաշուոյն ստակ կը վճարէ կամ կը գանձէ. իւր թղթակիցներուն փոխանակագիրները կ'ընդունի. եւ անոնց վրայ կը քաշէ. ուրիշներու հաշուոյն համար հրատարակէն (Bourse) տէրութեան արժէթղթեր (Consolides, Bon du Trésor) ընկերութեան բաժնետոմսներ, (Chemins de fer) եւ այլն ծախու կ'առնէ. վերջապէս օտար արժէթղթոց վրայ առեւտուր կ'ընէ եւ փոխանակութեան գործերով կ'զբաղի:

ՄԻՋՆՈՐԴՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐԻ

Փոխանակագրի միջնորդներն ալ կ'զբաղին փոխանակագրաց առ եւ ծախքով, տէրութեանց արժէթղթեր, ընկերութեանց բաժնետոմսեր եւս ծախելու ու գնելու ուրիշի համար. որոց փոխարէն իրենց արուած վարձքին կ'ըսուի միջնորդութիւն կամ միջնորդչէք:

Ջ Ե Ռ Ն Ա Ր Կ Ո Ւ Ք

Շէնքի, թատրոնի, հասարակաց կառքերու շինութեամբ, գործակատարութեամբ եւ մատակարարութեամբ զբաղողներուն ձեռնարկուք կ'ըսուին:

Յ Ա Ր Դ Ա Ր Ի Ջ Ք Ն Ա Ի Ո Ւ

Վաճառաչափելու կամ հեռաւոր տեղ մը զրկելու համար նաւը յարգարողին, յարգարիչ նաւու կ'ըսուի: Եթէ սա նաւուն տէրը ըլլայ այն ատեն տէր — յարգարիչ նաւու կ'ըսուի:

Ա Ի Ա Ն Դ Ա Պ Ա Շ Ք

Աւանդապահ կ'ըսուին անոնք, որոց ապրանքներ կը զրկուին, որ ուրիշի մը հաշուոյն ծախէ. կամ ուրիշ որ եւ է կերպով անոնց տէր ըլլայ:

Հ Ա Տ Ո Ւ Ա Ծ Գ .

ՍՈՎՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ ՎՍՃԱՌՍԿԱՆՈՒԹԵԱՆ

Սովորաբար վաճառականութեան գործողութիւնները հետեւեալներն են:

- Գնումն (Achat).
- Վաճառումն (Vente).
- Փոխանակութիւն (Echange).
- Վճարումն (Paiement).
- Գանձումն (Encaissement)
- Կարգադրութիւն հաշուոյ (Réglement)
- Ջեղչումն վաճառականական թղթոց (Escompte d'effets de commerce).
- Վաճառումն վաճառականական թղթոց (Négociation d'effets de commerce).
- Բացումն վարկի (Ouverture de crédit).
- Փոխանցումն հաշուոյ (հէվէ) (Virement).
- Նորոգումն (Renouvellement).
- Գնումն եւ վաճառումն ի հաշիւ (Achat et vente pour compte).
- » » յանձնարարականաւ (Achat et vente en commission)
- » » ընկերութեամբ կամ բաժնիւ (Achat et vente en participation) եւ այլն.

16-1562

Գ Ն Ո Ւ Մ Ն

Գնումն ըսելով կը հասկըցուի, վաճառականական լեզուաւ, այն գործողութիւնը՝ որով մէկը ապրանք կամ վաճառելի իր մը որոշեալ գնով ծախու կ'առնէ որոշեալ պայմանաժամի մէջ վճարելի: Գնումը կրնայ ըլլալ կանխիկ կամ ապառիկ. կանխիկ գնումն ըսելով պէտք է հասկընալ այն գնումը, որուն արժէքը գրածով վճարելի է հաշուեցուցակին ներկայացման ատեն կամ քիչ օրուան մէջ: Ապառիկ գնումն կ'ըսեն անոնց, որոց փոխարէնը 30, 45, 61, 91, 121 եւ այլն օրէն կը վճարուին: Պօլսոյ մէջ շատ քիչ առեւտուր կայ որ կանխիկ ըլլայ. մեծագոյն մասը կը կարգադրուի զնոյններուն տոմակներովը, կամ ուրիշ վաճառականական թղթերով:

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ւ Մ Ն

Վաճառումը կը նշանակէ, որոշեալ գնով եւ որոշեալ պայմանաժամի մէջ վճարելի ապրանք կամ վաճառելի իրերն ուրիշին տալը: Ինչպէս գնումը, նոյնպէս վաճառումը կրնայ կանխիկ կամ ապառիկ ըլլալ. Ուրիշ կերպիւ ըսելով՝ վաճառումը գնման հակառակ գործողութիւնն է:



Փ Ո Ւ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ապրանքներ, վաճառականական թղթեր, կամ բաց ի դրամէն, ուրիշ վաճառելի իրեր տալով, փոխարէն նոյնչափ արժէքով նոյն տեսակ ուրիշ իրեր առնելու գործողութեանը կ'ըսուի փոխանակարարիւն : Թէեւ բոլոր դնում ու վաճառում փոխանակութիւն են, սակայն սովորութիւն եղած է, վաճառականութեան մէջ, փոխանակութիւն ըսել, միայն այն գործողութեանց, որոց կարգադրութիւնը առանց ստակի կ'ըլլայ. այսինքն երբ իրեր իրերու հետ կը փոխանակուին :

Վ Ճ Ա Ր Ո Ւ Մ Ն

Հաշուեցուցի, տոմսակի, փոխանակազրի կամ ուրիշ գրաւոր կամ բերանացի խոստման մը փոխարէնը դրամով կարգադրելու գործողութեանը կ'ըսուի վճարումն :

Գ Ա Ն Զ Ո Ւ Մ Ն

Հաշուեցուցի, տոմսակի, փոխանակազրի կամ նախապէս գրաւոր կամ բերանացի եղած խոստման մը փոխարէն ւսակ առնելու գործողութեանը կ'ըսուի գանձումն :

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ՆԱԾՈՒՈՅ

Կարգադրութիւն հաշուոյ ըսելով կ'իմացուի այն վճարումը, յորում առանց ամբողջ ստակ տալու, վաճառականական թղթեր, սպրանք, դրամ, հաշուոյ փոխանակութիւն, վարկ, զեղչ եւայլն ընելով կը կարգադրուի :

Օրինակի համար մէկէ մը 200 լիրայի սպրանք կ'առնենք եւ փոխարէն կուտանք 50 լիրա, 50 լիրայի տոմսակ մը մեր ստորագրութեամբ, 40 լիրայի փոխանակազրի մը եւ մէկէ մը ունեցած 80 լիրայի առնելիքնիս փոխանցելով :

ՋԵՂՉՈՒՄՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԹՂԹՈՑ

Վաճառականական թղթոց զեղչումն ըսելով կը հասկընանք այն գործողութիւնը, որ ստակով կը գնենք փոխանակազրեր, այսինքն զանոնք իրենց անուանական արժէքովը կ'առնենք եւ իրական արժէքը կանխիկ կը վճարենք: Պէտք է գիտնալ թէ որչեալ պայմանաժամի մը մէջ վճարելի թղթերը երկու տեսակ արժէք ունին. անուանական եւ իրական անուամբ. ըսածնիս օրինակով մը բացատրենք. 5/ ամիսէն 500 Անգլիական լիրա արժէք ունեցող փոխանա-

կազրի մը անուանական արժէքն է 500, իսկ իրական արժէքն է, այս դումարէն 5/ ամսուան % այսչափէն (օրուան գնով) տոկոսը զեղչելով մնացորդ դումարը :

Այս ըսածնիս որոշեալ պայմանաժամի մը մէջ վճարելի թղթերուն համար էր. նոյնպէս ալ տարբեր հրապարակի թղթերուն համար հասկընալու է. ինչու որ տարբեր հրապարակի թուղթ մը երբ ուզենք մեր հրապարակին վրայ ծախել, առանց փոխարէն բան մը տալու չ'ենք կրնար ծախել. ուստի այս սրուած ստակին ալ կ'ըսուի փոխանակութիւն հրապարակի (change de place):

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ԹՂԹՈՑ

Տոմսակներ, փոխանակազրեր, իրենց անուանական արժէքովը տալով իրական արժէքին չափ ստակ առնելով ծախելու գործողութեանը կ'ըսուի վաճառումն վաճառականական քրոյց :

Եթէ այս սահմանը, վաճառականական թղթոց զեղչման սահմանին հետ բաղդատելու ըլլանք՝ պիտի տեսնանք որ զեղչման հակառակ գործողութիւնն է այս :

ԲԱՅՈՒՄՆ ՎԱՐԿԻ

Վարկ բանալը տեսակ մը գրաւոր եւ ստորագրեալ հրաման մ'է երրորդի մը տրուած, որ սա՛ որչեալ դումար մը վճարէ ուրիշի մը: Այս հրամանը նամակով մը կ'ըլլայ, որուն կ'ըսուի վարկադիր կամ վարկաւանակ :

Ընդհանրապէս սեղանաւորները վարկ կը բանան եւ կուտան զանոնք այն ճանապարհորդներուն, որք չ'են ուզեր հետերնին կրել իրենց պէտք ըլլալիք ստակը :

Ենթադրենք թէ մէկը Լոնտրա պիտի երթայ կամ ուրիշ անդ մը. եւ իրեն չի յարմարիր որ պէտք եղած ստակը հետը առնու. ուստի այդ ստակը իւր քաղաքին սեղանաւորներէն մէկուն կուտայ, եւ փոխարէն կ'ուզէ այնպիսի գիր մը, որով կարող ըլլայ իր երթալիք քաղաքներուն մէջ այդ սեղանաւորին թղթակիցներէն ստանալ նախապէս յանձնած դումարը, ամբողջ կամ մաս առ մաս :

ՓՈՒՍԱՆՑՈՒՄՆ ՆԱԾՈՒՈՅ

Փոխանցումն հաշուոյ կամ առնելիքի կ'ըսուի այն գործողութեան զոր պարտական մը իւր պահանջատէրին կ'ընէ, այսինքն, ուրիշ մը ունեցած առնելիքը կամ հաշիւը յիշեալին փոխանցելով: Այս տեսակ գործողութիւններն աւելի տօնավաճառներու մէջ անզի կ'ու-

եննան: Գնողներն այս միջոցը աւելի լաւ կը համարին քան թէ հետերնին ստակ բերել:

Վաճառականութեան մէջ այս գործողութիւնը շատ կը պատահի, որ կ'ըլլայ խօսքով, նամակով կամ ուրիշ գրաւոր կերպով:

**ԿՐԿՆՈՒՅԻՒՆ ԿԱՄ ՆՈՐՈԳՈՒՄՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՅՂՅՈՑ**

Երբ վաճառականական թուղթ մը օրին վճարուած չ'ըլլայ կամ պիտի չի վճարուի, այն ատեն ուրիշ մը կը շինուի. այս գործողութեանը կ'ըսուի կրկնորթիւն կամ նորոգումն վաճառականական քրոց:

**ԳՆՈՒՄՆ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՄՆ Ի ՀԱՇՒԻ**

Երբ մէկը առանց յանձնառու ըլլալու ուրիշի մը համար ապրանք կամ վաճառք գնէ եւ ծախէ, առանց յանձնարարական մ'առնելու, այն ատեն այս տեսակ գործողութեան կ'ըսուի գնումն եւ վաճառումն ի հաշիւ:

**ԳՆՈՒՄՆ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՄՆ ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԱԻ**

Վաճառականներն եւ շահագէտներն՝ երբ ապրանքի միջնորդներու միջոցաւ գնումն ու վաճառումն ընեն՝ կ'ըսուի գնումն եւ վաճառումն յանձնարարականաւ: Այս գործողութեան համար եղած գումարին վրայ յանձնարարական մը կը տրուի:

**ԳՆՈՒՄՆ ԵՒ ՎԱՃԱՌՈՒՄՆ ԸՆԿԵՐՈՒՅԵԱՄԲ**

Մէկ քանի որոշեալ գործողութեան համար մի քանի շահագէտներ ընկերանալով  $\frac{1}{2}$ ,  $\frac{1}{3}$ ,  $\frac{1}{4}$  ի եւայլն հաշուով ըրած գործողութիւններնուն կ'ըսուի գնումն ու վաճառումն ընկերութեամբ (en participation):

**Հ Ա Տ Ո Ւ Մ Ծ Դ .**

**Փ Ո Ւ Մ Դ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ա Պ Ր Ս Ն Ա Ց**

Ապրանաց փոխադրութիւնը ծովով կամ ցամաքով կ'ըլլայ: Յամաքի փոխադրութեան միջոցներն են, կառք, երկաթուղի, հանրահաղթեր, ջորի եւայլն. ծովի փոխադրութեան միջոցներն են, շոգենաւք, լաստք, նաւեր եւայլն:

**Պ Ա Ս Ա Տ ՈՒ Մ Ն**

Ապրանք մը տեղէ տեղ փոխադրուած ատեն չի վնասուելու համար՝ ապրանաց տեսակին, արժէքին եւ երթալէք տեղոյն համեմատ այլեւայլ եղանակներով կը պատասպարուին. զարօրինակ, տակառով, սնտուկով, պարկով, մորթով, մոմազօծ կտաւով եւայլն, որուն ընդհանրապէս պատասխան (emballage) կ'ըսուի:

**ՋՈՒՏ ԵՒ ԱՆՋՈՒՏ ԿՇԻՌ**

Ապրանքի մը զուտ կշիւը միայն ապրանքին կշիւն է, պարունակող հակին կշիւը զեղջեղէն վերջը. իսկ անզուտ կշիւ ըսելով՝ կը հասկըցուի պարունակող իրին կշիւն ալ մէկտեղ:

**Տ Ա Ր Ա**

Ապրանքը պարունակող իրին կշիւն կ'ըսուի ՏԱՐԱ. այս կշիւը կը զեղջուի երբ ապրանքի մը զուտ կշիւը հասկնալ ուզուի:

**Մ Ա Ք Ս Ա Տ Ո Ւ Ն**

Կառավարութեան մէկ հաստատութիւնը, ուր երկիրը մտած եւ ելած ապրանաց վրայ տուրք մը կ'առնուի որոշեալ գիններով:

**Մ Ա Ք Ս Ա Տ ՈՒ Ք (Droit de douane)**

Օտար երկիրներէ եկած ապրանաց վրայ մաքսատան տրուած տուրքին կ'ըսուի մաքսատուրք:

**Հ Ա Տ Ո Ւ Մ Ծ Ե .**

**Վ Ա Ր Չ Ք Ա Շ Ի Ս Տ Ո Ւ Թ Ե Ս Ն Ե Ի Ջ Ե Ղ Չ**

(Rétribution et Réduction)

Վաճառականութեան մէջ ընդհանրապէս վարձք աշխատութեան եւ զեղջ ըսելով կը հասկըցուի հետեւեալները .

- Յանձնարարական (Commission).
- Երաշխագին (Ducroire).
- Միջնորդչէք (Courtage).
- Ջեղջ վաճառականութեան (Escompte).
- Տոկոս (Intérêt).
- Տարբերութիւն փոխանակադրի (Change de place).
- Ջեղջ զրամական կամ գրամազեղջ (Escompte de la banque).

Յ Ա Ն Ձ Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն

Յանձնարարականը տեսակ մը վարձք է աշխատութեան, զոր գնողները կամ ծախողները կուտան ապրանքի յանձնառուներուն: Յանձնարարականը ընդհանրապէս առնուած եւ ծախուած ապրանքաց գումարին վրայ այսչափ օ/օ կամ հակ, սնտուկ գլուխ կը վճարուի: Ապրանքի յանձնարարականը մինչեւ 5 օ/օ կ'ըլլայ. խի գրամական յանձնարարականը 1/8 կամ 1/2 օ/օ:

Ե Ր Ա Շ Խ Ա Գ Ի Ն

Երբ յանձնառու մը իւր յանձնարարին հաշուոյն ըրած ապառիկ վաճառումներուն պատասխանատուութիւնը վրան առնէ, այն առեւ իւր յանձնարարէն ուրիշ գումար մ'ալ կ'առնէ այսչափ օ/օ, ըստ իրենց որոշման, որուն կ'ըսուի երաշխագին:

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Զ Է Ք

Վաճառականութեան միջնորդէքը տեսակ մը վարձատրութիւն է միջնորդներուն, զորս վաճառականը կը գործածեն իրենց ապրանքաց վաճառմանը կամ ապրանք առնելու համար: Միջնորդէքը որոշեալ գին մը չ'ունենալուն, ըստ տեղւոյն կրնայ փոխուիլ, 1/2, 1, 2, 5 օ/օ կրնայ ըլլալ:

Ջ Ե Ղ Զ Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ո Ւ Յ Ե Ա Ն

Վաճառականութեան մէջ զեղչ կ'ըսուի, հաշուեցուցի մը գումարէն օ/օ այսչափի նուազումը: Պայմանաժամով ծախուած ապրանքաց զեղչը, երբ կանխիկ վճարուին, 1 1/2 ց 6 օ/օ կրնայ ըլլալ: Կան ապրանքներ ալ որոց զեղչը աւելի շատ է:

Տ Ո Կ Ո Ս

Փոխ տրուած ստակի գործածութեանը համար կամ մէկէ մը ունեցած առնելիքներնուս վրայ այսչափ օ/օ վարձք մը կ'առնուի, որուն կ'ըսուի տոկոս:

Տոկոսին գինը, ըստ ժամանակին կրնայ աւելնալ կամ պակսիլ:

Տ Ա Ր Բ Ե Ր Ո Ւ Յ Ի Ն Փ Ո Ւ Ն Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ի

Տարբերութիւն փոխանակագրի ըսուածը տեսակ մը զեղչ է, զոր սեղանաւորները վար կը գնեն կանխաւ, իրենց բնական քաղաքէն տարբեր երկրի մը մէջ վճարելի փոխանակագրոց վրայ:

Այս տարբերութեան պատճառը ուրիշ բան չ'է եթէ ոչ այդ փոխանակագրին գանձուելուն համար ըլլալիք ծախքերը, զոր օրինակ

թղթատարի ծախք, յանձնարարական եւայլն զոր պիտի վճարէ սեղանաւորը իւր թղթակցին: Փոխանակագրի տարբերութեան գինը 1/8, 3/8, 1/2 կամ 1 օ/օ կ'ըլլայ ըստ տեղւոյն. կամ աւելի, եթէ ստակը գանձելու համար դժուարութիւնները շատ ըլլան:

Դ Ր Ա Մ Ա Զ Ե Ղ Զ

Դրամական գործողութեանց մէջ զեղչ ըսելով կ'իմացուի, տոկոս, յանձնարարական, տարբերութիւն փոխանակագրի, եւայլն:

Գ Լ Ո Ւ Խ Բ .

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ո Ւ Յ Ա Մ Ն Ս Կ Ս Ն Թ Ղ Թ Ե Ր Ո Ւ Չ Ե Ի Ե Ր

Վաճառականութեան հրատարակին վրայ շրջաբերող թղթերուն գործածականներն ու գլխաւորներն հետեւեալներն են .

- 1°. Հաշուեցոյց (Facture).
- 2°. Հաշիւ գնման (Compte d'achat).
- 3°. Հաշիւ վաճառման (Compte de vente).
- 4°. Բեռնագիր (Lettre de voiture).
- 5°. Բեռնագիր նաւու (Connaissement).
- 6°. Ստացագիր եւ ընկալագիր (Acquit et reçu).
- 7°. Տոմսակ կամ սօնօ (Billet à l'ordre) ou (bon).
- 8°. Փոխանակագիր (Lettre de change).
- 9°. Հրամանագիր (Mandat).
- 10°. Վարկագիր (Lettre de crédit).
- 11°. Ընթացիկ հաշիւ կամ հաշուընթաց (Compte courant).

Հ Ա Շ Ո Ւ Ե Յ Ո Յ Յ

Ընդհանրապէս թէ կանխիկ եւ թէ ապառիկ եղած գործողութեան համար վաճառականը՝ ծախած ապրանքին կարեւոր մանրամասնութիւնները, այսինքն՝ հօխան, տրամը, գինը եւայլն պարունակող թուղթ մը կուտայ ապրանքը գնողին, որուն Հաշուեցոյց անունը կուտան: Օրինակի համար զիցուք թէ մարտ 2ին Պօղոս Գաբրիէլեանէն 2 պալեա պատմա գնեցինք փոխարկնը 5 ամիս վերջը վճարելու պայմանաւ: Վերոյդրեալ 2 պալեաներուն զատ զատ քանի մէթրօ ըլլալը, գինը, որչափ զրուչ արժեքը եւայլն գիտնալու համար, Պօղոս մեզի տուաւ հետեւեալ հաշուեցոյցը:

(թիւ 1)

Կ. Պոլիս, 2 Մարտ, 1876.

Պարսի Յակոբ Գրիգորեան Կարնեցի առ Պոլոս Գաբրիելեան, Դրեն ծախումս եւ յանձնումս հետեւեալ ապրանք համար, վճարելի 5/ ամիս վերջը :

Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է
B. K.						
№ 105	Մէկ պալեա 5/4, պամա	200	6010	5	18050	—
» 106	Մէկ » տամբո » ալ	100	5004	5 1/2	10514	—
					28544	—

FACTURE

Conspie, le 2 Mars, 1876.

Doit Monsieur J. Kirkorian d'Erzeroum à Monsieur Bogos Kabi-rielian, à lui vendu et livré les marchandises suivantes, payable à 5/ mois de date.

B. K.		Pièces	Mètres	Prix	Piastres	
№ 105	Une balle Indiennes 5/c.	200	6010	5	18050	—
» 106	» » » damasco	100	5004	5 1/2	10514	—
					28544	—

Թիւ 1 հաշուեցուցին սիւներուն բացատրութիւնը

Ա. սիւնին մէջ եղած B. K. գրեքը պալեաներուն նշանը կամ մարքան է, որն որ ամէն ապրանքի պալեաներուն կամ տակառներուն վրայ կը գրուի ուրիշներու ապրանքին հետ չի խառնուելու համար, նոյնպէս նաեւ 105 եւ 106 պալեաներուն թիւերն են :

Բ. սիւնին մէջ կը գրուի ապրանքին տեսակը. 5/4 (որ կը նշանակէ 5 գոյն) :

Գ. սիւնին մէջ կը գրուի ապրանքին որքանութիւնը :  
 Դ. սիւնին մէջ կը գրուի ապրանքին մէթրոն կամ կշիւրը :  
 Ե. սիւնին մէջ կը գրուի ապրանքին գինը :  
 Զ. սիւնին մէջ կը գրուի ապրանքին գումարը, զրուշ :  
 Է. սիւնին մէջ կը գրուի ապրանքին գումարին կատարակը այսինքն վարա :

ՀԱՇՈՒԵՑՈՒՅԻ ՈՒՐԻՇ ՕՐԻՆԱԿ ՄԸ

(թիւ 2)

Հաշուեցոյց զանազան ապրանք վաճառեալ եւ յանձնեալ առ Պ. Արշակ Պետրեան Տրապիզունցի		Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ
		Կ. Պոլիս, 10 Մարտ, 1876					
S. D.	Հինգ պարկ ընտիր աճառ						
№ 8-12	№ 8— 78 հօխ.						
	» 9— 82 »						
	» 10— 75 »						
	» 11— 79 »						
	» 12— 76 »						
	Անգուա 590 հօխ.						
	Տարա 5 % 12 »						
	Զուա 578 հօխ. գին 4 դշ.	1512	—				
	Զեղէ 5 %	75	20			1456	20
G. M.	Չորս տակառ շաքար						
№ 108	№ 108— 58 հօխ.						
» 114	» 114— 62 »						
» 101	» 101— 56 »						
» 116	» 116— 54 »						
	Անգուա 250 հօխ.						
	Տարա 5 % 11 1/2 »						
	218 1/3 հօխ. գին 4 1/2	985	10				
	Զեղէ 5 %	29	50			955	20
	Կանխիկ վճարեալ					2590	—



Թիւ 2 հաշուեցուցի սիւներուն բացատրութիւնը

Ա. սիւնին մէջ եղած S. D. եւ G. M. գրերը պարկերուն եւ տակաւներուն մարքան, իսկ 8—12 եւ 108, 101, 114, 116 թուանշաններն ալ պարկերուն թիւերն են :

Բ. սիւնին մէջ կը գրուի ապրանաց տեսակը :

Գարձեալ նոյն սիւնին մէջ եղած թիւերուն կրկնութիւնը՝ կը ցուցնէ իւրաքանչիւր տակաւին կամ պարկին զատ զատ թիւերն իրենց կշռովն :

FACTURE

Facture pour les marchandises suivantes vendues et livrées à Monsieur Archag Bedrossian de Trébizonde			
Conspie, le 10 Mars, 1876			
S. D. № 8-12	Cinq sacs savon première qualité		
	№ 8— 78 ocs.		
	» 9— 82 »		
	» 10— 75 »		
	» 11— 79 »		
	» 12— 76 »		
	Brut	590 ocs.	
	Tare 5 %	12 »	
	Net	578 ocs. prix 4 p <sup>r</sup>	1512 —
	Escompte 5 %		75 20 1456 20
G. M. № 108 » 114 » 101 » 116	Quatre caisses de sucre		
	№ 108— 58 ocs.		
	» 114— 62 »		
	» 101— 56 »		
	» 116— 54 »		
		Brut	250 ocs.
	Tare 5 %	11 1/2 »	
		248 1/2 ocs. prix 4 1/2 p <sup>r</sup>	985 10
	Escompte 5 %		29 50 955 20
	Payée comptant		2590 —

Անգոս բսելով կը հասկընանք ապրանաց կշիւր պարկերուն եւ տակաւներուն ծանրութիւնը չի զեղչուած :

Տարա. Ընդհանրապէս սովորութիւն եղած է ապրանքին անզուտ գումարէն զեղչել նոյն ապրանքը պարունակող նիւթոց կշիւր, որուն կ'ըսուի տարա :

Ձուս. Տարան առնելէն ետքը մնացած գումարը կ'ըլլայ, ապրանաց զուտ կշիւրը :

Ձեղջ. Ապրանքի մը գումարէն այսչափ % պակսեցնելուն կ'ըսուի զեղչ (ըսկոնթո) : Աւելի աղէկ հասկընալու համար, վաճառականութեան մէջ սովորութիւն եղած է ընդհանրապէս, որ գնողը եթէ առած ապրանաց փոխարէնը որոշեալ պայմանաժամէն առաջ վճարէ, այն առնն գումարին ամեն մէկ 100 դրուչին վրայ այսչափ դրուչ կը պակսեցնէ, այն պակսեցուցած գումարին կ'ըսուի զեղչ :

Գ. սիւնին մէջ կը գրուի ապրանքին գումարը առանց զեղչի :

Ե. սիւնին մէջ կը գրուի որոշեալ զեղչը ընելէն վերջը զուտ գումարը :

Դ. եւ Զ. սիւներուն մէջ կը գրուի գումարներուն կտտրակները, փարա, սանթիմ եւայլն :

ՅԱՆՕԹՈՒԹԻՒՆ. — Կրնայինք հաշուեցուցի ուրիշ մէկ քանի օրինակներ ալ դնել հոս, բայց ինչպէս որ արուած օրինակներէն յայտնի է, գրեթէ սոցա ձեւերուն կամ շարադրութեանը մէջ դժուարութիւն չ'կայ, ասկէ զատ վաճառականին բանած ապրանքին տեսակին համեմատ հաշուեցուցերուն ձեւերը քիչ կամ շատ փոփոխութիւն կը կրեն :

Z I R U Z U S Գ Ք

1°. Պետրոս Մինասեանի ծախուած 5 հակ բուրդ. մարքա Տ. Ն. թիւ 1—5: 1—5ին մէջ 60ական եւ 4—5ին մէջ 58ական հոխայ կայ. 8 % տարա եւ 5 % ալ զեղչ պիտի ըլլայ կանխիկ տուոն համար. հոխային գինն է 15 դրուչ :

2°. Տիգրան Թորոսեանի ծախուած 2 հակ ճերմակ մատամբուլ մարքա Ս. Է. թիւ 122, 126. իւրաքանչիւրին մէջ 100ական ծրար. գին ծրարին 85 դրուչ. ստակը կանխիկ տուած ըլլալուն 5 % զեղչ պիտի ըլլայ :

Հ Ա Շ Ի Ի Գ Ն Մ Ա Ն

Գնման եւ վաճառման հաշուց ձեւերը գրեթէ հաշուեցուցի մը ձեւին նման, միայն թէ պատճառները տարբեր են :

Գնման հաշիւը՝ երրորդի մը հաշուոյն, ըստ իւր յանձնարարութեան

(օրհնոյին) եղած գնումը հաստատելու կը գործածուի : Օրինակի համար .

Այսօր կարենցի Գրիգոր Մըսրբեանէն նամակ առինք, որով մեզի կը հրամայէ որ իրեն հաշուոյն համար 10 հակ զանազան տեսակ պատմա դնէք եւ զրիկէնք իրեն : Գնեցինք յիշեալ պատմաներն եւ ճանբու գրինք. ուստի պէտք է գնման հաշիւը իրեն զրիկէնք, սրպէսզի ինքը զխոնայ իր մեզի առած յանձնարարութեան (օրհնոյին) ուզածին պէս գործադրուած ըլլալը եւ միանգամայն մեզ ունեցած պարտքին որքանութիւնը :

Ահաւաստի վերոյգրեալ գործողութեան համար Գրիգոր Մըսրբեանին զրիկած գնեան հաշիւնու օրինակը :

Կ. Պոլիս, 17 մարտ 1876.

Հաշիւ գնման 10 հակ պատմայի, զոր գնեց Պօղոս Յակոբեան, Կարենցի Գրիգոր աղա Մըսրբեանի հաշուոյն եւ հրամանին եւ բեռնաւորեց այսօր իւր հասցէին ի Տրապիզոն Գաղղիական շոգեւառով :

K. M.					
№ 1	55	էլվան պատմա	1000	2 1/2	2500
» 2	25	6/4. պատմա խաս	900	5 1/2	5150
» 3	25	Աստարցու մատամբուլ գունաւոր	800	2	1600
» 4	55	Ալ պատմա	1050	5	5150
» 5	55	» » եօլլու	1045	5 1/8	5265
» 6	55	Ալ տամասքօ պատմա	1055	5 1/2	5692
» 7	50	Պատմա պաքամ	905	2	1810
» 8	50	Ճերմակ պատմա	900	2 1/2	2250
» 9	25	Ալ պատմա ծանր	995	5	4975
» 10	55	» » սանթրանճ	1040	5 1/8	5250
	510				29645
<b>Այլեւայլ ծախք</b>					
		Հակաց պատտօտին հմր 20 հտ. առ 50	600	—	—
		» չուլ եւ մուշամսրան » 25	250	—	—
		Նաւողչեայ տասն հակաց » 20	200	—	—
		Բեռնակրութիւն » » 5	50	—	—
		Մանր ծախքեր	27	—	—
		Իմ յանձնարարական 2 % . 29645/ի	595	—	1720
					51565

Գնման հաշուոյ սիւներուն բացատրութիւնը

Ա. Գնման հաշուոյն այս սիւնին մէջ կը գրուի հակերուն մարքան K. M. եւ թիւերը 1—10, որք, ինչպէս հաշուեցուցին մէջ ըսինք, հակերուն վրայ կը գրուին խոշոր գրերով որպէս զի ուրիշ հակաց հետ չի շխտուի :

Բ. սիւնը յատկացեալ է իւրաքանչիւր հակին մէջ քանի ծրար (թօր) գտնուիլը յայտնելու համար :

Գ. սիւնին մէջ կը նշանակուի իւրաքանչիւր տպրանոց տեսակը :

Դ. սիւնին մէջ կը գրուի իւրաքանչիւր հակին մէթրօներուն գումարը :

Constantinople, le 17 Mars 1876.

Compte d'achat à 10 colis de manufactures achetés d'ordre et pour compte de Monsieur K. Misserian, d'Erzeroum, par Bogos Agopian, et chargés aujourd'hui à son adresse sur le bateau Français à Trébizonde.

K. M.			Mètres	Prix	Piastres
№ 1	55	Indiennes Elvan	1000	2 1/2	2500
» 2	25	» 6/ couleurs	900	5 1/2	5150
» 3	25	Madampolam colorés	800	2	1600
» 4	55	Indiennes rouges	1050	5	5150
» 5	55	» »	1045	5 1/8	5265
» 6	55	» » damasco	1055	5 1/2	5692
» 7	50	» » falso	905	2	1810
» 8	50	» blanches	900	2 1/2	2250
» 9	25	» rouges première qualité	995	5	4975
» 10	55	» » carrés	1040	5 1/8	5250
	510				29645
<b>Frais</b>					
		Vingt pièces L. Cloth	à 50	600	—
		Emballage	» 25	250	—
		Nolis	» 20	200	—
		Chargement et autre		77	—
		Commission 2 %		595	—
					1720
					51565

- Ե. սիւնը կը ցուցնէ ամեն մէկ ասորանքին զատ զատ գինը :
- Զ. սիւնը յատկացեալ է ասորանաց մէթրօներուն՝ իրենց գնովը բազմապատկութենէն յառաջ եկած գումարները գրելու :
- Է. սիւնը կը պարունակէ յիշեալ գումարներուն կատարակները :

Այլեւայլ ծախուց մանրամասնութեանցը վրայ

Հոս արժան կը համարիմք ուսանողին քիչ շատ գաղափար տալ գնման հաշուոյն մէջ նշանակեալ ծախուց բաւերուն վրայ՝ որոց առաջին անգամ կը հանդիպինք՝ պէտք եղած տեղեկութիւնները գնելով :

Պասսս (սահման) կը նշանակէ յիշեալ հակերուն մէջ գրուած պատմաները պատելու նիւթ մը: Ընդհանրապէս սովորութիւն եղած է, որ մանիֆաթ ուրա ասորանքները՝ հակ կապելու համար վար տեսակ ամէրիքանով կը պատատեն, երկու կամ աւելի ծրարով, ըստ մեծութեան հակին կամ ըստ տեսակին ասորանաց, որպէսզի ասորանքը թրջելու վտանգէն քիչ շատ ազատ ըլլայ :

Չույ եւ մուշանկա. Հակ կապելու համար ասոնք եւս անհրաժեշտ են, որք պատտաներուն վրայէն կը գրուին, որպէսզի թրջելու վտանգէն ազահով ըլլայ :

Յանձնարարական. Գրիգոր Մըսրեան՝ իրեն զրկած ասորանքնուս գումարին (29645) վրայ, 2% կուտայ մեր աշխատութեան իբր վարձք, որուն յանձնարարական կ'ըսեն. յանձնարարականը միշտ ասորանաց ընդհանուր գումարին վրայ կը հաշուուի, եւ ոչ թէ եղած ծախուց գումարն ալ մէկուեղ առնելով, վասնզի ըրած ծախքերնիս ինքը բացէն պիտի տայ մեզ :

Եղած ծախքերը ասորանքներուն գումարին (29645) վրայ աւելցուցած ենք գնման հաշուոյն մէջ. վասնզի Գրիգոր Մըսրեան չէ թէ միայն ասորանաց գումարը պարտական է մեզի, այլ ըրած ծախքերնիս ալ զորս իրեն համար հոս վճարեցինք :

Ն Ր Ա Շ Ա Ն Գ Ք

1<sup>o</sup>. Տրապուզանցի Առաքել Խըտըշեանի հաշուոյն գնեցինք Ա. Կ. մարգայով եւ 20—22 թիւերով երեք հակ պատմա իւրաքանչիւրին մէջ 50 ահան ծրար. 20/21ին մէջ 1500 ահան. իսկ 22ին մէջ 1510 մէթրօ, նաւադին 20 զրուշ. չուլ եւ մուշամկա 25 ահան զրուշ. յանձնարարական 1 1/2 % :

2<sup>o</sup>. Յովհաննէս Կարապետեանի հաշուոյն գնուած երկու տակաւ գինի Սէլանիկի ընդամենը 200 հօխա, գին 5 1/4 զրուշն. զանազան ծախք 120 զրուշ. 1% յանձնարարական, նաւադին 40 զրուշն :

Հ Ա Շ Ի Ի Վ Ա Ճ Ա Ռ Մ Ա Ն

Վաճառման հաշիւն ալ ուրիշի մը ասորանքին՝ տիրոջը հրամանին համեմատ եղած վաճառուը կը հաստատէ: Օրինակի համար Մանչէսթըրի Շուսթըրներէն ստացայ Արարատ շոգենաւով 5 հակ պատմա, որ իրենց հաշուոյն ծախեմ. ծախեցի ասորանքները, ուստի վաճառման հաշիւը պէտք է իրենց զրկեմ, որպէսզի գիտնան թէ քանի զրուշ բռներ է եւ թէ որքան իրենց պարտական ենք :

Ահաւասիկ վերոյգրեալ գործողութեան վաճառման հաշուոյն օրինակը :

Կ. Պոլիս, 8 Ապրիլ 1876.

Հաշիւ վաճառման 5 հակ պատմայի վաճառեալ ի հաշիւ Շուսթըրներու, ձեռաւք Պետրոս Յակոբեանի :

B. H.					
№ 1	150	ձերմակ պատմա	4500	2 1/2	11250 —
» 2	200	Ալ	5900	5	17700 —
» 3	150	Պախամ	4425	2	8850 —
					57800 —
		Զեղչ 5 %			1154 —
					56666 —
		Այլեւայլ ծախք			
		Մաքս	1539		
		Միջնորդչէք	1	%	578
		Իմ յանձնարարական	2 1/2	%	945
		Բեռնակրութիւն	82		2744 —
					55922 —

Գնման հաշուոյն մէջ տեսանք՝ որ եղած ծախքերը ասորանաց գումարին վրայ կ'աւելնար, իսկ վաճառման հաշուոյն գալով՝ եղած ծախքերը ասորանաց գումարէն կը զեղչուի. ինչպէս վերի օրինակին մէջ 2744 զրուշ եղած ծախքը զեղչեցինք, ինչու որ թէեւ պատմաները 56666 զրուշ բռներ, բայց այդ պատմաներուն համար հոս ըրած ծախքերնիս ալ իրենք մեզի պարտական են :

Վաճառման հաշուոյ սիւներուն բացատրութիւնն ալ գնման հաշուոյ սիւներուն միեւնոյնն է :

Այլեւայլ ծախուց վրայ բանի մը խօսք

Wafuansurf (հեֆէ-է) (droit de douane) տուրք մ'է որ ամեն ապրանքի համար կը արուի այսչափ 0/0, սակայն ապրանաց՝ իրենց տեսակին համեմատ զատ զատ հաշիւներ եղած է, եւ այդ հաշիւներուն համաձայն կը արուի տուրքը. այն հաշիւները պարունակող ակտրին կ'ըսուի Բարէֆ:

Պատմայի մաքսին ալ հաշիւը այսպէս եղած է. ամեն մէկ 28 ետրտանոց եւ 2/ դոյն պատմաներուն ծրարին 2, 67 դրուշ ծրարին լայնքը նեղ ըլլալով 5/ կամ աւելի դոյն եղած ասանը 5, 44, իսկ երբ ծրարը լայն ըլլայ՝ (այսինքն 29 ինչէզէն աւելի) այն

Conspie, le 8 Août, 1876.

Compte de vente à trois balles d'Indiennes vendues d'ordre et pour compte de Messieurs Schuster de Manchester par Bogos Agopian.

B.K.						
N <sup>o</sup> 1	150	Indiennes blanches	4500	2 1/2	11250	—
» 2	200	» rouges	5900	5	17700	—
» 5	150	» falso	4425	2	8850	—
					57800	—
		Escompte 5 0/0			1154	—
					56666	—
		<b>Frais</b>				
		Droit de douane	1559			
		Courtage 1 0/0	578			
		Commission 2 1/2 0/0	945			
		Magasinage	82		2744	—
					55922	—

ասան իւրաքանչիւր 24 ետրտա 2/ դոյնին 4, 22, իսկ 5/ կամ աւելի դոյն եղած ասան 6, 20 կը արուի:

Ճերմակ մատամբօններուն համար հօխային 1, 92 դրուշ կը արուի: Միջնորդի (courtage). Կարգ մը մարդիկ կան վաճառականական հրատարակին վրայ՝ որոնք ուրիշներուն ապրանքը ծախեցը կը զբաղին, եւ փոխարէն վաճառականը ի վարձատրութիւն իրենց աշխատութեանը այսչափ 0/0 կուտայ. այն արուած ստակին կ'ըսուի միջնորդի:

Z R U Z U Գ Բ

1<sup>o</sup>. Վաճառման հաշիւ 5 պարկ ալիւրի ն. Դ. թիւ 1—5. ընդամենը 250 հօխա, տարա 1 1/2 0/0 — գին 2 3/4 դրուշ հօխան — զեղչ 2 0/0 — Մկրտիչ Համբարձումեանի հաշուոյն — ծախք 225 դրուշ — յանձնարարական 1 1/2 0/0 — միջնորդութիւն 1/2 0/0:

2<sup>o</sup>. Վաճառման հաշիւ 10 պարկ Մ. Ճ. թիւ 200—209 խահուէի — ընդամենը 650 հօխա — գին 17 1/2 դրուշ — զեղչ 1 0/0 — Գրիգոր Յակոբեանի հաշուոյն — մաքս 800 — բեռնակրութիւն 50 — յանձնարարական 1 1/2 0/0:

Բ Ե Ռ Ն Ա Գ Ի Բ

Բեռնագիրը դաշնագիր մ'է, որ ապրանքը բեռցընողին եւ կառավարին կամ ջորեպանին մէջ կ'ըլլայ:

Բեռնագրին մէջ կը դրուի, թուական, փոխադրելի ապրանաց տեսակը, կշիւը, եւ քանի օրուան մէջ փոխադրուիլը. բեռցընողին անունը եւ տեղը, ապրանքը ընդունող մարդուն անունը, կառավարին անունն ու տեղը, փոխադրութեան գինը, ապրանքն ուշ մնացած ատեն կառավարին տալիք տուգանքը, նաեւ լուսանցքին քով ապրանքը պարունակող տակառներուն կամ հակերուն մարքան ու թիւերը:

Բեռնագիրը կ'ստորագրուի ապրանքը բեռցընողին կողմանէ. բեռնագիրը պէտք է դրուշմեալ թղթի (վարդաէ սահէ) վրայ գրուի: Փոխադրութեան համար օր մ'աւելի կը արուի կառավարին՝ այսինքն կրնայ ապրանքը իր որոշած պայմանաժամէն օր մը վերջը յանձնել, առանց իւր վարձքէն բան մը տուժելու:

Ըսածնիս օրինակով մը բացատրենք. Դիցուք թէ մայիս 18ին Տ. եւ Կ. Դարակէօղեան աղաներուն, ի Դիւրիզ, 10 պարկ խահուէ պիտի դրկենք. ուստի Տէլիպաշ օղլու ջորեպանին հետ դաշինք ըրինք, եւ համաձայնեցանք փոխադրութեան ծախքին համար, ամեն մէկ 100 հօխային 120 դրուշ վճարել: Ապրանքը 50 օրուան մէջ պիտի հասցընէ:

Բեռնագրին պարունակութեան բոլոր թուանշանները պէտք է գրով գրուին, որպէս զի չ'ըլլայ թէ կառավարը՝ որուն քով պիտի մնայ այս թուղթը՝ թուանշան աւելցընէ կամ փոխէ ի նպաստ իրեն, այսինքն 605 հօխան 1605 ընէ կամ 726 ը 926 ընէ:

Ահաւասիկ Տէլիպաշ օղլուն տուած բեռնագիրնուս օրինակը, որուն համաձայն ապրանքը պիտի յանձնէ:

Փոխադրուի 726	Տրապիզոն 18 Մայիս 1876
Դրույժ 2	Մեծ. Տեարֆ Տ. եւ Կ. Գարակիօզեան
728	Ի Գ Է Պ Ր Ի Զ
Մարքա	Աստուծոյ պաշտպանութեամբն եւ Տէ- լիալաչ օղլու ջորեպանին ձեռամբ՝ երեսուն օրուան մէջ (եթէ որոշեալ ժամանակէն ուշ մնալու ըլլայ՝ իւր վարձքին 1/5 ը տուծելու պայմանաւ), պիտի ընդունիք տասը պարկ խահուէ, բոլորն ալ լուսանցքին մէջ գրու- ածին համեմատ նշանակեալ եւ թուագրեալ, ընդամենը վեց հարիւր հինգ հօխա, զորս ջորեպանը մինչեւ Ձեր վաճառատան դուռը պիտի բերէ : Իրեն պիտի վճարէք ամեն մէկ հարիւր հօխային՝ հարիւր քսան դրուշ, նաեւ երկու դրուշ բեռնագրիս դրոշմին համար :
Տ. Կ. Գ.	ԾԱՆՕԹ. Հակառակ ստորագրողին կա- մայ՝ եղած յաւելուածները կամ գրի քերթ- ուածներն առ ոչինչ պիտի համարուին :
Թիւ 1—10	Ա. ՄԱԽՈՒԿԻԱՆ
Ընդամենը 605 հ.	

LETTRE DE VOITURE

Voiture 726	Trébizonde, le 18 Mai 1876
Timbre 2	Messieurs D. G. Karagheusian
728	TAURIS
D. G. K.	A la garde de Dieu et sous la conduite de Délibacheoglu, muletier de notre ville, vous recevrez dans le délai de Trente jours, sous peine au muletier de perdre le tiers du montant de sa voiture.
№ 1—10	Dix sacs café
Ocq. 605	Le tout marqué et numeroté comme en marge, pesant ensemble six cent cinq oc- ques. Il les apportera devant la porte de votre magasin. Vous lui payerez vingt piastres pour cent ocques, et rembourserez deux piastres pour le timbre de la présente.
	<b>NOTA.</b> Seront nulles toutes surcharges ou ratures non approuvées par le signataire.
	A. MAHOKIAN

Վաճառականական օրինագրքին՝ (թիճարէթ գանուննամէսի) բեռ-  
նագրի վերաբերեալ մի քանի կարեւոր յօդուածները հոս կը դնենք:  
Յօդ. 61°. «Իրասլայէ դայիմէսի թապիր օլունան սէնէտ՝ մալ  
կէօնտէրէն քիմէսնէ իլէ, սըփարըքեար վէ էմանէթճի վէ քիրածը  
պէյնիմտէ օլան մուգավէլէյի հավի (պարունակող) պիր սէնէտ աիր:»  
Յօդ. 62°. «Մէգքիւր իրասլայէ դայիմէսիմտէ թարիլիս օլմագ, վէ  
նագլ օլունածագ էլէանըն մըգտարը վէ ճինսի վէ բէնկլէրինին նէվի  
վէ դաչ կիւն դարֆընտա մահալիննէ եթիլէճէյի վէ նագլ վէ իրասլիննէ  
միւթէահէիտ (դաշնաւորք) օլան սըփարըքեար վէ էմանէթճիինն իամի  
վէ շօհրէթի վէ մահալի իգամէթի վէ էլէանըն քիմէ թէսլիմ օլու-  
նածաղը վէ քիրածընըն իամի վէ շօհրէթի վէ սաքին օլտուղը մա-  
հալի վէ իւճրէթի նագլլէյնին մըգտարը վէ թային օլունածագ միւտ-  
տէթ գարֆընտա եթիլիտիլէմէզ իսէ՝ էտա օլունածագ թագմիմտթ  
(տուգանք) մըգտարը քէյֆիլէթի եագըլմագ, վէ սըփարըքեար վէ

էմանէթճի վէ եախօտ կէօնտէրէն քիմէսնէ թարաֆլէրինտէն իմգա  
գըլընմագ, վէ սէնէտին քէնարընտա կէօնտէրիլէն էլէանըն նիւմէրօ  
վէ ալամէթի (մարքա) նէ իսէ՝ իշարէթ օլունմագ, վէ սէնէտի մէգ-  
քիւր սըփարըքեար վէ էմանէթճիինն տէֆթէրինն այնը իլէ գայս  
գըլընմագ լաղըմէտէն աիր:»

Հ Ր Ա Ն Ա Ն Գ

Մարտ 17ին Գրիգոր Մըսըրեանին ղրկուած տասն հակ պասմա-  
ները՝ Տրապիզոնէն անդին ճանրելու համար, իւրաքանչիւր հակին  
80 դրուշ վարձք տալու համար դաշինք եղած է Պէյթուլահ Պար-  
սիկ ճիապանի մը հետ. ապրանքը 15 օրէն պիտի հասցընէ. եթէ ուշ  
մնալու ըլլայ՝ վարձքին 1/5 ը պիտի տուծէ : Դրոշմի համար երկու  
դրուշ պիտի տրուի: Հակաց թիւերն ու մարքան գնման հաշույն  
մէջ նշանակուածին պէս պիտի ըլլան :

ԲԵՌՆԱԳՐԻ ՈՒՐԻՇ ՕՐԻՆԱԿ ՄԸ

Փոխադր. հմր. . . . .	..... 187
Դրոշմ . . . . .	Skv . . . . .
Մարքա . . . . .	Սոյն բեռնագրին ունեցող . . . . . կառավարին ձեռամբ՝ ուղարկեցինք Ձեզ . . . . . լուսանցքին մէջ գրուածին համեմատ նշանակեալ եւ թուագրեալ զորս պարտաւոր է Ձեզ հասցընել անշնաս . . . . . օրուան մէջ. եթէ ապրանքը ճանքան կորսուի կամ աւրուի՝ փոխարէնը վճարելու, իսկ եթէ որչեալ պայմանաժամէն ուշ բերելու ըլլայ՝ իւր վարձքին 1/3ը տուժելու պայմանաւ :
Թիւ . . . . .	
Կշիւ . . . . .	
	(Ստորագրութիւն)

LETTRE DE VOITURE

Voiture . . . . .	..... 187
Timbre . . . . .	Monsieur . . . . .
Marque . . . . .	Par le muletier . . . . . porteur de la présente lettre, nous vous avons acheminé . . . . . colis de . . . . . marqués et numerotés comme en marge, qu'il s'oblige à vous faire parvenir sains et saufs dans le délai de . . . . . jours à condition de perdre 1/3 de sa voiture pour perte ou avarie revenant pendant le voyage, ainsi que de tout retard.
Numero . . . . .	
Poids . . . . .	
	(Signé)

ԲԵՌՆԱԳՐԻ ՆԱԻՈՒ (1)

Ինչպէս բեռնագրին (lettre de voiture), նոյնպէս ալ նաև բեռնագրին մէջ պէտք է գրուի, փոխադրելի ապրանք տեսակը, քանակութիւնը, կշիւը, բեռնաւորողին, ապրանքը ընդունողին եւ նաւապետին անունն ու բնակութեան տեղը, նաևուն անունն եւ տակառաջափը (2) (tonnage), մեկնած եւ երթալիք տեղւոյն անունը, նաւողչեայն (նաւլու)։ Լուսանցքին քով հակին կամ տակառին թիւն ու մարքան :

Մայիս 10 ին՝ Յակոբ Պետրոսին զրկեց 500 լիրայի ապրանք, վճարելի կէսը յուլիս 10 ին, եւ միւս կէսը օգոստոս 10 ին :

Յունիս 15 ին՝ Յակոբ Պետրոսին վրայ քաշեց 65 լիրայի փոխանակագիր մը, վճարելի 30 յունիս :

Յունիս 30 ին՝ Պետրոս Յակոբին հաշուոյն վճարեց Գրեգոր Յակոբեանին 55 լիրա Օամանեան :

Յուլիս 10 ին՝ Յակոբ Պետրոսին զրկեց 100 լիրայի սավաշուր եւ թէնգիֆ, վճարելի օգոստոս 10 ին :

Յուլիս 18 ին՝ Յակոբ քաշեց Պետրոսին վրայ մի փոխանակագիր 110 լիրայի, վճարելի 20 օգոստոս :

Յուլիս 30 ին՝ Յակոբ Պետրոսին զրկեց զանազան ապրանք 245 Օամ. լիրայի, վճարելի սեպտեմբեր 30 ին :

Օգոստոս 15 ին՝ Պետրոս վճարեց Յակոբին մէկ հրամանագիրը 45 լիրայի :

Օգոստոս 25 ին՝ Պետրոս Յակոբին վրայ քաշեց 200 լիրայի փոխանակագիր մը, վճարելի սեպտեմբեր 25 ին :

2°. Վերոյգրեալ հաշուներէն անուղիղ կերպով ալ շինէ :

# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ինչպէս որ ներածութեան մէջ ըսինք, Տոմարակալութիւնը՝ վաճառականին ըրած բոլոր գործողութիւնները կանոնաւոր եւ յստակ կերպով տոմարներու մէջ գրելու արհեստն է, որով վաճառականը կրնայ ամեն վայրկեան գիտնալ իւր պարտքը, պահանջքը, ըրած առեւտուրը, միով բանիւ՝ իւր բոլոր գործողութիւնները :

Վաճառականական տեարակներուն՝ օրինաց առջեւ սր աստիճան կարեւորութիւն ունենալը տարացուցանելու համար, վաճառականական Օրինագրքին հետեւեալ յօդուածներն յառաջ կը բերեմք :

Յօդ. 5°. « Հէր սիր թաճիր՝ կիւն պէ կիւն վէ մատտէ պէ մատտէ, պօրճընը վէ զիմէմինի վէ մաթլուպաթընը գայտ կլլմէք իշիւն, Ժո՛ւն (Օրհաշիւ) թապիր օլունան եկվիյէ տէֆթէրինի թութմաղա մէճպուր օլուպ, թիճարէթէ տաիր ճէմի մուամէլաթընը վէ մուպայտ կլլտիկի փօլիշոյը վէ եախօտ քէնտուսինէ չէքիլուպ գապուլ կլլտիկինի վէ զաշրիյէ գայարազ նազլի հափալէ իթաիկինի վէ ալէլ ըթլազ (ընդհանուր) ախուրթաթընը գայտ, վէ էվճէ մասարիֆինի տախի այ պէ այ պիր գալմ օլարազ՝ տէֆթէրի մէզքիւրէ թաշրի կլլէյէ. վէ պունտան պաշգա տախի պիր տէֆթէր թութուպ, օրթաղլէրինէ վէ առիմլէրինէ կէճտէրաիկի մէքթուպլէրի գայտ իտէ (ընդօրինակէ). վէ օրթաղլէրինտէն վէ առիմլէրինտէն կէլէն մէքթուպլէրի՝ այ պէ այ պաղտայուպ հըֆիզ էյլէյէ » :

Յօդ. 4°. « Թաճիր օլան քիմէսինէ՝ իւշիւնճի մատտէտէ պէյան օլան տէֆթէրլէրաէն պաշգա՝ հէր սէնէ Պէլնէ թապիր օլունուր աիկէր պիր տէֆթէր տախի թութմաղա մէճպուր օլուպ, նազլ օլունան էմիլ վէ էշտաթընը վէ պօրճընը վէ զիմէմինի վէ մաթլուպաթընը պու տէֆթէրէ պիրէր պիրէր գայտ վէ թաշրի կլլէյէ » :

Յօդ. 5°. « Զիքը՝ օլունան իքի տէֆթէրտէ՝ պաշգա լուղէթ եաղըմաթը միւմքին օլաճազ մէրթէպէ պօշ եէր պրաղըմաթը, վէ եաղը պօղըզլուզը վէ եաղը սըրտաթընըն արտաթնէ լուղէթ իլալիսի վէ

Իշարէթ թարգը իլէ տէֆթերին քէնարընէ ազ վէ չօզ իպարէ չը-  
 գարմասը, վէ իլալէսի ճաիզ օլմայա. վէ Ժո-թու-տէ տէֆթերինէ՝ հէր  
 սէնէ թէմամընտէ Թիճարէթ խանէտէն պու խուսուսէ մէմուր պիր  
 զաթ՝ պուենը իպրազ իտէն թաճիրին մուվաճէ հէսինտէ, սահ քէչիտէ  
 իլէյէ գալաը քի մէմուրի մուսաիլէյ՝ հիչ պիր պէհանէ իլէ տէֆ-  
 թերի մէգքիւրըն պիր քէլիմէսինի օգուսաղա մէզուս օլմասաղը  
 (հրաման չ'ունի) մալիւմ օլա. վէ մէգքիւր տէֆթերլէրէ պիր շէյ  
 ետաղըմագտան մուգատտէմ, եինէ Թիճարէթ խանէտէն պու իլէ մախ-  
 սուս պիր մէմուր՝ տէֆաթիրի մէրգուսէնին սահիֆէլէրինէ նօմրա  
 գօյուպ, օլ տէֆթեր գանչ սահիֆէ իտէ՝ տէֆթերին ալթընէ տէրճ  
 իտէրէք իմզա գօյա» :

Յօդ. 6<sup>0</sup>. «Թայիֆէի թիւճճար՝ թութ-մաղա մէճպուր օլաըզլէրի  
 տէֆթերլէրէտէ՝ եօզարտա եազըլան շերաթի լազըմէյէ ըիտայէթ  
 իթ-մէյուպ տէ՝ տէֆթերլէրինի ույղուսըզ վէ նիզամսըզ թութաըզ-  
 լէրի հալտէ, հինի մուրաֆատէ օ մազուլէ նիզամէ միւթապըզ օլ-  
 մայան տէֆթերլէրէ իթիպար օլունմայա» :

Յօդ. 7<sup>0</sup>. «Հինի մուրաֆատէ՝ թիւճճար տէֆթերլէրինին իպրազ  
 օլունմասը էմր օլունմայուպ, անճազ ուսուրի շիրքէթ, վէ վէրասէթ  
 (ժառանգութիւն) վէ գուսիմանիա մուգատէմէսի վէ իֆլազ վուգու-  
 ինտէ՝ տէֆաթիրի լազըմէթիճարէթ խանէտէն ըէամէն թալէպ օլունա» :

Յօդ. 8<sup>0</sup>. «Եօզարտա եազըլան գաիտէյէ միւթապըզ թանզիմ օլու-  
 նան թիւճճար տէֆթերլէրի՝ թիւճճար պէյնինտէ վուգու պուլան  
 տալալէրէ տէլիլ վէ պիւրհան (վկայ) օլմազ իւզրէ՝ դապուլ օլունա» :

Յօդ. 9<sup>0</sup>. «Պիր տալանըն բույէթի էսնտտէ՝ նիզալը օլան մատտէ-  
 նին զահիրէ իխրաճի զըմնընտէ, եալընըզ նիզալը օլան խուսուսըն  
 բույէթի իչիւն՝ թիճարէթ տէֆթերլէրինին իպրապի Թիճարէթ խանէ  
 թարաֆընտէն ըէամէն թէնպիհ օլունա» :

Ինչպէս հարկը՝ նոյնպէս եւ օրէնքը կը պահանջէ որ վաճա-  
 աական մը երեք գլխաւոր տետրակներ ունենայ. սակայն իւր  
 գործողութիւններն աւելի յստակ եւ որոշ երեւալու համար՝ ուրիշ  
 տետրակներ ալ կրնայ հնարել եւ իւրաքանչիւրին մասնաւոր ձեւ  
 եւ անուն տալ :

Տոմարակալութիւնը երկու եզանակ ունի, Պարզ-տմար եւ  
 Կրկնատմար :



### Գ Լ Ո Խ Խ Ա.

## Պ Ա Ր Զ - Տ Ո Մ Ա Ր



Պարզ-տոմարը՝ կրկնատոմարին պէս ապահով սկզբունքներ չ'ու-  
 նենալուն պատճառաւ՝ լաւ ընդունելութիւն գտած չ'է. բայց պէտք  
 է գիտնալ թէ՝ ինչպէս կրկնատոմարը մեծ վաճառատուններու մէջ  
 կը գործածուի, նոյնպէս ալ պարզ-տոմարը փոքր վաճառատունե-  
 րու մէջ (մանաւանդ գաւառները) գործածուելու համար կարեւո-  
 րութիւն կրնայ ունենալ :

Այս պատճառաւ հարկ կը համարիմք Պարզ-տոմարին վրայ ալ  
 պէտք եղած տեղեկութիւնները տալ :

Պարզ-տոմարին՝ ինչպէս նաեւ կրկնատոմարին մէջ գործածուած  
 տետրակներն երկու կարգի կը բաժնուին, այսինքն՝ Գլխաւոր եւ  
 Երկրորդախառն տետրակներ :



### Գ Լ Խ Ա Ի Ո Ր Տ Ե Տ Ր Ա Կ Ն Ե Ր

Պարզ-տոմարի մէջ գործածուած տետրակներուն գլխաւորները  
 հետեւեալներն են :

- 1<sup>0</sup>. Զ Ե Ռ Ա Տ Ե Տ Ր .
- 2<sup>0</sup>. Օ Ր Հ Ա Ծ Ի Ի .
- 3<sup>0</sup>. Մ Ա Տ Ր - Հ Ա Ծ Ի Ի .



### Զ Ե Ռ Ա Տ Ե Տ Ր

Այս տետրակին մէջ վաճառականը պարտի գրել իւր բոլոր գոր-  
 ծողութիւնները, Դիցուք թէ այսօր վաճառականութեան սկսելով՝  
 կ'ուզենք որ ըրած գործողութիւններնիս պարզ-տոմարի ձեւով ար-  
 ճանագրենք : Գործողութիւնները Ձեռատետրը անցընելու համար՝  
 նախ պէտք է իւրաքանչիւր յօդուածին ճակատը գրել գործողու-  
 թեան թուականը. յետոյ գործողութեան կանխիկ կամ ապառիկ  
 ըլլալը, եւ կարեւոր պարագայները :

Գործողութիւն մը Ձեռատետրը անցընելու մասին դժուարու-  
 թիւն մը չ'ըլլալուն, ըսածնիս բաւական համարելով, սխիւք այժմ  
 Ձեռատետր մը պտորաստել. ուսանողը ուշադրութեամբ դիտած  
 ատեն կրնայ յիշեալ տետրակին վրայ ճշգրիտ գաղափար մ'ունենալ :

**Ձ Ե Ռ Ա Տ Ե Տ Ր**

Ա Ր Շ Ա Կ Գ Ր Ի Գ Ո Ր Ե Ա Ն Ի

1 Փետր. 1876			
1	Սնտուկս դրի իբրեւ դրամագլուխ.....		20000 —
2 Փետր.			
2	Գնուած կանխիկ Յ. Գրիգորեան եւ Ընկերութենէն 2 սնտուկ ըստարմաչէթ, գին 250 դր.		500 —
3 Փետր.			
3	Ծախուած կանխիկ Պողոս Գէորգեանի, 1 սընտուկ ըստարմաչէթ.....		500 —
Նոյն			
4	Գնուած կանխիկ, տասը տակառ ճերմակ գինի, իւրաքանչիւրը 400 դրուէն.....		4000 —
4 Փետր.			
5	Ծախուած ապառիկ Ա. Սահակեանի 5 տակառ ճերմակ գինի, իւրաքանչիւրը 425 դրուէն.....		2125 —
6 Փետր.			
6	Փոխ առնուած Կարապետ Գասպարեանէն յիսուն (50) Լ. Օ. առանց տոկոսի.....		5000 —
8 Փետր.			
7	Ստացայ Ա. Սահակեանէն իմ/հ վճարելի 51/օրուան իւր տոմսակը, ամսոյս 4ին իրեն ծախած ապրանաջս փոխարէն.....		2125 —
10 Փետր.			
8	Ծախուած Գ. Յակոբեանի 2 տակառ ճերմակ գինի, գին 450 դրու.	860 —	
	1 սնտուկ ըստարմաչէթ.....	510 —	4170 —

**Օ Ր Հ Ա Շ Ի Ի**

Օրհաշուն մէջ կ'ընդօրինակուին Ձեռատետրին բոլոր յօդուածներն առանց բացառութեան, հետեւեալ կերպով :

Որեւիցէ յօդուած մը յՕրհաշիւ փոխադրելու համար, զորօրինակ՝ 5<sup>րդ</sup> յօդուածը,

1<sup>0</sup>. Պէտք է գրել իւրաքանչիւր գործողութեան յօդուածին վրայ իւր թուականը :

2<sup>0</sup>. Որովհետեւ Ա. Սահակեան կանխիկ չի տուաւ ստակը, ըսել է թէ պարտական մնաց մեզ. ուստի, առաջին տողին վրայ պէտք է գրել խոշոր գրերով :

**Պ Ա Ր Տ Ի Ա. Ս Ա Հ Ա Կ Ե Ս Ն :**

3<sup>0</sup>. Երկրորդ տողէն սկսելով՝ պէտք է գրել յստակ եւ համառօտ կերպիւ, ծախուած ապրանաջ տեսակը, գինը, որքանութիւնը եւ վաճառման պայմանները :

4<sup>0</sup>. Գործողութեան գումարը գրելու է Գ. սիւնին մէջ :

Օրհաշուն ինչպէս նաեւ Ձեռատետրին վրայ երեք սիւն կ'ըլլայ. առաջնոյն մէջ կը գրուի յօդուածի մը՝ Մայր-հաշուն քանիբարդք երեսը փոխադրուած ըլլալը. երկրորդին մէջ գործողութեան մը մէկ քանի գումարները՝ եթէ ունենայ. իսկ երրորդին մէջ կը փոխադրուի նոցա հաւաքական գումարը :

**Մ Ա Յ Ր - Հ Ա Շ Ի Ի**

Այս տետրակին մէջ, որոյ ձեւը յաջորդ երեսներուն մէջ պիտի տեսնենք, վաճառականը՝ հետեւին առեւտուր ըրած մարդոցը համար զատ զատ հաշիւներ կը բանայ, եւ հետզհետէ կը գրէ օրուան կարգով Օրհաշուն գործողութիւնները :

Մայր-հաշուն վրայ հաշիւ մը բանալու համար, պէտք է տետրակին երկու երեսը մէկտեղ բանալով՝ երկու երեսին ուլ միեւնոյն թիւը գնել, եւ գլուխը գրել խոշոր գրերով հաշիւը բացուած մարդուն անունը, ձախ կողմի երեսին վրայ Պարսի, եւ աջ կողմը՝ Պահանջի բառերը. վերջը Օրհաշուն յօդուածներն ստնելով՝ այս հաշուն ձախ կողմը, այսինքն՝ պարսի երեսը՝ պարսիով սկսուած յօդուածները, եւ աջ կողմը, այսինքն՝ պահանջի երեսը՝ պահանջիով սկսուած յօդուածները անցունել :

Օ Ր Հ Ա Շ Ի Ի

Ա Ր Շ Ա Կ Գ Ր Ի Գ Ո Ր Ե Ա Ն Ի

1 Փետր. 1876			
1	ՊԱՐՏԻ ՍՆՏՈՒԿ Սնտուկը դրած դրամագլուխս.....	20000	—
2 Փետր.			
1	ՊԱՀԱՆՁԷ՛ ՍՆՏՈՒԿ 2 սնտուկ ըսպարմաչէթ դնուած, գին 250 ղը.	500	—
5 Փետր.			
1	ՊԱՐՏԻ ՍՆՏՈՒԿ Ծախուած կանխիկ 1 սնտուկ ըսպարմաչէթ նոյն	500	—
4 Փետր.			
1	ՊԱՀԱՆՁԷ՛ ՍՆՏՈՒԿ Գնուած 10 տակառ ճերմակ գինի, գին 400 ղը.	4000	—
6 Փետր.			
2	ՊԱՐՏԻ Ա. ՍՍ.ՀԱԿԵԱՆ Ապառիկ ծախուած 5 տակառ ճերմ. գինի, գին 425	2125	—
8 Փետր.			
5	ՊԱՀԱՆՁԷ՛ ԿԱՐԱՊԵՏ ԳՍՍՊԱՐԵԱՆ Փոխ առնուած յիշեալին 50 Լ. 0. առանց տոկոսի	5000	—
10 Փետր.			
2	ՊԱՀԱՆՁԷ՛ Ա. ՍՍ.ՀԱԿԵԱՆ Իմ / հ իւր տամազը 51 օրուան.....	2125	—
10 Փետր.			
4	ՊԱՐՏԻ Գ. ՔԱԿՈՐԵԱՆ 2 տակառ ճերմակ գինի, գին 450 ղը. ....	860	—
	1 սնտուկ ըսպարմաչէթ.....	510	—
		1170	—

Մայր-հաշուին միջոցաւ վաճառականը կրնայ գիտնալ որչափ պարտք կամ պահանջը ունենալը հետեւեալ կերպով:

Իւրաքանչիւր հաշուոյ պարսփին եւ պահանջփին գումարներն ընելէ վերջը՝ մնացորդը պարսական կ'ըլլայ՝ երբ պարսփին գումարը պահանջէն աւելի ըլլայ. իսկ պահանջող՝ երբ պահանջփին գումարը պարսփէն աւելի ըլլայ:

Մայր-հաշուին աստղանիշ սիւները կը ցուցնեն յօղուածներուն Օրհաշուին քանիերրորդ երեսէն փոխադրուած ըլլալը:



ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՏԵՏՐԱԿՆԵՐ

Օրինաց պահանջած երեք գլխաւոր տետրակներէն զատ, պարզ-տոմարի մէջ ուրիշ տետրակներ ալ կը գործածուին, որոց կ'ըսուին Երկրորդական տետրակներ:

Երկրորդական տետրակներուն թիւը՝ (թէ պարզ-տոմարին եւ թէ կրկնատոմարին մէջ) ըստ տեսակի գործոյն, կրնայ աւելնալ կամ պակասիլ, բայց սովորաբար աւելի գործածականները հետեւեալներն են:

- 1°. Դրամարկղի տետրակ .
- 2°. Տետր արձանագրութեան ընդունելի եւ վճարելի տոմսակաց .
- 3°. Մթերագիր .
- 4°. Տետր ընդօրինակութեան նամակաց եւ:

Երկրորդական տետրակներուն ձեւը՝ կրկնատոմարին մէջ եղածէն ընաւ տարբերութիւն չ'ունենալուն համար, աւելորդ է հոս դնել. հոն՝ իւրաքանչիւրը զատ զատ իր ձեւովը եւ պէտք եղած մանրամասն բացատրութիւններովը դրուած է:





ՄԱՅՐ-ՀԱՇԻԻ

Եր. 1 Պ Ա Ր Տ Ի

Սնունդ

ՊԱՀԱՆՁԷ Եր. 1

1876					
Փետրուար	1	Պատրաստ դրամ.....	1	20000	
»	5	Վաճառումն կանխիկ 1 սնունդ ըսպարմաչէթի	1	500	
			*	20500	—

1876					
Փետրուար	2	Գնումն 2 սնունդ ըսպարմաչէթի.....	1	500	—
»	5	» 10 տակառ ճերմակ դինուոյ .....	1	4000	—
		Սնունդը սպատրաստ ի 10 փետրուար.....		15800	
			*	20500	—

Եր. 2 Պ Ա Ր Տ Ի

Ա. Սահակեան

ՊԱՀԱՆՁԷ Եր. 2

1876					
Փետրուար	4	Իրեն ծախած սպրանաջս համար.....	1	2125	—

1876					
Փետրուար	8	Իւր տոմսակը իմ / հ 51 օրուան .....	1	2125	—

Եր. 3 Պ Ա Ր Տ Ի

Կարապետ Գապարեան

ՊԱՀԱՆՁԷ Եր. 3

--	--	--	--	--	--

1876					
Փետրուար	6	Իրմէ փոխ առնուած .....	1	5000	—

Եր. 4 Պ Ա Ր Տ Ի

Գ. Յակոբեան

ՊԱՀԱՆՁԷ Եր. 4

1876					
Փետրուար	10	Իրեն ծախած սպրանաջս համար.....	1	1170	

--	--	--	--	--	--

Ծանօթ. Այս երեսին մէջ չորս յօդուած դրուած է, բայց իրական գործողութեան

ատեն՝ աւելի լաւ է իւրաքանչիւր անձի կամ հաշուոյ համար մէկ մէկ երես գրենլ :

### Գ Լ Ո Ւ Խ Բ .

## Կ Ր Կ Ն Ա Տ Ո Մ Ա Ր



Պարզ-տոմարի ձեւով տետրակներ ունեցող վաճառականը՝ հետերնին գործ ըրած մարդոց համար միայն հաշիւներ ունենալուն, անոնց հետ ինչ վիճակի մէջ գտնուած ըլլալը միայն կրնայ գիտնալ. մինչդեռ կրկնատոմարին մէջ՝ թէ նոյն անձանց հաշուոց եւ թէ զանազան հաշիւներու միջոցաւ՝ իւր վիճակին վրայ ճշգրիտ գաղափար մը կրնայ ունենալ :

Տետրակները կրկնատոմարի ձեւով բռնող վաճառականը ուզած ժամանակը կրնայ գիտնալ թէ՛ որչափ զուտ շահ ունեցեր է ապրանքներէն, որչափ է իւր տանը ծախքը: Ասկէ զատ՝ եթէ ըրած վաճառականութիւնն աւելի ընդարձակ եւ այլեւայլ տեսակ ապրանաց վրայ ըլլայ, կրնայ ամեն ատեն գիտնալ թէ՛ օ/ին քանի շահեր է պատմայէն, ամերիքանէն, չուխայէն եւայլն. ասոնք գիտնալով եւ հասկընալով՝ որ տեսակին վրայ որ աւելի շահ գտնէ՝ այն ձեւը աւելի առաջ կը տանի. եւ ընդհակառակը, որ տեսակէն վնաս տեսնէ՝ այլ եւս կը դադրի այն տեսակէն :

Կրկնատոմարը պարզ-տոմարէն կը տարբերի երկու պայմաններով. Ա. կրկնատոմարի Օրհաշուին մէջ ամեն մէկ յօդուածը կը պարունակէ պարտական եւ պահանջող մը միանգամայն :

Բ. կրկնատոմարին մէջ վաճառականին անունը չի յիշուիր, այլ անոր տեղ զանազան հաշիւներ կը գործածուին, եւ այդ հաշիւները պարտական կամ պահանջող կ'ըլլան :

### ԿՐԿՆԱՏՈՄԱՐԻ ՄԷՋ ԳՈՐԾԱԾՈՒՄԻ ԶԱՇՏՈՒՅՑ ՎՐԱՑ

Կրկնատոմարի տետրակներուն մէջ վաճառականին անունը չի յիշուելուն համար, երկու տեսակ հաշիւներ կը գործածուին, 1<sup>o</sup>. Գլխաւոր եւ 2<sup>o</sup>. Մասնաւորաց հաշիւներ: Այս հաշիւներն իրենց մէջ կ'առնեն ու կ'ուտան իբր զատ զատ անձինք, եւ անոնց միջոցաւ վաճառականը կրնայ ուզած ատեն իւրաքանչիւրէն զատ զատ տեղեկութիւններ քաղելով՝ իւր գործոց ընթացքին վրայ ճշգրտափար մ'ունենալ :

### ԳԼԽԱՒՈՐ ՀԱՇԻՒՆԵՐ

Վաճառականական գործողութեանց մէջ փոխանակելի նիւթերն են. Դրամ, Ապրանք, Ընդունելի տոմսակներ, Վճարելի տոմսակներ, Շահ կամ վնաս (վերոյիշեալ գործողութիւններէն յառաջ եկած):

Վերոյիշեալ նիւթոց իւրաքանչիւրին համար զատ զատ հաշիւ կը բացուի կրկնատոմարին մէջ՝ իւրաքանչիւրին իր անուամբ, եւ կ'ըսուին Գլխաւոր հաշիւք. վասն զի գլխաւորաբար վաճառականութեան գործողութիւնները կը ներկայացընեն եւ հետեւեալներն են

- 1<sup>o</sup>. Գ Ր Ա Մ Ա Ր Կ Ղ .
- 2<sup>o</sup>. Ը Ն Գ Հ Ա Ն Ո Ւ Ր Ա Պ Ր Ա Ն Ք .
- 3<sup>o</sup>. Ը Ն Գ Ո Ւ Ն Ն Ե Լ Ի Տ Ո Մ Ս Ա Կ Ք .
- 4<sup>o</sup>. Վ Ճ Ա Ր Ն Լ Ի »
- 5<sup>o</sup>. Շ Ա Հ Ն Ի Ջ Է Ն .

Բաց ի Դրամարկղի հաշուէն՝ միւս չորս հաշիւներն իրենց ստորաբաժանմունքն ունին, այսինքն՝ այնչափ հաշիւներու կը բաժնուին՝ որչափ որ գործին տեսակը պահանջէ :

### ԳԼԽԱՒՈՐ ՀԱՇՈՒՅՑ ԿՐԿՆԱՏՈՄԱՐԻ ՄԷՋ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Եթէ վաճառականը մէկէ մը ստակ ընդունի՝ Դրամարկղը ընդունած պիտի սեպենք. վասնզի՝ ինչպէս ըսինք, վաճառականին անունը չի յիշուիր, հետեւաբար Դրամարկղի հաշիւը ՊԱՐՏԱԿԱՆ՝ եւ միեւնոյն ատեն ստակը տուող անձը ՊԱՀԱՆՋՈՂ պէտք է ընել. կամ եթէ կանխիկ ստակով ապրանք առնէ՝ Ընդհանուր ապրանքի հաշիւը ՊԱՐՏԱԿԱՆ՝ եւ Դրամարկղի հաշիւը ՊԱՀԱՆՋՈՂ ընել. ասկէ կը հետեւի կրկնատոմարի հետեւեալ սկզբունքը թէ՛ Ընդունող անձը կամ հաշիւը պէտք է որ պարտական ըլլայ, եւ նոյն ատեն տուող անձը կամ հաշիւը պահանջող :

Կրկնատոմարի սկզբունքն ասոր վրայ կը կայանայ. եւ միեւնոյն գործողութեան մէջ թէ պարտական եւ թէ պահանջող ըլլալէն ալ կը հետեւի որ՝ նոյն գործողութեան գումարը Մայր-հաշուին մէջ երկու անգամ կը փոխադրուի, մին՝ պարտականին պարտին կողմը, եւ միւսը՝ պահանջողին պահանջին կողմը: Ահա այս պատճառաւ է որ կրկնատոմար կամ կրկնակ-տոմար անունն առած է այս եղանակը :

Այս սկզբան բացարձակ հետեւանքն այն է թէ՛ կրկնատոմարի տետրակներուն մէջ բոլոր հաշուոց պահանջին ընդհանուր գումարը՝ պարտին ընդհանուր գումարին հետ պէտք է որ ճշգրտապէս հաւասար ըլլայ. ասկից յառաջ կուգայ կրկնատոմարի համար փորձա-

կըշիռ մը, որմէ զուրկ է սարգ-տումարը, սը իւրաքանչիւր գործողութեան գումարը մէկ անգամ միայն կը փոխադրուի, հաշուոյ մը կամ պարսֆին եւ կամ պահանջին կողմը :

1° Գ Ր Ա Մ Ա Ր Կ Ղ

Այս հաշուոյն պարսֆին կողմը կը գրուին բոլոր առնուած ստակներն, եւ պահանջին կողմը՝ բոլոր վճարուածներն, այսինքն՝ ոսկի, արծաթ, եւ այն արժէթ-ղթերն՝ որոնք իբրեւ ստակ երկրին մէջ կը շրջաբերին առանց որեւէ զեղչի :

Երբեմն ի տեսութեան վճարելի տոմսակներն եւս իբրեւ ստակ այս հաշուոյն կ'անցնին. բայց աւելի աղէկ կ'ըլլայ որ ստակն առնուելէ վերջը գրուի. վասնզի կրնայ պատահիլ որ տոմսակը չ'վճարուի, որ առեւն ուրիշ գործողութիւն ընել հարկ կ'ըլլայ :

2° Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Ա Պ Ր Ա Ն Ք

Այս հաշուոյն կ'անցնին ապրանաց վերաբերեալ բոլոր գործողութիւնները: Վաճառականն՝ այս հաշիւը պարսակակն կ'ընէ՝ գնած, փոխ առած, փոխանակած (Բւճճ), վերջապէս որեւիցէ կերպով վաճառատունը մտած ապրանաց համար, եւ պահանջող՝ ծախած, փոխ տուած, փոխանակած, ձրի տուած, վերջապէս վաճառատունէն դուրս ելած ապրանաց համար :

Վաճառական մը կրնայ նաեւ ծովով կամ ցամաքով ճամբուէ հանուած ապրանքներ գնել կամ վաճառել :

ԱՏՈՐԱԲԱԺԱՆՄՈՒՆՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆԱՅ

Ընդհանուր ապրանաց հաշիւը շատ մը ստորաբաժանումներ կրնայ ունենալ, որոնք կը պատահին՝ երբ վաճառական մը շատ տեսակ ապրանաց վրայ գործ ընելով, ուղէ իւրաքանչիւրէն յառաջ եկած շահը կամ վնասը մանրամասնապէս հասկընալ, օրինակի համար, եթէ վաճառական մը իւր գլխաւոր գործէն զատ չուխայի վրայ ալ գործ ընէ, «Չուխայի հաշիւ» ըսելով զատ հաշիւ մը կը քանոց, ինչպէս նաեւ շաքարի, խահուէի, աճառի եւ այլ զանազան տեսակ ապրանաց վրայ գործ բրած առեւն՝ անոնց համար ալ զատ հաշիւներ պէտք է բանալ :

Այս ստորաբաժանումներն եւս Ընդհանուր ապրանաց պէս պար-

սակակն եւ պահանջող կ'ըլլան՝ այնչափ գումար, որչափի որ գնուին կամ վաճառուին :

Ընդհանուր ապրանաց հաշուոյն ստորաբաժանմանց ամենէն աւելի գործածականները հետեւեալներն են :

1°. Հաշիւ չուխայի, շաքարի, խահուէի եւ այլ զանազան ապրանաց :

2°. Հաշիւ քոնսուլտէի, երկաթուղեաց բաժնետոմսի, ընկերութեանց բաժանորդագնոց եւ այլ արժէթ-ղթոց :

3°. Հաշիւ ապրանաց՝ իմ հաշուոյս այսինչ անձին քով յանձնարարականաւ :

4°. Հաշիւ ապրանաց բաժանորդական ընկերութեամբ կամ 1/2, 1/3 ի հաշուով :

5°. Հաշիւ գործարանի :

6°. » անշարժ ստացուածոց, (իւրաքանչիւրն իր անունովը, այսինքն՝ տուն, խանութ կամ հող եւ այլն) :

7°. Հաշիւ կարանեաց :

8°. » նաւու :

9°. » տօնավաճառի :

ՉԱՆՍՁԱՆ ԱՊՐԱՆԱՅ ՀԱՇՈՒՆՆԵՐ

Ինչ որ ըսինք ընդհանուր ապրանաց հաշուին վրայ՝ նոյնը պէտք է հասկընալ նաեւ այս հաշուոց համար. այսինքն՝ մտած ապրանաց համար պարսակակն, եւ ելածներուն համար պահանջող ընել նոյն հաշիւները :

Հ Ա Շ Ի Ի Ա Ր Ժ Ե Թ Ղ Թ Ո Յ

Երբ վաճառական մը որեւիցէ արժէթ-ղթեր ունենայ, այն առեւն անոնց համար զատ հաշիւ կը բանայ, եւ պարսակակն կ'ընէ զայն առած գնովը, եւ պահանջող՝ ծախած գնովը :

Հ Ա Շ Ի Ի Ա Պ Ր Ա Ն Ա Յ Ի Մ Հ Ա Շ Ո Ւ Ո Յ Ս Ա Յ Մ Ի Չ Ա Ն Ձ Ի Ն Ք Ո Վ Յ Ա Ն Ձ Ն Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն Ա Ի

Վաճառականը՝ իւր հաշուոյն յանձնարարականաւ ծախուելու, կամ իբր առանդ ուրիշներու զրկած ապրանաց համար, «Ապրանք այսինչ անձին քով» ըսելով հաշիւ մը կը բանայ, կամ՝ եթէ զրկած ապրանքը միայն մէկ տեսակ ըլլայ, ըստ տեսակին ապրա-

նաց, կրնայ ըսել «Չուխաներս այսինչին ֆոլ», կամ «Անառներս այսինչին ֆոլ»։ Վասնզի ասորանքները չի ծախուած՝ չէր կրնար այն անձինքը, որոց ասորանք զրկած է, պարսական ընել։

Այս հաշիւները պարսական կ'ըլլան իրենց բուն արժէքին եւ եղած ծախուց գումարին չափ. եւ պահանջող՝ այնչափի համար, որչափ գնով որ ծախուի ասորանքը։

ՀԱՇԻԻ ԱՊՐԱՏԱՅ ԲԱԺԱՏՈՐԳԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՄԲ ԿԱՄ ԱՊՐԱՏԻ 1/2 Ի, 1/3 Ի, 1/4 Ի ՀԱՇՈՒՈՎ

Վաճառական մը՝ որ մէկ կամ մէկ քանի վաճառականաց հետ ընկերութեամբ գործ կ'ընէ, այն ատեն՝ սոյն գործողութեան համար զատ հաշիւ մը կը բանայ՝ վրան նշանակելով «Ապրանք բաժանորդական ընկերութեամբ, կամ ապրանք 1/2 ի հաշուով», եթէ ընկերութիւնը երկու բաժնով կազմուած ըլլայ՝ եւ ինքը մէկ բաժին ունենայ. 2/3 ի հաշուով՝ եթէ երեք բաժնով կազմուած ըլլայ եւ ինքն երկու բաժին ունենայ, եւայլն։

Հ Ա Շ Ի Ի Գ Ո Ր Ծ Ա Ր Ա Ն Ի

Գործարան ունեցող վաճառականը՝ անոր համար մասնաւոր հաշիւ մը կը բանայ, եւ պարսական կ'ընէ սոյն հաշիւը՝ նոյն գործարանին համար պէտք եղած գործիքներուն ծախուցը, հոն գործող մարդոց տուած ամսականին, եւ վերջապէս գործարանին համար ըրած ամեն տեսակ ծախուցը համար։ Իսկ պահանջող կ'ընէ՝ գործուած ասորանաց արժէքին համար։

Երբ այս հաշիւը գոցել ուզէ, (սօլտէ) մնացած գործիքներուն եւ նախնական նիւթոց համար նոյն հաշիւը պահանջող կ'ընէ, եւ մնացորդը շահ եւ զէնով կը գոցէ։

ՀԱՇԻԻ ԱՆՇԱՐԺ ՍՏԱՅՈՒԱԾՈՅ

Երբ վաճառական մը անշարժ ստացուածքներ ունենայ, կամ ստակով գնած եւ կամ մէկէ մը ժառանգած, այն ատեն զատ հաշիւ մը կը բանայ վերոյգրեալ անուամբ, քովը գրելով ստացուածքին տեսակը, այսինքն՝ եթէ տուն է՝ «Տուն ի Բերայ . . . . . փողոց թիւ . . . . .» եթէ հող է՝ «Գետին կամ հող . . . . .» եւայլն։

Այս հաշիւը պարսական կ'ընէ չէնք մը կամ գետին մը գնելու համար տուած գումարին, եւ ըրած ամեն ծախուցը համար, այսինքն՝ նորոգութիւն, տուրք, ասպնոյնգրութիւն եւայլն։ Իսկ պահանջող կ'ընէ՝ թէ եկամուտին եւ թէ ծախած եւ կամ տարւոյն վերջը հաշիւ տեսած ատեն՝ ունեցած արժէքին համար. մնացորդը կը գոցուի շահ եւ զէնով։

Հ Ա Շ Ի Ի Կ Ա Ր Ա Ս Ե Ա Յ

Վաճառատան համար պէտք եղած կարասիքը (գրասեղան, օթոռ եւայլն) գնած ատեն՝ եթէ քիչ արժէք ունեցող անշան բաներ ըլլան, Բնդիւնուր ծախուց հաշուոյն կ'անցնին, իսկ եթէ շատ արժէք ունեցող բաներ ըլլան՝ այն ատեն Հաշիւ կարասեաց անուամբ հաշիւ մը կը բանայ, եւ պարսական կ'ընէ զայն ըրած ծախուցը եւ նորոգութեանցը համար, եւ պահանջող՝ երբ ծախուելու ըլլայ։ Տարեկան հաշուոյ ատեն՝ նոյն կարասեաց օրուան արժէքը գնելով՝ մնացորդ գումարը շահ եւ զէնին կ'անցնի։

Հ Ա Շ Ի Ի Ն Ա Ի Ո Ի

Նաև ունեցող կամ գնող վաճառականը զատ հաշիւ մը կը բանայ նաևուն անունովը Հաշիւ . . . . . նաւու ըսելով։

Այս հաշիւը պէտք է պարսական ընել նաևուն համար տուած ստակին, մէջի կարասեաց, նաւաստեաց ամսականաց, ասպնոյնգրութեան եւ այլ ծախուց համար. իսկ պահանջող՝ հասցիքին, եւ ծախած ատեն բռնած արժէքին համար, եւ մնացորդը շահ եւ զէնով կը գոցուի։

Տարեկան հաշուելուի ատեն, Բնդիւնուր ապրանց պէս, նաևուն եւ կարասեացն օրուան արժէքը գնելու եւ մնացորդը շահ եւ զէնով գոցելու է. վասնզի նաևը ինչ գնով որ առած ըլլանք՝ տարի մը վերջը անշուշտ նոյն գինը չ'ընէր։

Հ Ա Շ Ի Ի Տ Օ Ն Ա Վ Ա Ճ Ա Ո Ի

Երբ վաճառականը տօնախաճառները ասորանք զրկելու ըլլայ ծախուելու համար, այն ատեն՝ տօնախաճառին անուամբը հաշիւ մը կը բանայ՝ Հաշիւ այսինչ solnalyanawhi ըսելով, եւ զայն պարսական կ'ընէ զրկած ասորանաց արժէքին եւ եղած ծախուցը համար, եւ պահանջող՝ վաճառատան արժէքին եւ չի ծախուելով եւս եկած ասորանացը համար, եւ մնացորդը՝ շահ եւ զէնով կը գոցուի։

### 3°. ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿՔ

Այս հաշուոյն կը վերաբերին բոլոր այն թղթերը՝ որոց փոխարէնը պիտի ստանանք. ինչպէս են վաճառականին՝ իւր թղթակցին վրայ քաշած եւ ընդունուած փոխանակագիրները, հրամանագիրները, տոմսակներն (պոնո) եւ այլն :

Այս հաշիւը պարսական կ'ըլլայ առնուած թղթոց համար, եւ պահանջող՝ տրուածներուն համար :

Սեղանաւորներն իբր ընդհանուր ապրանք կ'անցընեն այս թուղթերը, այսինքն՝ առած առեւնին ինչ գնով որ աւին՝ նոյն գնով պարսական կ'ընեն այս հաշիւը. եւ պահանջող՝ երբ ծախեն կամ վճարորին ստակն առնեն, առած գումարնուն չափ :

### 4°. ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՔ

Այս հաշուոյն կը վերաբերին վաճառականին ստորագրած տոմսակները, եւ իւր թղթակցաց՝ իր վրայ քաշած փոխանակագրերը :

Այս հաշիւը պահանջող կ'ըլլայ՝ երբ վերայիշեալ թղթերն ուրիշ տանք. եւ պարսական՝ երբ պայմանաժամին վճարելով զանոնք ետ առնենք :

### 5°. ՇԱՀ ԵՒ ԶԷՆ

Վաճառականն այս հաշուոյն միջոցաւ կը գիտնայ իւր ըրած տարեկան շահն ու փաստը: Այս հաշուոյն պարսին կողմը կ'անցնին եղած փաստները, եւ պահանջին կողմը՝ շահերը:

Ընդհանուր հաշուեկշռի առեն՝ եթէ պարտքին եւ սպահանջքին գումարներուն տարբերութիւնը պահանջող ըլլայ՝ եղած շահը կը ցուցընէ. իսկ եթէ պարտական՝ փաստը :

Շահ եւ զէնի հաշիւը Գրաւագրիսի հաշուով կը գոցուի :

### ՍՏՈՐԱՐԱԺԱՆՄՈՒՆՔ ՇԱՀ ԵՒ ԶԷՆԻ

Այս հաշիւը կրնայ այնքան ստորաբաժանիլ՝ որչափ որ շահ կամ փաստ ցուցընող հաշիւներ ըլլան :

Շահ եւ զէնի ստորաբաժանմանց զլիսաւորները հետեւեալներն են.

- 1°. Հաշիւ Ընդհանուր ծախուց .
- 2°. » Անձնական »
- 3°. » Տան »
- 4°. » Տոկոսի .
- 5°. » Յանձնարարականի .
- 6°. » Ժառանգութեան .
- 7°. » Մաքսի .

### ՀԱՇԻԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՈՒՑ

Այս հաշիւը պարսական կ'ըլլայ վաճառականութեան վերաբերեալ բոլոր ծախուց համար, այսինքն՝ վաճառատան վարձք, պաշտօնէից ամսականք, հրդեհի դէմ առաջնվագութիւն, պարգեւ, թղթատարի ծախք, եւ այլն :

Այս հաշիւը կը գոցուի շահ եւ զէնի հաշուով :

### ՀԱՇԻԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԽՈՒՑ

Վաճառականն իւր անձնական ծախքերը զիանալու համար՝ այս անուամբ հաշիւ մը կը բանայ, եւ պարսին կողմը կը գրէ ըրած բոլոր ծախքերը: Այս հաշիւն ալ շահ եւ զէնով կը գոցուի :

### ՀԱՇԻԻ ՏԱՆ ԾԱԽՈՒՑ

Ըստ վաճառականական օրինագրքին 5<sup>րդ</sup> յօդուածայն, վաճառականը պարտի՝ իւր տան ծախքն առանձին յայտնելու համար, այս անուամբ հաշիւ մը բանալ, եւ պարսին կողմը գրել տան վերաբերեալ բոլոր ծախքերը :

Այս հաշիւն եւս շահ եւ զէնով կը գոցուի :

### ՀԱՇԻԻ ՏՈԿՈՍԻ

Այս հաշուին պարսին կողմը կ'անցնին վաճառականին տուած տոկոսները, եւ պահանջին կողմը՝ առած տոկոսները: Այս ալ շահ եւ զէնով կը գոցուի :

ՀԱՇԻԻ ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ

Յանձնառուի մը համար այս հաշիւը շատ կարեւոր է, որով կը հասկընայ իւր յանձնարարականէն ըրած շահը :

Այս ալ շահ եւ զէնով կը գոցուի :

Հ Ա Շ Ի Ի Ժ Ա Ռ Ա Ն Գ Ո Ւ Թ Ե Ա Ն

Այս հաշիւն այն ատեն կը բացուի՝ երբ ժառանգութեան մը գործը կամաց կամաց եւ մաս առ մաս կարգադրուիլ հարկ ըլլայ . հետզհետէ տունուածներուն համար (ստակ, կարասիք, եւայլն) այդ հաշիւը պահանջող կ'ըլլայ, իսկ պարտական՝ եղած ծախուց, կտակաւ թողեալ սրբեւաց, եւ մեռնողին ունեցած սրբուցը համար :

Երբ այն ժառանգութեան բոլոր առնելիքներն առնուին եւ տալիքները տրուին, նոյն հաշուոյն մնացորդը կ'անցնի Դրամագլխին :

Հ Ա Շ Ի Ի Մ Ա Ք Ս Ի

Վաճառականք դուրսէն բերած ապրանաց համար՝ % այսչափ տէրութեան մաքսի տուրք կը վճարեն, ուստի այս անուամբ հաշիւ մը կը բանան եւ ապրանաց մաքսատուրքը, փոխադրութեան եւ մաքսի վերաբերեալ բոլոր ծախքերը այն հաշուոյն պարսփին կ'անցընեն :

Այս հաշիւն ալ շահ եւ զէնով կը գոցուի :

Մ Ա Ս Ն Ա Ւ Ո Ր Ա Յ Հ Ա Շ Ի Ի Ն Ե Ր

Ինչպէս պարզ-տոմարին՝ նոյնպէս նաեւ կրկնատոմարին մէջ վաճառականը՝ հետերնին գործ ըրած մարդոց համար զատ զատ հաշիւներ կը բանայ, որք պարտական կ'ըլլան առած ստակներուն կամ ապրանաց համար, եւ պահանջող՝ տուածներուն համար :

Այս հաշիւն ալ հետեւեալ ստորաբաժանմունքն ունի .

- 1°. Հաշիւ զանազան պարտականաց եւ պահանջատեարց .
- 2°. » մեր Պ. այսինչի .
- 3°. » » » » դրամագլխոյ .
- 4°. » » » » նակրորդութեան .
- 5°. » » » » ապրանաց .
- 6°. » սնանկացող եւ կասկածելի անձանց .

ՀԱՇԻԻ ԶԱՆԱԶԱՆ ՊԱՐՏԱԿԱՆԱՅ ԵՒ ՊԱՀԱՆՁԱՏԵԱՐՅ

Վաճառական մը երբ սկսի այնպիսի մարդոց հետ գործ ընելու, որոց հետ՝ չի կրնալով գիտնալ կանխաւ թէ շարունակ գործ պիտի ընէ թէ ոչ, փոխանակ անոնց համար զատ զատ հաշիւ բանալու, որն որ բաւական մեծ աշխատութիւն մ'է, դիւրութեան համար, Չանազան պարտական եւ պահանջատեարց անուամբ հաշիւ մը կը բանայ, եւ հետզհետէ ըրած գործողութիւնները հոն կ'արձանագրէ :

Հ Ա Շ Ի Ի Մ Ե Ր Պ. Ա Յ Ս Ի Ն Զ Ի Ն

Ընկերներ ունեցող վաճառականի մը կրկնատոմարին մէջ՝ ընկերաց անձնականին վերաբերեալ գործողութեանց համար զատ զատ հաշիւներ կը բացուին :

Այս հաշիւը պահանջող կ'ըլլայ իւր գրած դրամագլխոյն, եւ յետոյ բացէն ընկերութեան տուածներուն համար, եւ պարտական՝ ընկերութենէն ստացածներուն համար :

Տարեգլխոյն՝ գոյացած շահէն իր բաժնին համար պահանջող՝ եւ մասին համար պարտական կ'ըլլայ : Այս հաշիւն ալ կը գոցուի « Ելից կռով » :

Հ Ա Շ Ի Ի Մ Ե Ր Պ. Ա Յ Ս Ի Ն Զ Ի Դ Բ Ա Մ Ա Գ Լ Ի Ռ Յ Ն

Դրամագլուխն որոշեալ ընկերութեան մը անդամոց իւրաքանչիւրին համար այս անուամբ մասնաւոր հաշիւ մը կը բացուի :

Այս հաշիւը պարտական կ'ըլլայ ընկերաց զնելիք դրամագլխոց համար, եւ Դրամագլխոյ հաշիւը պահանջող : Եթէ ընկերներէն մին իւր բաժինը լրացընէ ապրանքով կամ զանազան թղթերով, իւր Դրամագլխոյ հաշիւը պահանջող կ'ըլլայ եւ տուածներուն հաշիւները (Ընդհանուր ապրանք կամ Ընդունելի տուսակի) պարտական կ'ըլլան, եւ այս կերպով իւր Դրամագլխոյ հաշիւը կը գոցուի :

Հ Ա Շ Ի Ի Մ Ե Ր Պ. Ա Յ Ս Ի Ն Զ Ի Ճ Ա Ն Բ Ո Ր Դ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ընկերութեան մը անդամներէն եւ կամ վաճառատան մը գործակալներէն մին՝ վաճառատան գործոց համար ճանրորդութիւն ըրած ատեն, վերոյգրեալ անուամբ հաշիւ մը կը բացուի, եւ ճանրորդին տրուած որեւէ գումարներուն համար նոյն հաշիւը պար-

սահման կ'ըլլայ, եւ փոխարէն յիշեալին զրկածներուն համար ալ պահանջող կ'ըլլայ :

Ի վերագործին այդ հաշիւը կը գոցուի, ճանբորդին բերած գումարով :

ՀԱՇԻԻ ԱՅՍԻՆՁԻՆ ԱՊՐԱՆԱՅ

Երբ վաճառական մը իւր թղթակիցներուն հետ թէ վաճառականական եւ թէ գրամական գործողութիւններ ընէ, այն ատեն, այդ երկու հաշիւներն իրարու հետ չի շիտթելու համար, զստ գոտ հաշիւներ կը բանայ իւրաքանչիւրին համար « Այսինչին ապրանսաց » կամ « Դրանախանի » հաշիւը ըսելով :

ՀԱՇԻՆ ՍԵԱՆԿԱՑՈՂ ԵՒ ԿԱՍԿԱՅԵԼԻ ԱՆՁԱՆՑ

Վաճառականն այս անուն հաշիւ մ'ալ կը բանայ իւր տետրակներուն մէջ, երբ տարեգլխոյն կամ ուրիշ ատեն՝ հաշիւ տեսած ժամանակ, իւր առնելիքներուն մէջ գտնէ այնպիսիներ՝ որոցմէ ստակ առնուիլը կասկածելի եւ կամ սնանկացողներ ըլլան. այն ատեն իւր ճիշդ շահը հասկընալու համար, զանոնք միւս ողջ առնելիքներէն զատելով՝ վերոյգրեալ անուամբ հաշուին կ'անցընէ, եւ եթէ անոնցմէ ստակ գալու ըլլայ, այդ հաշիւը պահանջող կ'ընէ :

Գլխաւոր եւ Մասնաւորաց հաշիւներէն զտո՝ Կրկնատոմարի մէջ ուրիշ հաշիւներ ալ կը գործածուին, որք առաջիններուն ստորաբաժանմունքը չ'ըլլալով առանձին հաշիւներ են. եւ Կրկնատոմարի մէջ անպատճառ պէտք է բանալ այս հաշիւները, որք են.

- 1<sup>o</sup>. Հաշիւ դրանազիտոյ
- 2<sup>o</sup>. » ելից կշոտոյ
- 3<sup>o</sup>. » մեից »

Հ Ա Շ Ի Ի Գ Ր Ա Մ Ա Գ Լ Խ Ո Ց

Դրամագլուխը վաճառականին ունեցած ստացուածքը կամ հարստութիւնն է, որոյ միջոցաւ գործի կը ձեռնարկէ :

Դրամագլուխ ըսելով պէտք է հասկընալ վաճառականին գոյքը՝ ունեցած պարտքերը իջնալէ վերջը :

Զորօրինակ՝ դիցուք թէ Պօղոս վաճառականն ունի	10000 ոսկի
Փոխարէն պարտք ունի	5000 »
Ըսել է թէ ունեցած զուտ հարստութիւնը	7000 ոսկի է.

հետեւարար այս է Պօղոսին դրամագլուխը :

Ինչպէս որ քիչ մ'առաջ ըսինք, Դրանազիտոյ հաշիւը խիստ կարեւոր է տետրակներուն մէջ. վասնզի սա վաճառականին անձնական հաշիւն է, որով տարուէ տարի կրնայ հասկընալ իւր վիճակը :

Երբ մէկը վաճառականութեան սկսի՝ պէտք է որ գրած գրամագլխոյն համար այս հաշիւը պահանջող ընէ. նաեւ տարեգլխոյն գոյացած շահուն եւ մէկէ մը ստացած ժառանգութեանը համար: Այս հաշիւը պարտական կ'ըլլայ մեծ կորուստ մը կամ վնաս մը եղած ատեն :

Կրկնատոմարի տետրակները (Օրհաշիւ, Մայր-հաշիւ) նախ Դրամագլխի հաշուովը կ'սկսին. այս հաշիւը ընդհանուր հաշուելիութեան կը գոցուի, ու նորէն կը բացուի մնացորդը ի նոր հաշիւ փոխադրուելով :

Երբ Դրամագլխոյ հաշուոյն պահանջքին գումարը պարտքէն շատ ըլլայ՝ մնացորդը պահանջող կ'ըլլայ. այսինքն քիչ մ'առաջ տրուած օրինակին վրայ խօսելով, Պօղոս 10000 ոսկի ունէր, որն որ Դրամագլխոյ հաշուոյն պարտքին գումարն է, եւ 5000 ոսկի պարտք՝ որն որ նոյն հաշուոյն պարտքին գումարն է, ըսել է թէ մնացորդ 7000ը պահանջող է. իսկ ընդհակառակը՝ երբ պարտքին գումարը պահանջքէն շատ ըլլայ, այսինքն՝ պարտքին գումարը ըլլայ 15000 եւ պահանջքինն ըլլայ 10000 այն ատեն ըսել է թէ 5000 նոյն վաճառականը իւր դրամագլուխը կորսնցընելէն ետեւ 5000 ոսկի բաց մը ունի, որ ատեն այդ վաճառականը սնանկութեան վիճակի մէջ կ'ըլլայ :

Եթէ « Ելից » եւ « Մեից կշոտոյ » վրայ հոս խօսելու ըլլայինք, անշուշտ ուսանողը բան մը չ'պիտի հասկընար, ինչու որ անոնց վրայ կատարեալ գաղափար մ'ունենալու համար՝ տակաւին ուրիշ կարեւոր զիտելիքներ յառաջագոյն պէտք է զիտնալ. ուստի յարմարագոյն դատեցինք զանոնք իրենց պատշաճ տեղը դնել :

### Գ Լ Ո Ի Խ Գ .

ԿՐԿԵԱՏՈՄԱՐԻ ՄԷՋ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՏԵՏՐԱԿՆԵՐ

Կրկնատումարի մէջ գործածուած տետրակներն երկուքի կը բաժնուին. « Գլխաւոր » եւ « Երկրորդական » տետրակներ :

### Գ Լ Խ Ա Ի ՈՐ Տ Ե Տ Ր Ա Կ Ն Ե Ր

Կրկնատումարի մէջ գործածուած գլխաւոր տետրակներն են.

- 1°. ՕՐ Հ Ա Շ Ի Ի .
- 2°. Մ Ա Յ Ր - Հ Ա Շ Ի Ի .

### ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՏԵՏՐԱԿՆԵՐ (1)

Գլխաւոր տետրակներէն զտա, վաճառականը պէտք է ունենայ ուրիշ կարգ մը տետրակներ ալ, որոց մէջ կը գրէ այնպիսի մանրամասնութիւնք, որոց միշտ զիմեւը պէտք կ'ունենայ. այս տետրակներուն կ'ըսուի « Երկրորդական տետրակներ » եւ հետեւեալներն են .

- 1°. Ձեռաստի .
- 2°. Գնման տետր .
- 3°. Վաճառման տետր .
- 4°. Մքերագիր կամ Մքերաստի .
- 5°. Տետր արձանագրութեան ընդունելի տուական .
- 6°. » » վճարելի »
- 7°. Դրամարկի տետր .
- 8°. Հաշուարկի »
- 9°. Տետր նամակաց ընդօրինակութեան .
- 10°. Տետր զանազան պարտականաց .
- 11°. Տետր կանխիկ վաճառման .

(1) Որովհետեւ բնական է պարզէն բաղադրեալն անցնիլ միանգամայն և զիւրին, ուստի առաջին անգամ պիտի խօսինք երկրորդական տետրակներուն վրայ և նոցա ձեռքը մի առ մի պիտի շինենք, որպէսզի աւելի ընդարձակ տեղեկութիւն պահանջող, այսինքն՝ Օրհաշիւ և Մայր-հաշիւ տետրակներուն վրայ խօսած ատեննիս՝ սոյն նախնական ծանօթութիւնները ստացած ըլլանք :

### Ձ Ե Ռ Ա Տ Ե Տ Ր

Ձեռաստեարը պարզապէս թղթէ կարուած կամ հաստատ կազմուած տետրակ մ'է (1), որուն ամեն անգամ զիմեւը հարկ կ'ըլլայ՝ երբ Օրհաշիւն յօդուածներէն մէկուն մանրամասնութեանցը մէջ սխալ մը սարգի: Ուստի կը խրատենք զվաճառականը կամ իւր տոմարակալը՝ որ հին Ձեռաստեարները մէկ քանի տարի պահէ :

Ձեռաստեարին մէջ կը գրուին, պարզ եւ որոշ կերպով, վաճառականին ըրած ամեն տեսակ գործողութիւնները, այսինքն՝ ապրանոց կանխիկ եւ ապառիկ զնումն ու վաճառումը, տոմսակաց վճարումը, ընդունուած եւ վճարուած փոխանակագրերը, մէկու մը զրկուած ապրանքները, վերջապէս վաճառականութեան ամեն տեսակ գործողութիւնները, առանց բացառութեան :

Ձեռաստեարին մէջ ամեն անձանց անունը պէտք է որոշակի գրել իւր յատուկ անուամբն ու տեղւոյն անունովը. առ այս խիստ ուշադրութիւն ընելու է, վասնզի կը պատահի շատ անգամ որ՝ վաճառական մը միեւնոյն անուամբ այսինքն՝ Պօղոս Յակոբեան անունով երկու մարդոց հետ (բայց մէկը Պօլսեցի միւսը Տրապիզոնցի) գործողութիւններ ընելով, մէկուն հաշիւը սխալմամբ միւսին հաշուոյն անցնի, որով սխալ գրութիւնք տեղի կ'ունենան, զորս շուկելը շիթութիւն եւ ժամանակի կորուստ կը պատճառէ :

Այս տետրին մէջ ամեն գործողութիւն իւր կարեւոր պարագայներովը պէտք է արձանագրել, այսինքն՝ եթէ ապրանքի վերաբերեալ ըլլայ՝ ըստ տեսակին, կշիւը, գոյնը, հակին կամ պարկին թիւը եւ մարքան, եւ այլն . եթէ տոմսակ կամ փոխանակագիր ըլլայ՝ թուականը, քաշողին անունը, պայմանաժամը, եւ այլն :

Ձեռաստեարը՝ ինչպէս նաեւ միւս տետրակները սկսուած ատեն, պէտք է ճակատը գրել վաճառականին անունը, ըրած գործը, բնակութիւնը եւ այլն . նաեւ բոլոր տետրակներուն ետին թղթի կտորի մը վրայ տետրակին անունը գրելով փակցընելու է. երբեմն այդ տեսակ տետրակներուն ետին արդէն տպեալ թղթեր գրուած կ'ըլլան :

Ձեռաստեարին յօդուածները յՕրհաշիւ անցընելէ վերջը՝ Ձեռաստեարին լուսանցքին քով պէտք է գրել « անցած » բառը, որն որ կը ցուցնէ թէ՛ նոյն յօդուածը Օրհաշիւն անցած է :

Ձեռաստեարի մը յօդուածներն երկու տեսակի կրնան բաժնուիլ . Պարզ եւ Բաղադրեալ :

(1) Կազմուածը նախապատիւ համարելու է, ինչու որ թղթէ պղտի տետրակ մը շատ անգամ կորսուելու կամ պատռուելու ենթակայ է :



Պարզ յողուածներն անոնք են՝ որոց մէջ պարտականը կամ պահանջողը միայն մէկ հատ կ'ըլլայ . իսկ բաղադրեալներն անոնք են՝ որոց մէջ պարտականը կամ պահանջողը մէկէն աւելի կ'ըլլայ: Բաղադրեալ յողուած մը յՕրհաշիւ անցընելու համար՝ եթէ պարտականները մէկէն աւելի ըլլան՝ ԶԱՆԱԶԱՆՔ, իսկ եթէ պահանջողները՝ ԶԱՆԱԶԱՆԱՑ բառերը գործածելու է:

Զեռատետրին յողուածները յՕրհաշիւ փոխադրելու համար, վաճառական մը կամ տոմարակալ մը կրնայ զանազան համառօտադրութիւններ ընել: Զորօրինակ, Զեռատետրի մը մէջ կը կարդանք Յունուար 10 թուականաւ չորս յողուած, որք պարունակեն զանազան չորս անձերու սպառիկ վաճառումներ. ուստի այս տեսակ յողուածները տոմարակալ մը յՕրհաշիւ անցուցած ժամանակ կրնայ մէկ յողուածի մը վերածելով գրել, այսպէս  
ԶԱՆԱԶԱՆՔ ԸՆԳՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆԱՑ:

Դարձեալ կը կարդանք Յունուար 15 թուականաւ հինգ յողուածներ, որք պարունակեն հինգ անձերէ առնուած ստակներ, իրենց հաշուոյն համար. այս յողուածներն ալ դարձեալ ի մի վերածելով կրնանք գրել, այսպէս  
ԴՐԱՄԱՐԿՂ ԶԱՆԱԶԱՆԱՑ:

Այսչափ մը խօսելէ վերջը, սկսինք այժմ երկու ամսուան գործողութիւններ պարունակող կանոնաւոր Զեռատետր մը գրել: Իւրաքանչիւր յողուածին տակ խնդրոյն լուծումը հարց պատասխանով դրած ենք, ի դիւրութիւն ուսանողին:

Խնդրոց լուծումը չի դժուարացընելու համար՝ յողուածները կարելի եղածին չափ պարզ կերպով գրեցինք. եւ որպէսզի ուսանողն աւելի լաւ հասկընայ խնդրոյն բուն իմաստը, ամեն յողուածին լուսանցքին քով խնդրոյն բովանդակութիւնը պարունակող դիտողութիւն մը աւելցուցած ենք, որով ուսանողը պիտի կարենայ ըստ այնմ դիւրաւ լուծանել զանոնք:



# Ձ Ե Ռ Ա Տ Ե Տ Ր

## ԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԻ

Ի Կ. Պօլիս Զիւմպիլիի խան բիւ 61.

ՍԿՍԵԱԼ Ի 1 ՅՈՒՆՈՒԱՐԷ, ԶԿԵՐՁ ՓԵՏՐՈՒԱՐ 1876 ՏԱՐԻՈՑ

		1 Յունիւ 1876		
ԿԱԶՄՈՒՓՈՒԹԻՒՆ ԳՐԱՄԱՐԿՅՈՒՄ	ԱՆՅԱՆ	Վաճառականութեան սկսելով՝ անտուկս դրի իբր դրամագլուխ հազար լիրա Օսմանեան . . . . .	100000	—
		<p>Հարց. Ո՞ր հաշիւն առաւ . Պատասխան. Դրամարկղը, որովհետեւ անտուկը ստակ մտաւ: Հ. Ո՞ր հաշիւը տուաւ . Պ. Վաճառականը, բայց Դրամագրուի անուամբ:</p> <p style="text-align: center;"><b>Ըսել է թէ՛ Օրհաշուոյն մէջ պիտի գրենք</b></p> <p>ԴՐԱՄԱՐԿՂ (պարտին գործեալ) ԴՐԱՄԱՐԿՅՈՒՄ</p>		
		Նոյն		
ԿԱԶՄՈՒՓՈՒՄ ԳՐԱՄԱՐԿՅՈՒՄ	ԱՆՅԱՆ	Գնուած կանխիկ հետեւեալ կարասիները . Գրասեղան մը, մամուլ մը, եւայլն . . . . .	1000	5000
		Քացա մը . . . . .	2000	
		<p>Հ. Ո՞ր հաշիւն առաւ . Պ. Կարասեաց հաշիւը: Հ. Ո՞ր հաշիւը տուաւ . Պ. Դրամարկղը:</p> <p style="text-align: center;"><b>Ուստի Օրհաշիւը կը գրենք</b></p> <p>ԿԱՐԱՍԻՔ ԴՐԱՄԱՐԿՅՈՒՄ</p>		
		6 Յունիւ.		
ԿԱՆԵՔԻԿ ԳՆՈՒՄՆ ԳՐԱՄԱՐԿՅՈՒՄ	ԱՆՅԱՆ	Գնուած կանխիկ Տ. Եւ Կ. Գարակէօղեան Աղաներէն 2 հակ պատմա, թիւ 108—109 ընդամենը 500 ծրար. գին . . . . .	90=45000	55500
		1 հակ ճերմակ մատամբօլ թիւ 110 100 ծրար. գին . . . . .	85= 8500	
		<p>Հ. Ո՞ր հաշիւն առաւ . Պ. Ընդհանուր ապրանք: Հ. Ո՞ր հաշիւը տուաւ . Պ. Դրամարկղը:</p> <p style="text-align: center;"><b>Ուստի Օրհաշիւը կը գրենք</b></p> <p>ԸՆԳՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ ԴՐԱՄԱՐԿՅՈՒՄ Փոխադրելի . . . . .</p>	156500	—

		Փոխադրեալ.....	156500
		4 Յունվ. 76	
ՊԱՆՏՈՒՄԸ ԱՊՐԱՆՍԻ ԱՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՅ	Անշն	Գնուած Սթօնման Տօլինկերէն 5 պարկ խաւ- ուէ, թիւ 4—8, 240 հօխա. գին 18 զրուշ. փո- խարէն տրուած թիւ 1 իր/հ իմ տոմսակս, վճա- րելի ամսոյս 51ին .....	4520
		Հ. Ո՞ր հաշիւն առաւ . Պ. Ընդհանուր ապրանքը : Հ. Ո՞ր հաշիւը տուաւ . Պ. Վճարելի տոմսակը :	
		Որովհետեւ ընդհանուր ապրանքն աւել- ցաւ, եւ վճարելի տոմսակ մ'ելաւ մենէ՛, ուստի Օրհաշիւը կը գրենք	
		ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ ԱՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՅ	
		8 Յունվ.	
ԿԱՆԻՒԿ ԱՎՃԱՆՈՒՄԸ ԱՊՐԱՆՍԻ	Անշն	Ծախուած կանխիկ Յակօր Ներսէսեան Տրա- պիզոնցիին պատմա 200 ծրար. գին 95 զրուշ.	19000
		Հ. Ո՞ր հաշիւն առաւ . Պ. Գրամարկը : Հ. Ո՞ր հաշիւը տուաւ . Պ. Ընդհանուր ապրանքը :	
		Ուստի Օրհաշիւը կը գրենք	
		ԳՐԱՄԱՐԿՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՍԻ	
		9 Յունվ.	
ՎԱՃԱՆՈՒՄԸ ԱՊՐԱՆՍԻ ԸՆԴՊՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՅ	Անշն	Ծախուած Յովհաննէս Մանիսալեան Էնկիւր- ցիին հետեւեալները , 150 ծրար պատմա. գին ..... 98=14700 50 » ճերմակ մատամբօլ. գին 90= 2700 Փոխարէն առնուած թիւ 51, իմ/հ իւր տոմ- սակը, վճարելի փետրուար 9ին.....	17400
		Հ. Ո՞ր հաշիւն առաւ . Պ. Ընդունելի տոմսակը : Հ. Ո՞ր հաշիւը տուաւ . Պ. Ընդհանուր ապրանքը :	
		Ուստի Օրհաշիւը կը գրենք	
		ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՍԻ	
		Փոխադրելի.....	197220

		Փոխադրեալ... ..	197220
		16 Յունվ. 76	
ՊԱՆՏՈՒՄԸ ԱՎՃԱՐԵԼԻ	Անշն	Պանք Օթօմանին տուի լիւրա Օսմանեան Էրկու հարիւր, տարեկան 6 % տոկոսով .....	20600
		Հ. Ո՞ր հաշիւն առաւ . Պ. Պանք Օթօմանը : Հ. Ո՞ր հաշիւը տուաւ . Պ. Գրամարկը :	
		Ուստի Օրհաշիւը կը գրենք	
		ՊԱՆՏՈՒՄԸ ԳՐԱՄԱՐԿՂԻՆ	
		20 Յունվ.	
ՊԱՆՏՈՒՄԸ ԱՎՃԱՐԵԼԻ	Անշն	Գնուած Գարրիէլ Պօղոսեանէն 2 սնտուկ Պէն- կալի լեղակ, թիւ 7, 10, 220 քիլօ. գին 90 զրու- շէն. վճարելի յաւաջիկայ ամսոյն 26ին.....	19800
		Հ. Ո՞ր հաշիւն առաւ . Պ. Ընդհանուր ապրանքը : Հ. Ո՞ր հաշիւը տուաւ . Պ. Գարրիէլ Պօղոսեան :	
		Ուստի Օրհաշիւը կը գրենք	
		ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ ԳԱՐՐԻԷԼ ՊՕՂՈՍԵԱՆԻ	
		22 Յունվ.	
ՊԱՆՏՈՒՄԸ ԱՎՃԱՐԵԼԻ	Անշն	Ծախուած Կարնեցի Յ. Գրիգորեանին 1 սնտուկ Պէնկալի լեղակ, թիւ 7, 110 քիլօ. գին 95=10250 Փոխարէն տուաւ 5 աակաւ Սենեկալի խէժ. թիւ 198—202. գին.....2046	10250
		Վերոյգրեալ խնդիրը լուծելու համար՝ խնդրոյն առաջին պարբերութիւնն առնե- լով պիտի գրէինք .	
		Յ. ԳՐԻԳՐԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՍԻ	
		Որովհետեւ ապրանքն առաւ եւ չի վճա- րեց. իսկ երկրորդ պարբերութիւնն առ- նելով պիտի գրէինք գարձեալ	
		ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ Յ. ԳՐԻԳՐԵԱՆԻ	
		Որովհետեւ ապրանք առինք եւ փոխա- րէն բան մը չի տուինք իրեն: Արդ՝ ինչպէս	
		Փոխադրելի.....	247250

	Փոխադրեալ.....	247250	
	որ կը տեսնուի, Յ. Գրիգորեան տառը-նոյն մէջ պարսական խոյ վերջնոյն մէջ պահանջող եղաւ, հետեւաբար իւր հաշիւը կը գոցուի. եւ երկու կողման Յ. Գրիգորեանները ջնջելով՝ կը մնայ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՍ, որն որ աւելի կարճ եւ սարզ եղանակն է:		
	26 Յունիլ.		
Անշտ	Գարրիէլ Պօղոսեան ստակի պէտք ունենալուն՝ իրեն ունեցած սարտքս վճարեցի հետեւեալ կերպով. Կանխիկ վճարեցի.....19505 Զեղչ 1 1/2 % մէկ ամսուան համար..... 297	19800	
	Հ. Ո՞ր հաշիւն առաւ. Պ. Գարրիէլ Պօղոսեան : Հ. Ո՞ր հաշիւները տուին . Պ. Դրամարկդ ու Շահ և Զէն : Ուստի Օրհաշիւը կը գրենք հետեւեալ կերպով ԳԱՔՐԻԷԼ ՊՈՂՈՍԵԱՆ ԶԱՆԱԶԱՆԱՅ ԴՐԱՄԱՐԿՂԻՆ. տուած կանխիկ ստակս .19505 ՇԱՀ ԵՒ ԶԷՆԻՆ. վար գրած զեղչս..... 297		
	Նոյն		
Անշտ	Գնուած կանխիկ կիրխացի Մէհմէտ Էֆէնտիէն թիւ 70—79, տասը սարկի ընտիր աճառ, ընդամենը 800 հօխա զուտ. գին 4 զրուշ.....	5200	
	Հ. Որ հաշիւն առաւ . Պ. Ընդհանուր ապրանքը : Հ. Որ հաշիւը տուաւ . Պ. Դրամարկդը : Ուստի Օրհաշիւը կը գրենք ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ ԴՐԱՄԱՐԿՂԻՆ 27 Յունիլ.		
Անշտ	Ծախուած կանխիկ Իզմիրցի Յակոբ Պօղոսեանին հետեւեալները.		
	Փոխադրելի.....	270250	

ՎՃԱՐՈՒՄՆ ԶԵՂՉՈՎ  
ԿԱՆՔԻՆ ԳՆՈՒՄՆ ԱՊՐԱՆՔ  
ԿԱՆՔԻՆ ԿԱՆՔՈՒՄՆ ԱՊՐԱՆՔ

	Փոխադրեալ.....	270250	
	5 սրկ՝ աճառ թիւ 70-74, 595 հ. գին 4 5/4 = 1876 1/4 1 » խահուէ » 4, 46 » » 18 1/2 = 851 2727 1/4 Զեղչ 5 % կանխիկ տալուն համար 81 3/4	2645	20
	Վերոյգրեալ գործողութեան մէջ թէեւ տուած ապրանքնիս 2727 1/4 ի էր, սակայն 81 3/4 զեղչելուն համար՝ մնացեալ 2645 1/2 զրուշը կ'ըլլայ նոյն ապրանք զուտ արժէքը. հետեւաբար Դրամարկդը նոյնչափի համար պէտք է սարտական ընել :		
	Հ. Ո՞ր հաշիւն առաւ . Պ. Դրամարկդը : Հ. Ո՞ր հաշիւը տուաւ . Պ. Ընդհանուր ապրանքը : Ուստի Օրհաշիւը կը գրենք ԴՐԱՄԱՐԿՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ 29 Յունիլ.		
Անշտ	Զեղչելով ծախու առի Մարգար Տատրեան սեղանաւորէն հետեւեալ փոխանակագրերը. Թիւ 78 փոխանակագիր ի վերայ Բ. Դրամառուսուֆի, ի 12 փեարուար..... 5400 Թիւ 104 փոխանակագիր ի վերայ Ա. Դրամառ Նիկոյի յ 2 Մարտ ..... 4600 Փոխարէն վճարեցի կանխիկ..... 9800 Վար գրած զեղչս ..... 200	10000	
	Հ. Որ հաշիւն առաւ . Պ. Ընդունելի տոմսակք : Հ. Ո՞ր հաշիւները տուին . Պ. Դրամարկդ ու Շահ և Զէն : Ուստի Օրհաշիւը կը գրենք ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿՔ ԶԱՆԱԶԱՆԱՅ ԴՐԱՄԱՐԿՂԻՆ. Տուած ստակս..... 9800 ՇԱՀ ԵՒ ԶԷՆԻՆ. վար գրած զեղչս..... 200		
	Փոխադրելի.....	282895	20

ԳՆՈՒՄՆ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿՔ

	Փոխադրեալ.....	282895	20
	<u>50 Յունվ. 76</u>		
ՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՆ	Անշ-- Հօրեղբայրս Գրիգոր Անդրէասեան՝ փոխ տուաւ ինձ 200 լիրա Օսմանեան, առանց տոկոսի, վճարելի մէկ ամիս վերջը. փոխարէն տուի իրեն տոմսակ մը վճարելի ի 1 Մարտ.....	20000	
	Հ. Ո՞ր հաշիւն առաւ . Պ. Դրամարկդ : Հ. Ո՞ր հաշիւը տուաւ . Պ. Վճարելի տոմսակը :		
	<b>Ուստի Օրհաշիւը կը գրենք</b> ԳՐԱՄԱՐԿՂ ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՆ		
	<u>51 Յունվ.</u>		
ՎՃԱՐՈՒՄՆ ԾԱԽԹՑ	Ամսոյս մէջ ըրած զանազան ծախքերս վճարեցի հետեւեալ կերպով. Վաճառատանս պաշտօնէից ամսական եւ մանր ծախքեր .....	400	
	Տան ծախուցս համար.....	600	
	Անձնական ծախուցս համար .....	500	1500
	Հ. Ո՞ր հաշիւներն առին . Պ. Ընդհանուր ծախք, Տան ծախք, Անձնական ծախք : Հ. Ո՞ր հաշիւը տուաւ . Պ. Դրամարկդ :		
	<b>Ուստի Օրհաշիւը կը գրենք</b> ԶԱՆԱԶԱՆԻ ԳՐԱՄԱՐԿՂԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽԹ..... 400 ՏԱՆ » ..... 600 ԱՆՁՆԱԿԱՆ » ..... 500		
	<u>1 Փետր.</u>		
ՎՃԱՐՈՒՄՆ ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՆ	Անշ-- Պայմանաժամը լրացեալ թիւ 1 տոմսակս վճարեցի	4520	
	Հ. Ո՞ր հաշիւն առաւ . Պ. Վճարելի տոմսակը : Հ. Ո՞ր հաշիւը տուաւ . Պ. Դրամարկդ :		
	<b>Ուստի Օրհաշիւը կը գրենք</b> ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԻ ԳՐԱՄԱՐԿՂԻՆ		
	Փոխադրելի.....	308515	20

	Փոխադրեալ.....	508515	20
	<u>1 Փետր. 76</u>		
ՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՆՏՐՈՒՄԻՆ	Անշ-- Պանք Օթօմանէն առի 50 լիրա .....	5000	
	Հ. Ո՞ր հաշիւն առաւ . Պ. Դրամարկդ : Հ. Ո՞ր հաշիւը տուաւ . Պ. Պանք Օթօման :		
	<b>Ուստի Օրհաշիւը կը գրենք</b> ԳՐԱՄԱՐԿՂ ՊԱՆՏՐՈՒՄԻՆ		
	<u>2 Փետր.</u>		
ՎՃԱՐՈՒՄՆ ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՆ	Անշ-- Կարին Գրիգոր Մըլըրեանին զրկեցի հետեւեալ ասրանքները, իմ հաշուոյս 2 % յանձնարարականաւ կանխիկ ծախուցաւ համար. 100 ծրար պատմաւ. գին 93 = 9500 20 » ձերմ. մտմբօլ » 88 = 1760 Թ. 75-76. 2 սրկ՝ աճառ 158 հ. » 4 1/2 = 711	11971	
	Հ. Ո՞ր հաշիւն առաւ . Պ. Գրիգոր Մըլըրեանի քով ասրանք : Հ. Ո՞ր հաշիւը տուաւ . Պ. Ընդհանուր ասրանք :		
	<b>Ուստի Օրհաշիւը կը գրենք</b> Գ. ՄԸՍԸՐԵՍՆԻ ԲՈՎ ԱԳՐՈՒՄԻ ԸՆԴՀ. ԱԳՐՈՒՄՆ		
	Որովհետեւ առանց ասրանքները ծախած ըլլալու չէինք կրնար Գրիգոր Մըլըրեանը պարտական ընել, եւ սրկէս զի զրկած այս ասրանքներնէս ինչ շահ ընելիքնիս գիտնանք. ուստի ասոր համար զստ հաշիւ մը կը բանանք եւ կը ըսենք ԳՐԻԳՈՐ ՄԸՍԸՐԵՍՆԻ ԲՈՎ ԱԳՐՈՒՄԻ,		
	<u>9 Փետր.</u>		
ՎՃԱՐՈՒՄՆ ԸՆԴՀԱՆՈՒՄԻՆ ՏՈՄՍԱԿԱՆ	Անշ-- Պայմանաժամն այսօր լրացեալ՝ Յովհաննէս Մանխալեանի տոմսակին զուամբը զանձեցի :	17400	
	Հ. Ո՞ր հաշիւն առաւ . Պ. Դրամարկդ :		
	<b>Փոխադրելի.....</b>	542886	20

ԲԱՅՈՒՄՆ ՎԱՐՈՒՄ	Փոխադրեալ.....	542886	20
	<p>Հ. Ո՞ր հաշիւը տուաւ .</p> <p>Պ. Ընդունելի տոմսակր :</p> <p><b>Ուստի Օրհաշիւը կը գրենք</b></p> <p>ԳՐԱՄԱՐԿՂ, ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՑ</p> <p>10 ֆեւր .</p>		
	<p>Այնքան աղա իջորասանճեան 5000 զրուչ տուաւ ինձ կարին տան մը վրայ իրեն վարկ մը բանալու համար, որուն սուրի վարկագիրը մը Գրիգոր Մըսըրեանի վրայ . . . . .</p> <p>Հ. Ո՞ր հաշիւն առաւ .</p> <p>Պ. Դրամարկղ :</p> <p>Հ. Ո՞ր հաշիւը տուաւ .</p> <p>Պ. Գրիգոր Մըսըրեան :</p> <p><b>Ուստի Օրհաշիւը կը գրենք</b></p> <p>ԳՐԱՄԱՐԿՂ, ԳՐԻԳՈՐ ՄԸՍՐԵԱՆԻ</p> <p>12 ֆեւր .</p>	5000	—
	<p>Պայմանաժամն այսօր լրացեալ Ք. Գարսեուսուֆի փոխանակագիրը գանձեցի . . . . .</p> <p>Հ. Ո՞ր հաշիւն առաւ .</p> <p>Պ. Դրամարկղ :</p> <p>Հ. Ո՞ր հաշիւը տուաւ .</p> <p>Պ. Ընդունելի տոմսակր :</p> <p><b>Ուստի Օրհաշիւը կը գրենք</b></p> <p>ԳՐԱՄԱՐԿՂ, ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՑ</p> <p>Նոյն</p>	5400	—
<p>Պանք Օթօմանին առնուած 50 լիրա Օսմանեան</p> <p>Հ. Ո՞ր հաշիւն առաւ .</p> <p>Պ. Դրամարկղ :</p> <p>Հ. Ո՞ր հաշիւը տուաւ .</p> <p>Պ. Պանք Օթօման :</p> <p><b>Ուստի Օրհաշիւը կը գրենք</b></p> <p>ԳՐԱՄԱՐԿՂ, ՊԱՆԻ ՕԹՕՄԱՆԻՆ</p>	5000	—	
<p>Փոխադրելի.....</p>	556286	20	

ՆՈՒՆՁՈՒՄՆ ԳՐԱՄԱՐԿՂԻՍ	Փոխադրեալ.....	556286	20
	<p>16 ֆեւր. 76</p> <p>Այնքան Հօրեղբորորդիս ամուսնանալուն համար իրեն սուրի իբր պարգեւ 10 լիրա . . . . .</p> <p>Հ. Ո՞ր հաշիւն առաւ .</p> <p>Պ. Դրամարկղ :</p> <p>Հ. Ո՞ր հաշիւը տուաւ .</p> <p>Պ. Դրամարկղ :</p> <p><b>Ուստի Օրհաշիւը կը գրենք</b></p> <p>ԳՐԱՄԱՐԿՂԻՍ ԳՐԱՄԱՐԿՂԻՆ</p> <p>Թէեւ ստակը Հօրեղբորորդիս առաւ, բայց նորէն չ'պիտի տայ, այլ իբր նուէր իրեն տուինք. եւ որովհետեւ այս ստակը մեր գործէն դուրս հանեցինք, ուստի Դրամարկղը պարտական կ'ընենք .</p> <p>20 ֆեւր .</p>	1000	—
	<p>Այնքան կարին զրկած տպրանացս վաճառման հաշիւը ստացայ, որ է հետեւեալը .</p> <p>100 ծրար պատմա, գին 100 = 10000</p> <p>20 ծրար ճերմ. մատամբուլ » 90 = 1800</p> <p>Թ. 75-76. 2 պրկ' աճառ 156 հ. » 5 = 780</p> <p>12580</p> <p>Իւր յանձնարարականը 2 % . . . . . 250</p> <p>12550</p> <p>Զուտ գումարը իր քովը կը մնայ .</p> <p>Հ. Ո՞ր հաշիւն առաւ .</p> <p>Պ. Գրիգոր Մըսըրեան :</p> <p>Հ. Ո՞ր հաշիւը տուաւ .</p> <p>Պ. Գրիգոր Մըսըրեանի քով պարանք :</p> <p><b>Ուստի Օրհաշիւը կը գրենք</b></p> <p>Գ. ՄԸՍՐԵԱՆ Գ. ՄԸՍՐԵԱՆԻ ԳՈՎ ԱՊՐԱՆԱՑ</p> <p>Նոյն</p>		
	<p>Պանք Օթօմանին զրկեցի 500 լիրա Օսմանեան, ընթացիկ հաշուով . . . . .</p> <p>Փոխադրելի.....</p>	50000	—
<p>Փոխադրելի.....</p>	599616	20	

	Փոխադրեալ.....	399616	20
	Հ. Ո՞ր հաշիւն առաւ . Պ. Պանք Օթօման : Հ. Ո՞ր հաշիւը տուաւ . Պ. Դրամարկը :		
	<b>Ուստի Օրհաշիւը կը գրենք</b>		
	ՊԱՆԻ ՕԹՕՄԱՆ    ԳՐԱՄԱՐԿՂԻՆ		
	29 Փետր. 76		
Անյոս	Պանք Օթօմանէն ընթացիկ-հաշիւն ստացայ օրով 526 դրուչ իմ հաշուոյն ի նպաստ տոկոս աւելցած է .....	526	—
	Հ. Ո՞ր հաշիւն առաւ : Պ. Պանք Օթօման : Հ. Ո՞ր հաշիւը տուաւ . Պ. Շահ և գէն :		
	<b>Ուստի Օրհաշիւը կը գրենք</b>		
	ՊԱՆԻ ՕԹՕՄԱՆ    ՇԱՀ ԵՒ ԶԷՆԻՆ		
	Նոյն		
Անյոս	Վճարեցիք հետեւեալ ամսական ծախքերս . Սենեակին պաշտօնէից ամսական, եւայլն    600 Տան ծախուցս համար .....    400 Անձնական ծախուցս համար .....    500	1500	—
	Հ. Ո՞ր հաշիւներն առին . Պ. Ընդհանուր ծախք, Տան ծախք, Անձնական ծախք : Հ. Ո՞ր հաշիւը տուաւ . Պ. Դրամարկը :		
	<b>Ուստի Օրհաշիւը կը գրենք</b>		
	ՁԱՆԱԶԱՆԻ    ԳՐԱՄԱՐԿՂԻՆ		
	ԸՆԳՀԱՆՈՒՐ ԾԱԽԻ    .....    600		
	ՏԱՆ    »    .....    400		
	ԱՆԶՆԱԿԱՆ    »    .....    500		
		401242	20

ՏՈԿՈՍ  
ՊԱՆԻ ՕԹՕՄԱՆ

ՎՃԱՐՈՒՄԸ  
ԾԱԽՈՒՑ

**Գ Ն Մ Ա Ն Տ Ե Տ Ր**

Գնման տետրին մէջ կը գրուին սուրբներէ առնուած ապրանաց հաշուեցուցերուն ընդօրինակութիւնը, ըսել է թէ այս տետրին մէջ գրելիքնիս պիտի ըլլան Չեռաստետրին այն յօդուածները, որք ապրանաց գնումն պարունակեն :

Երբ հաշուեցոյց մը շատ տեսակ նիւթեր պարունակէ՝ այն ստեն այն մանրամասնութիւններն այս տետրին մէջ գրուելով, նոցա հաւաքական գումարը միայն Օրհաշիւը կ'անցնի :

Գնման տետրին մէջ հաշուեցոյցներն ընդօրինակելու ստեն պէտք է գրուի՝ ապրանքը տուողին կամ զրկողին անունը . հակաց կամ անտուկներուն թիւն ու մարքան : պայմանաժամը կամ վճարօրը . իւրաքանչիւր ապրանաց քանակութիւնը եւ տեսակը, նոյնպէս նաեւ գինը ծախքերը եւայլն :

Այս կերպը՝ այսինքն, իւրաքանչիւր հաշուեցուցի զատ զատ ընդօրինակութիւնը խիստ երկար ըլլալուն, շատ վաճառական՝ ստացած հաշուեցուցերին այս անուն տետրակին մէջ փակցընելով կը շատանան :

Գնման տետրին իւրաքանչիւր ամսոյ գումարը պէտք է հաւասար ըլլայ Մայր-հաշուին մէջ բացուած Ընդհանուր ապրանաց հաշուոյն նոյն ամսուան պարտքին գումարին :

Յունուար ամսոյ գնմանց հաւաքական գումարը՝ (91050) որ հաւասար է Մայր-հաշուին մէջ բացուած Ընդհանուր ապրանաց հաշուոյն Յունուար ամսոյ պարտքին գումարին հետ :

Ահա կ'սկսինք շինել երկու ամսուան գործողութեանց գնման տետրը, Չեռաստետրնու գնման վերաբերեալ յօդուածներն առնելով :

**Վ Ա Ճ Ա Ռ Մ Ա Ն Տ Ե Տ Ր**

Այս տետրին վրայ կը գրուին գանադաններու ծախուած ապրանաց համար արուած հաշուեցուցերուն ընդօրինակութիւնը : Ըսել է թէ գրելիքնիս պիտի ըլլան Չեռաստետրին մէջ վաճառումն պարունակող յօդուածները :

Վաճառման տետրին ալ իւրաքանչիւր ամսոյ գումարը հաւասար պէտք է ըլլայ Մայր-հաշուին մէջ Ընդհանուր ապրանաց համար բացուած հաշուոյն պահանջքին գումարին . ինչպէս որ յունուար ամսոյ մէջ ծախուած ապրանաց գումարը, որ է 49275 1/2 դր . եւ յունուար ու փետրուար ամիսներուն մէջ ծախուած ապրանաց գումարը, որ է 61246 դրուչ 20 փարս, հաւասար է Մայր-հաշուին Ընդհանուր ապրանաց պահանջքին գումարին հետ :

Ուստի կ'սկսինք շինել մեր երկամսեայ գործողութեանց վաճառման տետրը, Չեռաստետրին մէջ վաճառման հաշիւներն առնելով :

ԳՆՄԱՆ ՏԵՏՐ

<u>4 Յունվ. 1876</u>			
ՊԱՀԱՆՁԵՆ Տ. և Կ. ԳԱՐԱԿԷՉԵԱՆ			
Իրենց այսօրուան հաշուեցուցին համար, վճարեալ կանխիկ.			
Թիւ 108. մէկ հազար պատմա, 250 ծրար. զին 90	22500	—	
» 109. » » » 250 » » 90	22500	—	
» 110. » » ճերմակ 100 » » 85	8500	—	55500
<u>6 Յունվ.</u>			
ՊԱՀԱՆՁԵՆ ՍԹՕՀՄԱՆ և ՏՕԼԻՆԿԷՐ			
Իրենց այսօրուան հաշուեցուցին համար, վճարեալ իմ տոմսակաւս 25 օրէն.			
Թիւ 4—8. 5 պարկ խաչուէ, 240 հօխա. զին 18			4520
<u>20 Յունվ.</u>			
ՊԱՀԱՆՁԷ ԳԱՐԻԻԷԼ ՊՕՂՈՍԵԱՆ			
Իւր այսօրուան հաշուեցուցին համար, վճարելի յառաջիկայ ամսոյն 26 ին.			
Թիւ 7. 1 սնա՞ Պէնեկալի լեղակ 108 թիւ. զին 90	9720	—	
» 10. 1 » » » 112 » » 90	10080	—	19800
<u>22 Յունվ.</u>			
ՊԱՀԱՆՁԷ Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ			
Իւր այսօրուան հաշուեցուցին համար, վճարեալ 1 սնաուկ լեղակով.			
Թիւ 198—202. 5 սիւս՝ Սենեկալի խէժ. զին 2046			10250
<u>25 Յունվ.</u>			
ՊԱՀԱՆՁԷ ՄԷՀՄԷՏ ԷՅԷՆՏԻ ԿԻՐԻՏՅԻ			
Իւր այսօրուան հաշուեցուցին համար, վճարեալ կանխիկ.			
Թիւ 70—79. 10 պարկ աճառ, 800 հօխա. զին 4			5200
			91050

ՎԱՃԱՌՄԱՆ ՏԵՏՐ

<u>8 Յունվ. 76</u>			
ՊԱՐՏԻ ՅԱԿՈՒՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ			
Իմ հաշուեցուցիս համար, վճարեալ կանխիկ. 200 ծրար պատմա. զին..... 95			19000
<u>9 Յունվ.</u>			
ՊԱՐՏԻ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՆԻՍԱԼԵԱՆ			
Իմ հաշուեցուցիս համար, վճարեալ իւր տոմսակաւք 31 օրուան.			
150 ծրար պատմա. զին..... 98	14700	—	
50 » ճերմակ. » ..... 90	2700	—	17400
<u>22 Յունվ.</u>			
ՊԱՐՏԻ Յ. ԳՐԻԳՈՐԵԱՆ			
Իմ հաշուեցուցիս համար, վճարեալ 5 տակառ Սենեկալի խէժով.			
Թիւ 17. 1 սնաուկ լեղակ, 110 թիւօկ. զին 95			10250
<u>27 Յունվ.</u>			
ՊԱՐՏԻ ՅԱԿՈՒՐ ՊՕՂՈՍԵԱՆ			
Իմ հաշուեցուցիս համար, վճարեալ կանխիկ.			
Թիւ 70—74. 5 պրկ՝ աճառ, 595 հօխ. զին 4 <sup>3</sup> / <sub>4</sub>	1876	10	
» 4 1 » խաչուէ, 46 » » 18 <sup>1</sup> / <sub>2</sub>	851	—	
	2727	10	
5 օ/ո զեղչ կանխիկ տալուն համար.....		81	50
			2645 20
<u>2 Փետր.</u>			
ՊԱՐՏԻ Գ. ՄԵՍԵՐԵԱՆԻ ԲՈՎ ԱՊՐԱՆԲ			
Այսօրուան զրկած ապրանքներս, իմ հաշուոյ յանձնարարականաւ ծախուելու համար.			
100 ծրար պատմա. զին..... 95	9500	—	
20 » ճերմակ. » ..... 88	1760	—	
Թիւ 75, 76. 2 պարկ աճառ, 158 հօխ. զին 4 <sup>1</sup> / <sub>2</sub>		711	—
			11971
			61246 20

Մ Թ Ե Ր Ա Տ Ե Տ Ր

Մեծաքանակ ծախող վաճառականաց համար անհրաժեշտ է այս տետրը, յորում կը գրուին հետզհետե՛ գնուած ու ծախուած ապրանքները, որով ուզուած Ժամանակ կրնայ հասկըցուիլ մթերանոցը պատրաստ եղած ապրանաց որքանութիւնը :

Այս տետրին միջոցաւ վաճառականը կրնայ գիտնալ նաեւ իւրաքանչիւր ապրանաց ինչ գին առած եւ ինչ գնով ծախած, սակից առած եւ որո՞ւ ծախած ըլլալը :

Այս տետրակին ձեւը, ըստ տեսակի գործոյն, կրնայ փոփոխութիւններ կրել :

Մթերագրին վրայ, տետրակին երկու երեսը մէկտեղ բացուելով, պէտք եղած զիծերը քաշելէ յետոյ, (ինչպէս վարը կը տեսնուի) ձախ կողմի երեսին վրայ Մոսք, եւ աջին վրայ Ելի գրելէ վերջը, եկած ապրանքները ձախ երեսին վրայ, այսինքն՝ Մոսքին կողմը. իսկ ելածները Ելին կողմը նշանակելու է : Բայց կրնայ ըլլալ որ ապրանք մը մէկ քանի անգամէն ծախուի, վասն որոյ ելքին կողմը աւելի գծեր ձգելու է, որովս զի կարենայ բոլոր ելքերը պարունակել :

Ասկէ կը հետեւի թէ՛ Մթերատետրը երբէք չի յարմարիր փոքրաքանակ ծախող վաճառականաց, զեղազործներու եւ մանրա-

Մ Ո Ւ Տ Բ Ա Պ Ր Ա Ն Ա Յ

Թուական	Թիւ	Քանակութիւն	Տեսակ ապրանաց	Գին	Վաճառող	Տեղի	
1876							
Յունվ.	4	108-109	500	Ծրար պասմա	90	Տ. Եւ Կ. Գ.	Ի Կ. Պօլիս
»	»	110	100	Ծրար ճերմ. մոմբօլ	85	Տ. Եւ Կ. Գ.	Ի Կ. Պօլիս
»	6	4-8	240	Հօխա խահուէ	18	Սթօզ՝ Տօլինկէր	Ի Կ. Պօլիս
»	20	7, 10	220	Բիլօ Պէնկոյի լեղակ	90	Գ. Պօղոսեան	Ի Կ. Պօլիս
»	22	198-202	5	Տկա՝ Սենեկալի խէժ	2046	Յ. Գրիգորեան	Ի Կ. Պօլիս
»	26	70-79	800	Հօխ. աճառ կրկտէի	4	Մէհմէտ էֆէնտի	Ի Կիրիտ

Մ Թ Ե Ր Ա Տ Ե Տ Ր

Ե Լ Բ Ա Պ Ր Ա Ն Ա Յ

վաճառաց (ինչպէս Պօն Մարշի), որք զանազան տեսակ ապրանքներէ միշտ մաս առ մաս ծախելուն՝ անոնց ամենուն գրութեանը համար քանի մը գրողիւր պէտք կ'ըլլայ: Ուստի աւելի լաւ կ'ըլլայ այդ տեսակ գործոց համար հաւատարիմ, աչալուրջ եւ լաւ հսկող մարդիկ գործածել :

Եթէ այս տետրակը քիչ մ'աւելի ընդարձակ բռնուի, այսինքն՝ պայմանաժամը եւ ուրիշ կարեւոր տեղեկութիւնները գրուին, այն ատեն Գնման եւ Վաճառման տետրակներուն պէտքը չ'ըզգացուիր :

Մթերատետրին վրայ, ի հարկին, իւրաքանչիւր ապրանաց համար զատ տեղ կրնայ բացուիլ, այսինքն՝ շաքարի, աճառի եւայլն. եւ ասոնց Մոսքին ու Ելիը աւանձինն ընել, առանց միւսներուն հետ շփոթելու :

Ահա մեր երկամսեայ գործողութեանց Մթերատետրը :

Տ Ե Տ Ր Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ը Ն Դ Ո Ւ Ն Ե Լ Ի Տ Ո Մ Ս Ա Կ Ա Յ

Վաճառականն այս տետրին մէջ կ'ընդօրինակէ բոլոր ընդունելի տոմսակներն ու փոխանակագրերը. իսկ այն վաճառատանց մէջ՝ ուր աւելի փոխանակագրի գործեր կ'ըլլան, այս տետրին « Traites et Remises » անունը կուտան :

Այս տետրակին մէջ կրնան անցնիլ նաեւ որոշեալ օր մը վճարելի հաշուեցոյցներ :

Թուական	Թիւ	Քանակութիւն	Տեսակ ապրանաց	Գին	Գնող	Տեղի	
1876							
Յունվ.	8	—	200	Ծրար պասմա	95	Յ. Ներսէսեան	Ի Տրապիզօն
»	9	—	150	»	98	Յ. Մանիսալեան	Ելիքիւրիւ
Փետր.	2	—	100	»	95	Գ. Մըսրեան	Ի Կարին
Յունվ.	9	—	50	» ճերմկ. մոմբօլ	90	Յ. Մանիսալեան	Ելիքիւրիւ
Փետր.	2	—	20	»	88	Գ. Մըսրեան	Ի Կարին
Յունվ.	27	4	46	Հօխա խահուէ	18 1/2	Յակոբ Պօղոսեան	Ելիքիւր
Յունվ.	22	7	110	Բիլօ Պէնկոյի լեղակ	95	Յ. Գրիգորեան	Ի Կ. Պօլիս
Յունվ.	27	70-74	595	Հօխա աճառ	4 5/8	Յ. Պօղոսեան	Ելիքիւր
Փետր.	2	75-76	158	»	4 1/2	Գ. Մըսրեան	Ի Կարին



Այս տետրը 12 մասի բաժնուած է, իւրաքանչիւրը տարւոյն մէկ ամսոյն սեղհականեալ, եւ բաժնուած է 9 սիւներու, որք կը ցուցնեն 1<sup>o</sup>. Տոմսակաց թիւը, 2<sup>o</sup>. Մտից թուականը, 3<sup>o</sup>. Տոմսակը ստորագրողը կամ (եթէ փոխանակազիր է) քաջողը, 4<sup>o</sup>. Տոմսակին վերջին փոխանցողը (ճիւր), 5<sup>o</sup>. Վճարողին անունը, 6<sup>o</sup>. Վճարման տեղը, 7<sup>o</sup>. Վճարօրը, 8<sup>o</sup>. Գումարը, 9<sup>o</sup>. Ծանօթութիւն. այսինքն թէ՛ օրին դանձեցիւք, չէ թէ մէկու մը ծախեցիւք:

Տոմսակ մը կամ փոխանակազիր մը արձանագրելու համար՝ նախ տոմսակին քանի օրուան ըլլալը գիտնալէ վերջը, վճարօրը որ ամսոյն մէջ որ իյնայ՝ նոյն ամսոյն մէջ սէտք է արձանագրել: Օրինակի համար, Յունուար 15ն 61 օրուան տոմսակ մը ունինք, զոր արձանագրելու համար հաշուեցինք եւ գտանք որ վճարօրը Մարտ 1ին կ'իյնայ. ուստի Մարտ ամսոյն մէջ կ'արձանագրենք:

ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԻ ՓԵՏՐՈՒԱՐ ԱՄՍՈՅ

Թիւ	Թուական	Քաջող կամ պարտական	Փոխանցող	Ընդունող կամ վճարող	Տեղի վճարման վայրը	Գումար	Մասնուած կամ Գանձուած
1	1876 Յունվ.	9 Բ. Գարաեուսուֆ	Պ. Թիւրիեան	Յ. Մանիսալեան	Կ. Պօլիս	9 17400	Գանձուած
2	»	12 Յ. Մանիսալեան	Մ. Տատրեան	Բ. Գարաեուսուֆ	»	12 5400	»

ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԻ ՄԱՐՏ ԱՄՍՈՅ

3	1876 Փետր.	2 Նիկօ Խայիմ	Մ. Տատրեան	Ավրամ Նիկօ	Ղալամիս	2 4600	
---	------------	--------------	------------	------------	---------	--------	--

Յունուար, Ապրիլ եւ միւս ամսոց համար զատ սիւն չի բացինք, վասն զի այս ամսոց մէջ լրանալիք թուղթ չ'ունէինք մեր շինած Զեռատետրին մէջ:

Իւրաքանչիւր ամսոց գործողութեան համար սէտք է մէկ մէկ երես բանալ:

ՏԵՏՐ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՍՑ

Վաճառականն այս տետրին մէջ պարտի ընդօրինակել իւր բոլոր վճարելի տոմսակները, որպէս զի գիտնայ թէ ամսոյն այսինչ օրը այսչափի գումար մը ունի վճարելիք. եւ ըստ այնմ պատրաստու-

թիւն տեսնելով իւր վարկին տրատ մը չի բերէ: Ասոր մէջ ալ կրնան գրուիլ որոշեալ օր մը վճարելի հաշուեցոյցները:

Այս ալ Ընդունելի տոմսակաց արձանագրելին պէս՝ 12 մասի բաժնուած եւ իւրաքանչիւրը տարւոյն մէկ ամսոյն յատկացած է: Եթէ սիւներ կը սարուակէ: որք կը ցուցնեն 1<sup>o</sup>. Տոմսակաց դասակարգութեան թիւը, 2<sup>o</sup>. Քաջուած կամ ընդունուած օրը, 3<sup>o</sup>. Քաջողին կամ սարտականին անունը. 4<sup>o</sup>. Որու հրամանին ըլլալը, 5<sup>o</sup>. Վճարօրը, 6<sup>o</sup>. Տոմսակին կամ փոխանակազիրին գումարը, 7<sup>o</sup>. Ծանօթութիւն, այսինքն՝ վճարեալ ըլլալը յիշատակել:

Վճարելի տոմսակ մը արձանագրելու համար՝ նախ սէտք է տոմսակին քանի օրուան ըլլալը հասկընալ. եւ հաշուելով գիտնալ թէ՛ նոյն օրը որ ամսոյն մէջ կ'իյնայ. յետոյ նոյն ամսոյն մէջ արձանագրելու է: Զորօրինակ, Մարտ 8 էն 61 օրէն վճարելի տոմսակ մը չինեցի, զոր կ'ուզեմ արձանագրել. հաշիւ ըրի եւ գտայ որ Մայիս 8ին 61 օրը կը լրանայ, ըսել է թէ՛ Մայիս ամսոյն մէջ կուգայ վճարօրը, հետեւաբար նոյն ամսոյն մէջ կ'արձանագրեմ:

Ակսինք այժմ շինել մեր երկամսեայ գործողութեանց մէջ ունեցած վճարելի տոմսակաց Արձանագրութեան տետրը:

ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԻ ՅՈՒՆՈՒՄԱՐ ԱՄՍՈՅ

Թիւ	Թուական	Քաջող կամ պարտական	Հրաման	Վայրը	Գումար	Մասնուածիւն
1	1876 Յունուար	6 Տոմսակ	Ս. Տօլինկէր	31	4320	Վճարեալ 1 Փետր.

ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԻ ՄԱՐՏ ԱՄՍՈՅ

2	1876 Յունուար	30 Տոմսակ	Գ. Արշակեան	1	30000	
---	---------------	-----------	-------------	---	-------	--

Փետրուար, Ապրիլ եւ մնացեալ ամսոց մէջ վճարելիք տոմսակ չ'ունենալնուս՝ անոնց համար սիւն չի բացինք:

Իւրաքանչիւր ամսոց գործողութեան համար մէկ մէկ երես բանալու է:

ԳՐԱՄԱՐԿՂ ՅՈՒՆՈՒԱՐ ԱՄՍՈՅ

Մ Ո Ւ Տ Ք

Ե Լ Ք

1876				
Յունվ.	1	Դրած դրամադրուխա .....	100000	—
»	8	Կանխիկ ծախք .....	19000	—
»	27	» » .....	2645	20
»	30	Հօրեղբորմէս փոխ առածս .....	20000	—
			141645	20

1876				
Յունվ.	1	Գնած զանազան կարասեացս համար .....	5000	—
»	6	Տ. և Կ. Գարակէօղեանի հաշուեցոյցը վճարուած ...	55500	—
»	16	Պանք Օթօմանին վճարուած .....	20000	—
»	26	Մէհմէտ էֆէնտի հաշուեցոյցը վճարուած .....	5200	—
»	26	Գ. Պօղոսեանի վճարուած .....	19505	—
»	29	Մարգար Տատրեանի վճարուած .....	9800	—
»	31	Վաճառատանս զանազան ծախքերը վճարուած .....	1500	—
			51542	20
			( ճշգրտեալ )	
			141645	20

ԳՐԱՄԱՐԿՂ ՓԵՏՐՈՒԱՐ ԱՄՍՈՅ

Մ Ո Ւ Տ Ք

Ե Լ Ք

1876				
Փետր.	1	Մնառկը պատրաստ դրամ .....	51542	20
»	1	Պանք Օթօմանէն առնուած .....	5000	—
»	9	Յ. Մանիսալեանի տոմսակին գումարը ...	17400	—
»	10	Գ. Մըսթրեանին վրայ բացած վարկս ..	5000	—
»	12	Բ. Գարաեուսուֆի փոխանակագրին գումարը .....	5400	—
»	12	Պանք Օթօմանէն առնուած .....	5000	—
			67142	20

1876				
Փետր.	1	Թիւ 1 տոմսակ վճարեցի .....	4520	—
»	16	Հօրեղբորորդւոյս նուէր .....	1000	—
»	20	Պանք Օթօմանին .....	50000	—
»	29	Զանազան ծախք վաճառատան .....	1500	—
			50522	20
			( ճշգրտեալ )	
			67142	20

ՏԵՏՐ ԳՐԱՄԱՐԿՂԻ

Վաճառականութեան մէջ Դրամարկղի տետրը շատ կարեւոր է, և պէտք է որ խիստ ճշգրտութեամբ գրուի:

Այս տետրին երկու երեսը մէկտեղ բացուելով ձախ երեսին վրայ կը գրուի Մոսֆ, և աջ երեսին վրայ Ելֆ: Մոսֆին կողմը կը գրուին սնտուկը մտած բոլոր ստակները, օրուան թուականներով և պէտք եղած բացատրութեամբ. իսկ Ելֆին կողմը՝ որեւէ պատճառաւ սնտուկէն ելած ստակները:

Որոշեալ ժամանակի մը մէջ, զբօրինակ՝ շաբթի շաբաթ, կամ ամսէ ամիս պէտք է Սնտուկին հաշիւը նայիլ սյսինքն՝ Մոսֆին և

Ելֆին գումարներն ընելով մնացորդը գտնալ և զայն բաղդատել սնտուկը պատրաստ գտնուած ստակին հետ. ճիշդ եղած ատեն՝ մնացորդը Ելֆին կողմը գրելով երկու գումարները հաւասարեցնել, զոյգ գիծ քաշելով հաշիւը գոցել. մնացորդը փոխադրել Մուսքին կողմը, հետեւեալ օրուան թուականը զնելով, և գրել « Սնտուկը պատրաստ դրամ » (տես մեր Սնտուկին տետրակը):

Վերը՝ թէեւ շաբաթը կամ ամիսն անգամ մը սնտուկին հաշիւը նայելու է ըսինք, բայց ստակի տուր և առ շատ ընող վաճառատան սնտուկը բռնողը կը խրատենք որ՝ ամեն օր առաւօտուն կամ իրիկունը Սնտուկին փորձն ընէ, վասն զի նոր օխալ մը գիւրին է գանել բայց երբ օրեր անցնին վրայէն՝ այն ատեն շատ դժուար

խուզարկութեամբ կը գտնուի որ շատ անգամ Մնտուկը բռնողին տաղտուկ եւ յուսահատութիւն կը սլատճառէ . երբեմն ալ սխալը գտնել գրեթէ անկարելի կ'ըլլայ :

### ՀԱՇՈՒԸՆԹԱՅԻ ՏԵՏՐ

Առաջին մասին մէջ հաշուընթացին վրայ պէտք եղած տեղեկութիւնները տուինք :

Շատերու հետ ընթացիկ-հաշիւ ունեցող վաճառականը՝ անոնց համար զատ տետրակ մը կը յատկացընէ Հաշուընթացի տետր անուամբ, եւ հետզհետէ նոցա հետ ըրած գործողութիւններն իրենց թուականներովը յատուկ տետրերին կը գրէ :

Ընթացիկ-հաշուոյն համար պէտք եղած դժերն այս տետրին մէջ գծելէ վերջը, հետեւեալ կերպով կը գրուի .

### ԸՆԹԱՑԻԿ-ՀԱՇԻԻ ԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ԸՆԴ ՊԱՆՔ ՕԹՕՍԱՆԻ

Տոկոս 12 % սարեկան, դադարեալ 29 Փետր. 1876

Պ Ա Ր Տ Ի

Պ Ա Հ Ա Ն Ջ Է

1876						1876					
Փետր.	1	50	Առած ստակա . . .	28	1400	Յունվ.	15	200	Տուած ստակա . . .	45	9000
»	12	30	» » . . .	17	510	Փետր.	20	300	» » . . .	9	2700
			Կշիւ թուոց . . . . .		9790			3	26	Տոկոս վասն 9790	
			Մնացորդ պահնչք							Թուոց	
			գոր կանցընեմք ի								
			նոր հաշիւ								
					14700	1876				503	26
						Մարտ	1	423	26	Հին հաշուէն	
											14700

### ՏԵՏՐ ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒԹԵԱՆ ՆԱՄԱԿԱՑ

Այս տետրը՝ օրինաց պահանջած տետրակներէն մին ըլլալով, վաճառականութեան մէջ խիստ անհրաժեշտ է . ասոր մէջ պէտք է ընդօրինակել վաճառականին իւր թղթակիցներուն գրած նամակները, մէկու մը զրկած հաշուեցոյցները եւ վաճառման եւ հաշիւները :

Հին ատենը նամակաց ընդօրինակութիւնը գրաւոր կերպով կ'ըլլար, բայց այսօր առ այս շինուած մամուլին միջոցաւ կ'ըլլայ, շուտ եւ դիւրին :

Նամակաց օրինակի տետրը նոյնպէս նաեւ թանաքը յատկապէս շինուած կը ծախուին, տետրակը կը պարունակէ բարակ եւ թափանցիկ թղթեր, որպէս զի մեկնը թղթին շուտով անցնի եւ գրերն երեւան :

Որ եւ է նամակ մ'ընդօրինակելու համար՝ տետրին աջ կողմի թղթին ետին ծծուն թուղթ դնելով զայն թրջել պէտք է բարակ վրձիւնով մը . յետոյ նոյն երեսին վրայ ալ ծծուն թուղթ մը դնելով՝ տետրակը գոցէ . վերջը նորէն բանալով՝ առջի ծծուն թուղթը հանէ եւ տեղը նամակը դիր . յետոյ տետրակը գոցէ եւ մամուլին տակ սեղմէ :

Գործածութիւնն աւելի լաւ կը ցուցընէ ըսածնիս :

### ՏԵՏՐ ԶԱՆԱԶԱՆ ՊԱՐՏԱԿԱՆԱՑ

Արդէն խօսեցանք թէ վաճառական մը՝ որուն գործը գլխաւորաբար զանազան տեղացի շատ մը մարդոց հետ ապառիկ գործեր ընելու վրայ կայանայ, փոխանակ յիշեալ անձանց լուրաբանչիւրին համար զատ զատ հաշիւներ բանալով իւր Մայր-հաշուին հաշիւները շտապընելու, անոնց ամենուն մէկէն, «Զանազան պարտականք» անուն հաշիւ մը կը բանայ եւ հետզհետէ ըրած գործողութիւնները հոն կ'արձանագրէ :

Սակայն նոյն հաշուոյն վրայ նայած ատեն չի կրնար գիտնալ թէ Պօղոսը կամ Յակոբը մրջափ սլարաք ունի, ուստի ուրիշ տետրակ մը կը յատկացընէ Մայր-հաշուին ձեւով, այսինքն՝ տետրակին երկու երեսը մէկտեղ բանալով կը գրէ ձախ կողմը պարտի եւ աջ կողմը պահանջի, վրան մարդուն անունը, անունն տակը կարգի թիւ մը, ըրած գործողութիւնները, այսինքն՝ ծախած ապրանքները պարտիս, իսկ առած ստակները պահանջիս կողմը :

Այս տետրին կ'ըսուի Տետր զանազան պարտականաց :

Ըսածնիս աւելի լաւ հասկցընելու համար՝ հոս կը շինենք նոյն տետրին մէկ սլարի օրինակը :

ՏԵՏՐ ԶՍՆԱԶՍՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՑ

ԱՌԱՔԵԼ ԱԼՔՈՒՆԵԱՆ ՇԱՊԻՆԳԱՐԱԶԻՍԱՐՅԻ

ՊԱՐՏԻ				ԹԻԻ 1				ՊԱՀԱՆՁԷ			
1876				1876				1876			
Յունվ.	1	Առած ասրնքը	1000	Մարտ	8	Տուած ստակը	1000				
»	29	»	1500	»	31	»	500				
Մարտ	2	»	500			Մնցրդ" պրաքը	1500				
			5000				5000				

ՄԿՐՏԻՉ ՖԷՐՄԱՆԵԱՆ ԿԱՐՆԵՅԻ

ՊԱՐՏԻ				ԹԻԻ 2				ՊԱՀԱՆՁԷ			
1876				1876				1876			
Յունվ.	13	Առած ասրնքը	5050	Ապրիլ	10	Տուած ստակը	1000				
»	30	»	1000	»	30	»	1500				
						Մնցրդ" պրաքը	1550				
			4050				4050				

ՏԵՏՐ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՄԱՆՑ

Այն վաճառատանց մէջ՝ ուր ասրանքները մաս առ մաս կը ծախուին, կանխիկ ծախուածներուն կարեւոր մանրամասնութիւնները պարունակելու համար « Կանխիկ վաճառանաց տեսակ » անունով տետրակ մը կը գործածուի, եւ հետզհետէ եզած կանխիկ գործողութիւններն այս տետրին մէջ կը գրուին :

Իւրաքանչիւր օրուան կամ ամսոյ կանխիկ ծախուց գումարը Մնասուկը, եւ անկէ Օրհաչիւր կ'անցնի :

Ահաւասիկ Կանխիկ վաճառանաց տետրակի մը ձեւը :

ՏԵՏՐ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՄԱՆՑ

1 Յունվ. 1876											
10	ճրար պատմա, 502 մէթրո.	գին.....	5	906	—						
2	» մատամբօլ, թիւ 150.	» .....	95	190	—						
10	մէթրօ սեւ սաթէն.	» .....	8	80	—						
								1176			
2 Յունվ.											
20	եարտա սեւ լահօրաքի.	գին. ....	15	260	—						
5	զյոյ բամբակ դուլա.	» .....	10	50	—						
100	մէթրօ տամասքօ պատմա.	» .....	5	500	—						
								810			
5 Յունվ.											
5	ճրար պատմա 145 մէթրօ.	գին.....	4	580	—						
105	եարտա ֆանէլա.	» .....	8	840	—						
5	տուզինա թաչիկնակ.	» .....	20	60	—						
								1480			
4 Յունվ.											
48 1/2	եարտա բամբակ սաթէն սեւ.	գին 2 7/8		159	20						
41	» բուրդ ֆանէլա.	» 7		287	—						
12	ճրար պատմա, 562 մէթրօ.	» 2 1/2		905	—						
								1531 20			
5 Յունվ.											
6	ճրար ճերմակ մոմբօլ, թիւ 250.	գին 85		510	—						
4	» պատմա ճերմակ, 120 մէթրօ.	» 2 1/4		270	—						
1	» բրդեայ ֆանէլա, 40 եարտ.	» 7		280	—						
								1060			
8 Յունվ.											
2	ճրար սեւ լահօրաքի, 80 եարտա.	գին 14		1120	—						
5	» ճերմ. մատամբօլ, թիւ 250.	» 85		425	—						
								1545			

ՀՐԱՆԱԳԹ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՏԵՏՐԱԿԱՑ

Երկրորդական տետրակներուն ձեւերը ցուցնելէ վերջը՝ հրահանգներ չի դրինք, միայն թէ ասոնց հրահանգը պիտի ըլլայ, Տոմարակալութեան վերջը դրած Ձեռատետրին, յորմէ աչակերտը իւրաքանչիւր տետրակին վերաբերեալ յօդուածներն առնելով պիտի շինէ երկրորդական տետրակները :

ԳԼԽԱԻՈՐ ՏԵՏՐԱԿՆԵՐ

Օ Ր Հ Ա Շ Ի Ի

Այս տետրակին մէջ՝ որն որ հաստատուն կերպով կազմուած է, վաճառականը կ'ընդօրինակէ, որոշ եւ յստակ կերպով, Ձեռատետրին բոլոր յօդուածներն իրենց կարեւոր մանրամասնութիւններովն, այսինքն՝ գնուած ու ծախուած սպրանսաց տեսակը, քանակութիւնը, գինը, ծախողին ու գնողին անունը. վերջապէս ինչ որ Ձեռատետրը կը պարունակէ նոյնը Օրհաշուին մէջ արձանագրելու է, վասնզի օրինաց պահանջած տետրակը այս ըլլալուն՝ դատաստանի առջեւ ասոր կարեւորութիւն կը տրուի:

Օրհաշուին մէջ գործողութեան մը տարւոյն թուականը դիւրաւ գտնելու համար՝ Օրհաշուին ամեն երեսին առաջին յօդուածին վրայ ամսաթիւէն ետքը տարւոյն թուականը պէտք է գրել. վասնզի քիչ գործողութիւն ընող վաճառականի մը Օրհաշուին մէջ, որն որ մէկ քանի տարուան գործողութիւններ կը պարունակէ, երբ՝ առանց տարւոյն թուականը գրուած ըլլալու, յօդուածի մը որ տարւոյն վերաբերիլը գիտնալ ուղենք, այն ատեն պէտք է որ նոյն տարւոյն մինչեւ յունուար ամիսն երթանք, որպէսզի տեսնենք հոն տարւոյն թուականը:

Բ. գլուխին մէջ ըսինք որ կրկնատումարի Օրհաշուին իւրաքանչիւր յօդուածին մէջ ՊԱՐՏԱՅԻՍՆ մը եւ ՊԱՀԱՆՁՈՂ մը կ'ըլլայ. այս պարտական եւ պահանջող անունները խոշոր գրերով գրելու է, յօդուածին միւս մասերէն զատուելու եւ աչքի չուտով զարնելու համար: Նաեւ պարտական եւ պահանջող անձանց բնակած քաղաքնին ալ իրենց քով նշանակելու է, երբ միեւնոյն անուամբ ու մականուամբ երկու անձինք գտնուին:

Օրհաշուին ինքնին երկու սիւներ կը պարունակէ գումարներու համար, որոցմէ առաջինը՝ մասնաւոր գումարներու համար. իսկ երկրորդը՝ նոցա հաւաքական գումարին կամ առանց մասնաւորաց՝ միայն մէկ գումարի համար յատկացեալ է:

Վերոյիշեալ Բ. սիւներուն գումարները՝ ամեն անգամ որ երեսը կը լրանայ, գումարելու եւ յաջորդ երեսը փոխադրելու է. բայց ուշադրութիւն ընելու է որ գումարներուն մէջ սխալ չ'ըլլայ:

Օրհաշուին ամեն երեսին վրայ թիւ գրելու է:

Օրհաշուին մէջ՝ յօդուածներն իրարմէ մեկին եւ յստակ պէտք է գրուին. յօդուածներն իրարմէ զատելու համար, երբ յօդուածոյ մը

պարունակութիւնը լինայ՝ մէկ տողի վրայ հաւասար մեծութեամբ երկու գծեր կը քաշուին, մէջտեղը պարսպ միջոց մը ձգելով, յորում կը գրուի նոր սխառելիք յօդուածոյն թուականը: Երբ յօդուած մը իւր նախընթաց յօդուածոյն թուականն ունենայ՝ փոխանակ ամսաթիւը կրկնելու նոյն բառը կը գրուի:

Օրհաշուին Օրինաց պահանջած տետրակներէն մին ըլլալով՝ վաճառականութեան մէջ ալ ամենէն պիտանի եւ զլրասոր տետրակներէն մէկը կը համարուի: Վաճառականութեան ամեն տեսակ գործողութիւններն այս տետրին մէջ կը գրուին. բայց սրովհետեւ Օրէնքը կը պատուիրէ որ այս տետրին մէջ քերթուածք եւ մեղանի արատ չ'ըլլայ, ուստի յօդուածները Ձեռատետրէն յՕրհաշու փոխադրելու ատեն՝ մեծ հոգ տանելու է որ սխալ չի սարգի եւ տետրակը մաքուր մնայ. վասնզի վաճառական մը մէկու մը հետ դատ ունեցած ատեն՝ Օրէնքը կը պահանջէ որ այդ վաճառականներն իրենց Օրհաշուը ներկայացնեն, որպէս զի ըստ այնմ վէճերնին կարգադրուի. աւելորդ է ըսել թէ այն Օրհաշուը միայն օրինաց առջեւ կրնայ ընդունելի ըլլալ, որ օրինաց տրամադրութեանց համեմատ գրուած է:

Կանոնաւորութեան համար՝ վաճառական մը պէտք է որ իւր Օրհաշուը տարին անգամ մը թէ՛ քաղաքի միջոցաւ դրոշմել տայ:

Օրհաշուին յօդուածները Մայր-հաշու փոխադրելէ վերջը՝ փոխադրեալ հաշուոց Մայր-հաշուին մէջ քանիերորդ երեսը նշանակեալ ըլլալը ցուցնելու համար, Օրհաշուին լրտանցքին քով հասարակ կտտրակի ձեւով կը գրուին յիշեալ հաշուոց երեսի թիւերը. որոց վրայինը՝ պարտական հաշուոյն, իսկ տակինը՝ պահանջող հաշուոյն Մայր-հաշուին քանիերորդ երեսը գտնուիլը կը ցուցնեն:

Շատ անգամ դործի մէջ այնպիսի գործողութիւններ կը պատահին, զորս յՕրհաշու անցընելու համար նորավարժն դժուարութիւն կ'ունենայ. ուստի այդ տեսակ խնդիրներ պատահած ատեն՝ աւելի լաւ կ'ըլլայ նախ թղթի մը վրայ լուծել, եւ երբ ճշդութեանը համոզուի, վերջը Օրհաշուը անցընել:

Այս տեսակ խնդիրներէն մէկ հատ մը հոս դնենք:

Գնեցի Պօղոս Գասպարեանէն 250 ետրտա դատիֆէ. գին 75=17250	
Փոխարէնը հետեւեալ կերպով վճարեցի.	
Թիւ 18 փոխանակադիր մը 1 էպէի վրայ . . . . .	18000
70 օրուան 12 % զեղչ . . . . .	420
	<u>17580</u>
Պօղոսէն ետ առած ստակա . . . . .	530
	<u>17250</u>

Վերոյգրեալ յօդուածն ինքնին չորս գործողութիւն կը պարունակէ իւր մէջը:

- 1°. Պողոսէն դատիֆէ գնուած :
- 2°. Պողոսին տոմսակ մը տրուած :
- 3°. Վերոյգրեալ տոմսակը զեղջել :
- 4°. Պողոսէն վրայ ստակ առնել :

Ինչպէս օրինակին վրայ կը տեսնուի, երբ խնդիրն այսպէս պարզուի, գրեթէ դժուարութիւնները կը վերնան եւ ալ այնուհետեւ գիւրին կ'ըլլայ լուծել :

Առաջին գործողութիւնն առնելով պիտի գրէինք ,  
ԸՆԳՉԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ ՊՕՂՈՍԻՆ :

Երկրորդ գործողութեան համար պիտի գրէինք ,  
ՊՕՂՈՍ ԸՆԳՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՅ :

Երրորդ գործողութեան համար,  
ՇԱՀ ԵՒ ԶԷՆ ԸՆԳՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՅ :

Իսկ չարորդին համար ,  
ԴՐԱՄԱՐԿՂ ՊՕՂՈՍԻՆ :

Արդ ինչպէս կը տեսնուի՝ Պողոսին համար Մայր-հաշուին մէջ հաշիւ չի պիտի բանանք, վասնզի սա 17250 զրուշ կ'ուզէր եւ այն ալ առաւ. ուստի վերի գրուած Պողոսները ջնջելով կը մնայ

ԸՆԳՉԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ }  
ՇԱՀ ԵՒ ԶԷՆ } ԸՆԳՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՅ :  
ԴՐԱՄԱՐԿՂ

Հետեւաբար կը գրենք Օրհաշիւը .

ԶԱՆԱԶԱՆՔ	ԸՆԳՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՅ :	
ԸՆԳՉԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ	.....	17250
ՇԱՀ ԵՒ ԶԷՆ	.....	420
ԴՐԱՄԱՐԿՂ	.....	530
		<u>18000</u>

Այսպէս սկսեք է ընել միշտ այս տեսակ բաղադրեալ յօդուածները :

Այսչափ մ'ըսելէ վերջը՝ կ'սկսինք շինել մեր երկամսեայ գործողութեանց Օրհաշիւը հետեւեալ կերպով :

# Օ Ր Հ Ա Շ Ի Ի

## ԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԻ

Ի Կ. Պօլիս, Զիւնայիւլիլ խան բիւ 61.

1 Յունիւ 1876		
1/4	ԴՐԱՄԱՐԿՂ ԴՐԱՄԱԳԼԻՒՆ	
	Վաճառականութեան սկսելու համար դրած գրամագլուխս .....	100000 —
Նոյն		
1/4	ԿԱՐԱՍԻՔ ԴՐԱՄԱՐԿՂԻՆ	
	Վաճառատանս համար գնած կարասիներս .	
	Գրասեղան մը .....	400 —
	Գացա մը .....	2000 —
	Մամուլ նամակի եւայլն .....	600 —
		<u>5000 —</u>
6 Յունիւ .		
2/4	ԸՆԳՉԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ ԴՐԱՄԱՐԿՂԻՆ	
	Տ. եւ Կ. Գարակէօզեան աղաներէն կանխիկ ստակով գնած հետեւեալ ապրանքներս .	
	Թիւ 108-9. 2 հակ խաս պատմա, 500 ծր. գին 90 » 110. 1 » ճերմ. մտմբօլ, 100 » » 85	45000 — 8500 —
		<u>55500 —</u>
4 Յունիւ .		
2/2	ԸՆԳՉ. ԱՊՐԱՆՔ ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՅ	
	Սթօհմանէն գնած եւ փոխարէն ի/հ վճարելի թիւ 1 իմ տոմսակս տարուս համար .	
	Թիւ 4-8. 5 պարկ խահուէ, 240 հօխ. գին 18	4520 —
8 Յունիւ .		
1/2	ԴՐԱՄԱՐԿՂ ԸՆԳՉԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ	
	Յակոր Ներսէսեան Տրապիզօնցիին ծախուած 200 ծրար պատմա, գին .....	19000 —
	Փոխադրելի .....	<u>179820 —</u>

	Փոխադրեալ.....		179820	—
	9 Յունի. 76			
$\frac{2}{2}$	<b>ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԻ ԸՆԴՀ. ԱՊՐԱՆԱՑ</b>			
	Յովհաննէս Մանիսպեան Էնկիւրցիին ծախուած հետեւեալները, եւ փոխարէն առնուած թիւ 51 իմ/հ իւր տոմսակը 1 փետր.			
	150 ծրար սլասա . զին..... 98	14700		
	50 » ճերմակ . » ..... 90	2700	17400	—
	16 Յունի.			
$\frac{3}{1}$	<b>ՊԱՆՔ ԹԹՕՄԱՆ ԴՐԱՄԱՐԿՂԻՆ</b>			
	Յիշեալ պանքային քով ձգուած 200 լիրա Օախ. ընթացիկ-հաշուով 12 % տակսով.....		20000	—
	20 Յունի.			
$\frac{2}{2}$	<b>ԸՆԴՀ. ԱՊՐԱՆՔ ԳԱՔՐԻԷԼ ՊՕՂՈՍԵԱՆԻ</b>			
	Յիշեալն գնուած թիւ 7, 10, 2 սնտուկ Պէնկալի լեզակ, 220 քիւլո. զին 90 դրուշ. վճարելի յառաջիկայ ամսոյն 26 ին.....		19800	—
	22 Յունի.			
$\frac{2}{2}$	<b>ԸՆԴՀ. ԱՊՐԱՆՔ ԸՆԴՀ. ԱՊՐԱՆԱՑ</b>			
	Յ. Գրիգորեանի ծախուած թիւ 7 մէկ սնտուկ Պէնկալի լեզակ, 110 քիւլո. զին..... 95	10250		
	Փոխարէն իրմէ առնուած թիւ 198—202 հինգ տակաւ Սենեկալի խէժ. զին..... 2046		10250	—
	26 Յունի.			
$\frac{2}{1}$	<b>ԳԱՔՐԻԷԼ ՊՕՂՈՍԵԱՆ ՉԱՆԱՉԱՆԱՑ</b>			
	Յիշեալին ունեցած պարտքս հետեւեալ կերպով վճարուած .			
$\frac{1}{3}$	ԴՐԱՄԱՐԿՂԻՆ			
	Տուած ստակս.....	19505		
$\frac{3}{3}$	ՇԱՀ ԵՒ ԶԷՆԻՆ			
	Վար դրած զեղչս.....	297	19800	—
	Փոխադրելի.....		267050	—

	Փոխադրեալ.....		267050	—
	26 Յունի. 76			
$\frac{2}{1}$	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ ԴՐԱՄԱՐԿՂԻՆ</b>			
	Կիրիացի Մէհմէտ էֆէնտիին կանխիկ գնուած թիւ 70—79, 10 պարկ աճառ, 800 հօխ. զին 4		5200	—
	27 Յունի.			
$\frac{1}{2}$	<b>ԴՐԱՄԱՐԿՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆԱՑ</b>			
	Կանխիկ վաճառումն հետեւեալ ապրանսց Յակոբ Պօղոսեան իզմիրցիին.			
	Թիւ 70—74. 5 պարկ աճառ, 595 հօխ. զին 4 $\frac{3}{4}$	1876	10	
	» 4 7 » խաչուէ, 46 » » 18 $\frac{1}{2}$	851	—	
		2727	10	
	5 % զեղչ կանխիկ տալուն համար.....	81	50	2645 20
	29 Յունի.			
$\frac{2}{2}$	<b>ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԻ ՉԱՆԱՉԱՆԱՑ</b>			
	Մարգար Տատրեան սեղանուորէն զեղչելով ծախու առած տոմսակներս .			
	Թիւ 78 փինկիլի. Բ. Գարսեուսուֆի ի 12 փետ.	5400	—	
	» 104 » Ալիբախ Նիկոյի յ 2 մարտ	4600	—	
$\frac{1}{3}$	ԴՐԱՄԱՐԿՂԻՆ Տուած ստակս.....	9800		
$\frac{3}{3}$	ՇԱՀ ԵՒ ԶԷՆԻՆ Վար դրած զեղչս.....	200		10000
	30 Յունի.			
$\frac{1}{2}$	<b>ԴՐԱՄԱՐԿՂ ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՑ</b>			
	Հօրեղբորմէս փոխ առած ստակիս փոխարէն տուած ստորագրութիւնս, վճարելի ի 1 մարտ			20000
	31 Յունի.			
$\frac{1}{3}$	<b>ՉԱՆԱՉԱՆՔ ԴՐԱՄԱՐԿՂԻՆ</b>			
	Ամսոյս մէջ ըրած հետեւեալ ծախքերս .			
$\frac{3}{3}$	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՔ. Վաճառատանս պաշտօնէից ամսականք եւայլն.....	400	—	
$\frac{3}{3}$	ՏԱՆ ԾԱԽՔ. Տան ծախուցս գումարը.....	600	—	
$\frac{4}{3}$	ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԽՔ. Անձնական ծախքերս.....	500	—	1300
	Փոխադրելի.....			304195 20

	Փոխադրեալ.....		504195	20
	1 Փետր. 76			
<sup>2</sup> / <sub>1</sub>	<b>ՎՃԱՐՆԵԼԻ ՏՈՄՍԱԿՔԻ ԴՐԱՄԱՐԿՂԻՆ</b> Սթօնման Տօլիկէրի քով ունեցած տոմսակս վճարելու համար .....		4520	—
	Նոյն			
<sup>1</sup> / <sub>3</sub>	<b>ԴՐԱՄԱՐԿՂ ՊԱՆՔ ՕԹՕՄԱՆԻՆ</b> Յիշեալ պանքայէն առնուած .....		5000	—
	2 Փետր.			
<sup>4</sup> / <sub>2</sub>	<b>Գ. ՄԸՍԸՐԵԱՆԻ ՔՈՎ ԱՊՐԱՆՔ</b> <b>ԸՆԳՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆԱՅ</b> Իմ հաշուոյս 2 % յանձնարարականաւ ծախ- ուելու համար յիշեալին զրկած ապրանքներս 100 ծրար պամա. գին .. 95 9500 — 20 » ճերմակ. » .. 88 1760 — Թիւ 75, 76. 2 սարկ աճառ, 158 հօխ. գին 4 1/2 711 —		11971	—
	9 Փետր.			
<sup>1</sup> / <sub>2</sub>	<b>ԴՐԱՄԱՐԿՂ ԸՆԳՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՅ</b> Յովհաննէս Մանիսալեանի տոմսակին գումարը ստանալու համար.....		17400	—
	10 Փետր.			
<sup>1</sup> / <sub>4</sub>	<b>ԴՐԱՄԱՐԿՂ ԳՐԻԳՈՐ ՄԸՍԸՐԵԱՆԻ</b> Ալիքսան աղա Խորասանձեանի համար՝ յիշեա- լին վրայ բացած վարկիս համար. որոյ փոխարէնը կանխիկ առի.....		5000	—
	12 Փետր.			
<sup>1</sup> / <sub>2</sub>	<b>ԴՐԱՄԱՐԿՂ ԸՆԳՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՅ</b> Ք. Գարսեուսուֆի փոխանակազիրը գանձեցի		5400	—
	Փոխադրելի.....		555286	20

	Փոխադրեալ.....		555286	20
	12 Փետր. 76			
<sup>1</sup> / <sub>3</sub>	<b>ԴՐԱՄԱՐԿՂ ՊԱՆՔ ՕԹՕՄԱՆԻՆ</b> Յիշեալ պանքայէն առած .....		5000	—
	16 Փետր.			
<sup>1</sup> / <sub>1</sub>	<b>ԴՐԱՄԱՐԿՂՈՒԽ ԴՐԱՄԱՐԿՂԻՆ</b> Հօրեղբորդուս ամուսնանալուն համար իրեն տուած նուէրս .....		1000	—
	20 Փետր.			
<sup>4</sup> / <sub>4</sub>	<b>ԳՐԻԳՈՐ ՄԸՍԸՐԵԱՆ</b> <b>Գ. ՄԸՍԸՐԵԱՆԻ ՔՈՎ ԱՊՐԱՆԱՅ</b> Իմ հաշուոյս յիշեալին ծախած ապրանք վա- ճառման հաշիւը . 100 ծրար պամա. գին ..... 100 10000 — 20 » ճերմակ. » ..... 90 1800 — Թիւ 75, 76. 2 սարկ աճառ, 156 հօխ. գին 5 780 — Որուն գումարը իր քովը կը մնայ . 12580 — 2 % իւր յանձնարարականը..... 250 —		12550	—
	Նոյն			
<sup>3</sup> / <sub>1</sub>	<b>ՊԱՆՔ ՕԹՕՄԱՆ ԴՐԱՄԱՐԿՂԻՆ</b> Յիշեալ պանքային տուի ընթացիկ-հաշուով...		50000	—
	29 Փետր.			
<sup>3</sup> / <sub>3</sub>	<b>ՊԱՆՔ ՕԹՕՄԱՆ ՇԱՀ ԵՒ ԶԷՆԻՆ</b> Յիշեալ պանքային հետ ունեցած ընթացիկ- հաշուոյս մինչեւ այս թուականը ի նպաստ ինձ տոկոսը .....		526	—
	Նոյն			
<sup>1</sup> / <sub>3</sub>	<b>ԶԱՆԱԶԱՆՔԻ ԴՐԱՄԱՐԿՂԻՆ</b> Հետեւեալ ծախքերս վճարելու համար . ԸՆԳՀԱՆՈՒՐ ԾԱԽՔ. Վաճառատանս պաշտօնէից			
	Փոխադրելի.....		599942	20



	Փոխադրեալ.....		399942	20
	ամսական եւայլն .....	400	—	
3	ՏԱՆ ԵԱԽՔ. Տան ծախսուցս գումարը.....	600	—	
4	ԱՆՁՆԱԿԱՆ ԵԱԽՔ. Անձնական ծախքերս .....	500	—	1500
	— 29 Փետր. 76 —			401242
3	<b>ՁԱՆԱՁԱՆՔ ԵՍՀ ԵՒ ՁԷՆԻՆ</b> Հետեւեալ հաշիւներէն երկու ամսուան մէջ եղած շահը.			
2	ԸՆԳՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ. Ապրանքներէ ըրած շահս	3556	20	
4	Գ. ՄԸՍԸՐԵԱՆԻ ՔՈՎ. ԱՅՍ Հաշուէն եղած շահը .....	559	—	3915
	— 30 Յունիս —			4758
3	<b>ՇԱՀ ԵՒ ՁԷՆ ՁԱՆԱՁԱՆԱՅ</b> Հետեւեալ հաշիւները գոցելու համար.			
3	ԸՆԳՀԱՆՈՒՐ ԵԱԽՈՒՑ. Այս հաշուին մնացորդը	800	—	
3	ՏԱՆ ԵԱԽՈՒՑ. Այս հաշուին մնացորդը.....	1200	—	
4	ԱՆՁՆԱԿԱՆ ԵԱԽՈՒՑ. Այս հաշուին մնացորդը	600	—	
4	ԳՐԱՄԱԳԼՈՒՑՆ. Շահ եւ զէնի հաշուոյն մնացորդը՝ որն որ երկամսեայ շահս կը ցուցընէ...	2158	20	4758
	( <sup>1</sup> ) — 30 Յունիս —			
4	<b>ԵԼԻՑ ԿՇԻՌ ԶԱՆԱՁԱՆԱՅ</b> Գոյքս (actif) կազմող հետեւեալ հաշիւները գոցելու համար.			
2	ԸՆԳՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔԱՅ. Վաճառատունս գրտնուած սպտրաստ սպրանքս .....	35360	—	
1	ԳՐԱՄԱՐԿՆ. Մնտուկս սպտրաստ դրամ. ....	50522	20	
2	ԸՆԳՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՅ Փոխանակագիր Այրամ Նիկօի թիւ 104 յ 2 Մարտ .....	4600	—	
1	ԿԱՐԱՍԵԱՅ. Կարասեացս արժէքը .....	5000	—	
3	ՊԱՆՔ ՕՔՕՄԱՆԻՆ. Յիշեալ սանքային քով ունեցած ստակս .....	42526	—	
4	ԳՐԻԳՈՐ ՄԸՍԸՐԵԱՆԻՆ. Այս հաշուին մնացորդը	7550	—	121158
	( <sup>1</sup> ) Գործողութիւնը ընդհանուր հաշուէկշտի, որը իբր վաճառականական գործողութիւն Օրհաշիւը կ'անցնին :			
	Փոխադրելի.....			551055

	Փոխադրեալ.....		551055	—
	— 29 Փետր. 76 —			
4	<b>ՁԱՆԱՁԱՆՔ ԵԼԻՑ ԿՇՈՒՑՆ</b> Պարտքս (passif) կազմող հետեւեալ հաշիւը գոցելու եւ դրամագլխոյս համար.			
2	ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՔ. Իմ տոմսակս հ/ Գ. Արշակեանի յ 2 մարտ .....	20000	—	
1	ԳՐԱՄԱԳԼՈՒՑ. Այս հաշուին մնացորդը, որ է իմ երկամսեայ գործողութիւններէս վերջը իրական դրամագլուխս .....	101158	20	121158
	— 1 Մարտ. —			
4	<b>ՁԱՆԱՁԱՆՔ ՄՏԻՑ ԿՇՈՒՑՆ</b> Իմ գոյքս կազմող հետեւեալ հաշիւները նորէն բանալու համար.			
2	ԸՆԳՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ. Վաճառատունս գտնուած սպրանք .....	35360	—	
1	ԳՐԱՄԱՐԿՆ. Մնտուկը սպտրաստ դրամ.....	50522	20	
2	ԸՆԳՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿՔ. Փոխանակագիր թիւ 104 յ 2 մարտ.....	4600	—	
4	ԿԱՐԱՍԻՔ. Կարասեացս արժէքը .....	5000	—	
3	ՊԱՆՔ ՕՔՕՄԱՆ. Պանքային առնելիքս .....	42526	—	
4	ԳՐԻԳՈՐ ՄԸՍԸՐԵԱՆ. Յիշեալին մնացած սպրտքը	7550	—	121158
	— 30 Յունիս —			
4	<b>ՄՏԻՑ ԿՇՈՒ ԶԱՆԱՁԱՆԱՅ</b> Պարտքս կազմող հետեւեալ հաշիւը բանալու եւ դրամագլխոյս համար.			
2	ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՅ. Իմ տոմսակս հ/ Գ. Արշակեանի յ 2 Մարտ.....	20000	—	
1	ԳՐԱՄԱԳԼՈՒՑՆ. Իմ իրական դրամագլուխս .....	101158	20	121158

## Մ Ա Յ Ր - Հ Ա Շ Ի Ի

Մայր-հաշիւը Օրհաշուին ընդօրինակութիւնն է ուրիշ ձեւով մը գրուած . առանց Մայր-հաշիւ ունենալու՝ երբ վաճառականն ուզէ գիտնալ հետերնին գործ ըրած մարդոց հետ քնչ վիճակի մէջ գըտնուիլը, այն ատեն հարկ պիտի ըլլար Օրհաշուին բոլոր գործողութիւնները զատ զատ թղթերու վրայ բովանդակել, որն որ արդարեւ շատ տաղակալի եւ միանգամայն շատ ժամանակ պահանջող աշխատութիւն մը պիտի ըլլար . Սոյն դժուարութեանց իբր դարման հնարուած է Մայր-հաշիւը, յորում կը գտնուին, Պարսի եւ Պահանջեով, Օրհաշուին բոլոր գործողութիւնները, իւրաքանչիւր թղթակցի, եւ վաճառականին յատկացեալ հաշուոց տակ, սրով վաճառականը կրնայ մէկ նայուածքով գիտնալ՝ այսինչ հաշուոյն կամ անձին ունեցած պարտքը կամ առնելիքը :

Մայր-հաշուին մէջ վաճառականութեան տարերքը կազմող բոլոր իրաց համար ալ հաշիւ կը բացուի, այսինքն՝ Ընդհանուր ապրանք. Դրանատիղ. Ընդունելի տոնակի. Վճարելի տոնակի. Ետն եւ գեւ .

Այս տետրին մէջ հաշիւ մը բանալու համար՝ տետրակին երկու երեսը մէկտեղ բանալով, ձախ կողմը պէտք է գրել խոշոր գրերով Պարսի, աջ կողմը Պահանջի, եւ այս երկու բառերուն մէջտեղը տետրակին ձակատը՝ նոյն հաշուոյն կամ անձին անունը աւելի խոշոր գրերով :

Մայր-հաշուոյ տետրին վրայ կը տեսնուի թէ Պարսին եւ թէ Պահանջին կողմը հինգ հատ սիւներ, որոցմէ առաջինը կը ցուցնէ փոխադրեալ յօդուածին թուականը, երկրորդը՝ նոյն յօդուածին Օրհաշուին քանիբարոյք երեսէն փոխադրուած ըլլալը, երրորդը փոխադրեալ հաշուոյն Մայր-հաշուին քանիբարոյք երեսն ըլլալը, չորրորդը՝ յօդուածին գումարը . հինգերորդը՝ գումարին կոտորակները :

Այսչափ մը խօսելէ վերջը սկսինք շինել մեր երկամսեայ գործողութեանց Մայր-հաշիւը :

ՅԱՆԿ ՄԱՅՐ-ՀԱՇՈՒԻ

Մայր-հաշուին մէջ առանց բոլոր բուրքերը բոլրատելու հաշիւ մը գտնելու համար, ցանկ մը կը շինուի, որուն միջոցաւ ուզուած հաշիւը շուտ մը կը գտնուի: Այս ցանկը Մայր-հաշուին սկիզբը կամ զատ տետրի մը վրայ կը գրուի:

Ահա այսպէս կը շինենք այժմ մեր Մայր-հաշուին ցանկը:

Ա.	
Անձնական ծախս . . . . .	Երես 4
Գ.	
Գարբիէլ Պողոսեան . . . . .	» 2
Գրիգոր Մըսրեանի ֆոլ ապրանք . . . . .	» 4
Գրիգոր Մըսրեան . . . . .	» 4
Դ.	
Դրամագլուխ . . . . .	» 1
Դրամարկղ . . . . .	» 1
Ե.	
Ելից կէիւ . . . . .	» 4
Ը.	
Ընդհանուր ապրանք . . . . .	» 2
Ընդունելի տոմսակք . . . . .	» 2
Ընդհանուր ծախս . . . . .	» 5
Կ.	
Կարասեաց հաշիւ . . . . .	» 1
Մ.	
Մտից կէիւ . . . . .	» 4
Շ.	
Շահ եւ զէն . . . . .	» 5
Պ.	
Պանք Օթոման . . . . .	» 5
Վ.	
Վհարելի տոմսակք . . . . .	» 2
Տ.	
Տան ծախս . . . . .	» 5

ՄԱՅՐ-ՀԱՇՈՒԻ

ԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԻ

Ի Կոստանդնուպօլիս, Զիւմպիւլի խան, բիւ 61

ՄԿՍԵԱՆ Ի 1 ՅՈՒՆՈՒԱՐ 1876

Դրանա գրուի

Պարտի				Պահանջէ	
1876				1876	
Փետրվ.	16	ԴՐԱՄԱԳՎՈՅՆ, հօրեղբորորդոյ տուած պարգևս . . . . .	5	1	1000 —
»	29	ԵՂԻՑ ԿՇՈՒՅՆ, մնացորդ ի նոր հաշիւ . . . . .	7	4	101158 20
					102158 20
				Մարտ	1
				ՄՏԻՑ ԿՇՈՒՅՆ, նոր դրամագրուիս . . . . .	7 4
					102158 20

Պարտի				Պահանջէ	
1876				1876	
Յունուար	1	ԴՐԱՄԱԳՎՈՅՆ, դրամ ստակս . . . . .	1	1	100000 —
»	6	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԳՐԱՆՑՑ, կանխիկ ծախք . . . . .	1	2	19000 —
»	27	» » » » . . . . .	5	2	2645 20
»	30	ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՑ, հօրեղբորմէս առածս . . . . .	5	2	20000 —
Փետր.	1	ՊԱՆՔ ՕԹՕՄԱՆԵՆ, առած ստակս . . . . .	4	5	5000 —
»	9	ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՑ, Յ. Մանիսալեանի տոմսակին գումարը . . . . .	4	2	17400 —
»	10	Գ. ՄՆՍԵՐՅԱՆԻ, իր վրայ բացած վարկիս համար . . . . .	4	4	5000 —
»	12	ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՑ, Բ. Գարանուսուֆի փոխանակագրէն . . . . .	4	2	5400 —
»	12	ՊԱՆՔ ՕԹՕՄԱՆԵՆ, առած ստակս . . . . .	5	5	5000 —
					177445 20
Մարտ	1	ՄՏԻՑ ԿՇՈՒՅՆ, սնտուկը պատրաստ . . . . .	7	4	50522 20

Պարտի				Պահանջէ	
1876				1876	
Յունուար	1	ԴՐԱՄԱԳՎՈՅՆ, առած կարասեացս համար . . . . .	1	1	5000 —
Մարտ	1	ՄՏԻՑ ԿՇՈՒՅՆ, կարասեացս արժէքը . . . . .	7	4	5000 —

Պարտի

Ընդհանուր

Ապրանք

Պահանջէ

1876	Յունուար	6	ԴՐԱՄԱՐԿՂԵՆ, կանխիկ գնումն ապրանաց . . . . .	1	1	55500	—
	»	4	ՎՃԱՐՆԵՐԻ ՏՈՄՍԱԿԱՅ, հաշուեցոյց Տօլինկէրի . . . . .	1	2	4520	—
	»	20	ԳԱՐԻԲԷՆ ՊՕՂՈՍԵԱՆԻ, իւր հաշուեցոյցը . . . . .	2	2	19800	—
	»	22	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆԱՅ, հաշուեցոյց Յ. Գրիգորեանի . . . . .	2	2	10250	—
	»	26	ԴՐԱՄԱՐԿՂԵՆ, հաշուեցոյց Մէհմէտ էֆէնտիի . . . . .	5	1	5200	—
Փետր.	29		ՇԱՀ ԵՒ ԶԵՆՆԵՆ, ապրանքներէս ըրած շահս . . . . .	6	5	5556	20
						94606	20
Մարտ	1		ՄՏԻՑ ԿՇՈՒՅՆՆԵՆ, պատրաստ ապրանք . . . . .	7	4	55560	—

1876	Յունուար	6	ԴՐԱՄԱՐԿՂԵՆ, կանխիկ ծախք . . . . . <th>1</th> <th>1</th> <th>19000</th> <th>—</th>	1	1	19000	—
	»	9	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՈՄՍԱԿԵՆ, իմ հաշուեցոյցս Յ. Մանիսալեանի . . . . .	2	2	17400	—
	»	22	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔԵՆ, Յ. Գրիգորեանի ծախածիս համար . . . . .	2	2	10250	—
	»	27	ԴՐԱՄԱՐԿՂԵՆ, կանխիկ ծախք . . . . .	5	1	2645	20
Փետր.	2		Գ. ՄԵՐՍԵՐԵԱՆԻ ԲՈՎ ԱՊՐԱՆՔԵՆ, զրկած ապրանացս համար . . . . .	4	4	11971	—
						61246	20
»	29		ԵՆԻՑ ԿՇՈՒՅՆ, այս հաշիւը գոցելու համար . . . . .	6	4	55560	—
						94606	20

Պարտի

Ընդունելի

Տոմսակ

Պահանջէ

1876	Յունուար	9	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆԱՅ, Թիւ 1 տոմսակ Յ. Մանիսալեանի . . . . . <th>2</th> <th>2</th> <th>17400</th> <th>—</th>	2	2	17400	—
	»	29	ԶԱՆԱԶԱՆԱՅ, Թիւ 78 տոմսակ Գ. Գարաեռուստի . . . . .	5	—	5400	—
	»	29	» » 10½ Ավրամ Նիկո . . . . .	5	—	4600	—
						27400	—
Մարտ	1		ՄՏԻՑ ԿՇՈՒՅՆ, Թիւ 10½ Ավրամ Նիկո . . . . .	7	4	4600	—

1876	Փետր.	9	ԴՐԱՄԱՐԿՂԵՆ, Թիւ 1 Յ. Մանիսալեանի տոմսակը . . . . . <th>4</th> <th>1</th> <th>17400</th> <th>—</th>	4	1	17400	—
	»	12	» » 78 Գ. Գարաեռուստի » . . . . .	4	1	5400	—
						22800	—
»	29		ԵՆԻՑ ԿՇՈՒՅՆ, այս հաշիւը գոցելու համար . . . . .	6	4	4600	—
						27400	—

Պարտի

Վճարելի

Տոմսակ

Պահանջէ

1876	Փետր.	1	ԴՐԱՄԱՐԿՂԵՆ, Թիւ 1 տոմսակ վճարուած . . . . . <th>4</th> <th>1</th> <th>4520</th> <th>—</th>	4	1	4520	—
	»	29	ԵՆԻՑ ԿՇՈՒՅՆ, այս հաշիւը գոցելու համար . . . . .	7	4	20000	—
						24520	—

1876	Յունուար	6	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔԵՆ, Թիւ 1 իմ/տոմսակս հ/ Տօլինկէրի . . . . . <th>1</th> <th>2</th> <th>4520</th> <th>—</th>	1	2	4520	—
	»	50	ԴՐԱՄԱՐԿՂԵՆ, » 2 » հ/ Գ. Արշակեանի . . . . .	5	1	20000	—
						24520	—
Մարտ	1		ՄՏԻՑ ԿՇՈՒՅՆ, Թիւ 2 իմ/տոմսակս հ/ Գ. Արշակեանի . . . . .	7	4	20000	—

Պարտի

Գարրիել

Պօղոսեան

Պահանջէ

1876	Յունուար	26	ԶԱՆԱԶԱՆԱՅ, իրեն տրուած ստակը զեղջով . . . . . <th>2</th> <th>—</th> <th>19800</th> <th>—</th>	2	—	19800	—
------	----------	----	---	---	---	-------	---

1876	Յունուար	20	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔԵՆ, իւր հաշուեցոյցին համար . . . . . <th>2</th> <th>2</th> <th>19800</th> <th>—</th>	2	2	19800	—
------	----------	----	--	---	---	-------	---

Պակի օրօնակ

1876	Պարտ				
Յունուար 16	ԳՐԱՄԱՐԿՂԻՆ, ընթացիկ-հաշուով տրուած . . . . .	2	1	20000	—
Փետր. 20	» » » » » . . . . .	5	1	50000	—
» 29	ՇԱՀ ԵՒ ԶԷՆԵՆ, » տոկոս մինչև 29 Փետր. . . . .	5	5	526	—
				50526	—
Մարտ 1	ՄՏԵՑ ԿՇՈՒՑՆ, մնացորդ հին հաշուէն . . . . .	7	4	42526	—

1876	Պարտ				
Փետր. 1	ԳՐԱՄԱՐԿՂԻՆ, տուած ստակին համար . . . . .	4	1	5000	—
» 12	» » » » » . . . . .	5	1	5000	—
				8000	—
» 29	ԵՒՑ ԿՇՈՒՑՆ, այս հաշիւը գոցելու համար . . . . .	6	4	42526	—
				50526	—

Պարտ

Շահ եւ զէն

Պահանջէ

1876	Պարտ				
Փետր. 29	ԶԱՆԱԶԱՆԱՑ, յօդուած ընդհանուր հաշուէկշռի . . . . .	6	—	2600	—
» 29	ԳՐԱՄԱՐԿՂԻՆ, զուտ շահ . . . . .	6	1	2158	20
				4758	20

1876	Պարտ				
Յունուար 26	Գ. ՊՈՂՈՍՅԱՆԵՆ, վար դրուած զեղչը . . . . .	2	2	297	—
» 29	ԸՆԳՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԵՆ, վար դրուած զեղչը . . . . .	5	2	200	—
Փետր. 29	ՊԱՆԲ ՕԹՕՄԱՆԵՆ, առնուած տոկոսը . . . . .	5	5	526	—
» 29	ԶԱՆԱԶԱՆՆԵՐԷ, յօդուած ընդհանուր հաշուէկշռի . . . . .	6	—	5915	20
				4758	20

Պարտ

Ընդհանուր ծախի

Պահանջէ

1876	Պարտ				
Յունուար 31	ԳՐԱՄԱՐԿՂԻՆ, վաճառատան ծախք . . . . .	5	1	400	—
Փետր. 29	» » » » » . . . . .	6	1	400	—
				800	—

1876	Պարտ				
Փետր. 29	ՇԱՀ ԵՒ ԶԷՆԵՆ, այս հաշիւը գոցելու համար . . . . .	6	5	800	—
				800	—

Պարտ

Տան ծախի

Պահանջէ

1876	Պարտ				
Յունուար 31	ԳՐԱՄԱՐԿՂԻՆ, տան ծախք . . . . .	5	1	600	—
Փետր. 29	» » » » » . . . . .	6	1	600	—
				1200	—

1876	Պարտ				
Փետր. 29	ՇԱՀ ԵՒ ԶԷՆԵՆ, այս հաշիւը գոցելու համար . . . . .	6	5	1200	—
				1200	—

Անձնական ծախք

Պահանջէ

Պարտի	1876	Տնօրէնար.	Փետր.	Գումար	Տոմար	Կոպեկ	Գումար
	51	ԳՐԱՄԱՐԿՂԻՆ, անձնական ծախքերս . . . . .		5	4	500	—
	29	»		6	1	500	—
						600	—

Պարտի	1876	Տնօրէնար.	Փետր.	Գումար	Տոմար	Կոպեկ	Գումար
	29	ՇԱՀ ԵՒ ԶԷՆԷՆ, այս հաշիւը զոցելու համար . . . . .		6	5	600	—
						600	—

Պարտի

Գրիգոր Մըսրէանի ֆոյ սպրանկ

Պահանջէ

Պարտի	1876	Տնօրէնար.	Փետր.	Գումար	Տոմար	Կոպեկ	Գումար
	2	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԳՐԱՆԱՅ. զրկած սպրանկացս համար . . . . .		4	2	11971	—
	29	ՇԱՀ ԵՒ ԶԷՆԷՆ, այս հաշուէն շահ . . . . .		6	5	559	—
						12550	—

Պարտի	1876	Տնօրէնար.	Փետր.	Գումար	Տոմար	Կոպեկ	Գումար
	20	Գ. ՄԵՍԵՐԵԱՆԷՆ, ծախած և իր բովը մնացած ստակին համար . . . . .		5	4	12550	—
						12550	—

Պարտի

Գրիգոր Մըսրէանի և Կարին

Պահանջէ

Պարտի	1876	Տնօրէնար.	Փետր.	Մարտ	Գումար	Տոմար	Կոպեկ	Գումար
	20	Գ. ՄԵՍԵՐԵԱՆԷՆ ԲՈՎ ԱԳՐԱՆԱՅ, ծախած սպրանկացը համար . . . . .			5	4	12550	—
	1	ՄՏԻՑ ԿՇՈՒՅՆ, մնացորդ պարտքը . . . . .			7	4	7550	—

Պարտի	1876	Տնօրէնար.	Փետր.	Մարտ	Գումար	Տոմար	Կոպեկ	Գումար
	10	ԴՐԱՄԱՐԿՂԻՆ, իր վրայ բացած վարկիս համար . . . . .			4	1	5000	—
	29	ԵՒՍ ԿՇՈՒՅՆ, այս հաշիւը զոցելու համար . . . . .			6	4	7550	—
						12550	—	

Պարտի

Ելից Կշիռ

Պահանջէ

Պարտի	1876	Տնօրէնար.	Փետր.	Գումար	Տոմար	Կոպեկ	Գումար
	29	ԶԱՆԱԶԱՆԱՅ, զանազան հաշիւները զոցելու համար . . . . .		6	—	121158	20

Պարտի	1876	Տնօրէնար.	Փետր.	Գումար	Տոմար	Կոպեկ	Գումար
	29	ԶԱՆԱԶԱՆՆԵՐԷՆ, զանազան հաշիւներ զոցելու համար . . . . .		6	—	121158	20

Պարտի

Մտից Կշիռ

Պահանջէ

Պարտի	1876	Տնօրէնար.	Փետր.	Գումար	Տոմար	Կոպեկ	Գումար
	1	ԶԱՆԱԶԱՆԱՅ, զանազան հաշուոց մնացորդ . . . . .		7	—	121158	20

Պարտի	1876	Տնօրէնար.	Փետր.	Գումար	Տոմար	Կոպեկ	Գումար
	1	ԶԱՆԱԶԱՆՆԵՐԷՆ, զանազան հաշուոց մնացորդ . . . . .		7	—	121158	20

**Փ Ո Ր Չ Ա . Կ Շ Ի Ռ**

Կրկնատոմարին վրայ խօսած ատեննիս ըսինք թէ՛ յօդուած մը մինչևն այս ատեն երկու անգամ կը փոխադրուի ի Մայր-հաշիւ , մէկ մը ի պարսի եւ մէկ մը ի պահանջե. ասկէ կը հետեւի թէ՛ բոլոր հաշուոց պարսֆին հաւաքական գումարը պահանջֆին հաւաքական գումարին հետ հաւասար պէտք է ըլլայ, եթէ փոքրիկ տարբերութիւն մ'ըլլայ՝ ըսել կ'ըլլայ թէ սխալ մը ստրդած է, զոր գտնելու համար փնտռել պէտք է Օրհաշուէն ի Մայր-հաշիւ փոխադրութիւնները կետադրելով եւ գումարները քննելով: Նոյնպէս Օրհաշուին գումարը պէտք է հաւասարի Մայր-հաշուին պարտի եւ պահանջէ գումարներուն :

Հասկընալու համար թէ արդեօք գործողութիւնները ճշդիւ փոխադրուած են ի Մայր-հաշիւ, Փորձակշիռ ըսուած գործողութիւնը

**Փ Ո Ր Չ Ա . Կ Շ Ի Ռ**

**Յ Ո Ւ Ն Ո Ւ Ա Ր Ա Մ Ս Ո Յ**

ԱՆՈՒԱՆՔ ՉԱՇՈՒՈՑ		Պ Ա Ր Տ Ի	Պ Ա Շ Ա Ն Ձ Է
1	Դրամագլուխ .....	—	100000 —
1	Դրամարկղ .....	141645 20	110505 —
1	Կարասիք .....	5000 —	..... —
2	Ընդհանուր ապրանք .....	91050 —	49275 20
2	Ընդունելի տոմսակք .....	27400 —	..... —
2	Վճարելի » .....	..... —	24520 —
2	Գարբիէլ Պողոսեան .....	19800 —	19800 —
5	Պանք Օբօման .....	20000 —	..... —
5	Շահ եւ զէն .....	..... —	497 —
5	Ընդհանուր ծախք .....	400 —	..... —
5	Տան » .....	600 —	..... —
4	Անճնական » .....	500 —	..... —
4	Գ. Մըսրեանի ֆոլ ապրանք .....	..... —	..... —
4	Գրիգոր Մըսրեան .....	..... —	..... —
		504195 20	504195 20

ամեն ամիս պէտք է ընել, որպէսզի սկիզբէն եղած սխալ մը չի չարունակէ մինչեւ տարւոյն վերջը, որ ատեն աւելի խուզարկութիւնը հարկ կ'ըլլայ ընել եւ սխալը գտնել զժուար կ'ըլլայ :

Փորձակշիռը պատրաստելու համար՝ նախ պէտք է Օրհաշուին ամեն երեսի գումարները մինչեւ ամսոյն վերջը գումարել, յետոյ Մայր-հաշուին մէջ գտնուած բոլոր հաշուոց պարսֆին եւ պահանջֆին գումարներն ստնելով՝ զատ թղթի վրայ առաջին սիւնին մէջ հաշուոց պարտքին գումարները՝ եւ երկրորդ սիւնին մէջ պահանջքին գումարները նշանակել, եթէ այս երկու սիւներուն գումարներն իրարու հաւասար եւ միանգամայն Օրհաշուին գումարին հետ համապատասխան ըլլան, ըսել է թէ՛ նոյն ամսոյ գործողութեանց մէջ սխալմունք մը տեղի ունեցած չէ :

Փորձակշիռոյ վրայ երեցած փոքր սիւնին մէջ կը գրուի հաշուոց Մայր-հաշուին քանիքորդ երեսը գտնուած ըլլալը :

Ահա այս կերպով կը շինենք մեք ալ մեր երկամսեայ գործողութեանց փորձակշիռը :

**Փ Ո Ր Չ Ա . Կ Շ Ի Ռ**

**Փ Յ Տ Ի Ռ Ւ Ա Ր Ա Մ Ս Ո Յ**

ԱՆՈՒԱՆՔ ՉԱՇՈՒՈՑ		Պ Ա Ր Տ Ի	Պ Ա Շ Ա Ն Ձ Է
1	Դրամագլուխ .....	1000 —	100000 —
1	Դրամարկղ .....	177445 20	146925 —
1	Կարասիք .....	5000 —	..... —
2	Ընդհանուր ապրանք .....	91050 —	61246 20
2	Ընդունելի տոմսակք .....	27400 —	22800 —
2	Վճարելի » .....	4520 —	24520 —
2	Գարբիէլ Պողոսեան .....	19800 —	19800 —
5	Պանք Օբօման .....	50526 —	8000 —
5	Շահ եւ զէն .....	..... —	825 —
5	Ընդհանուր ծախք .....	800 —	..... —
5	Տան » .....	1200 —	..... —
4	Անճնական » .....	600 —	..... —
4	Գ. Մըսրեանի ֆոլ ապրանք .....	11971 —	12550 —
4	Գրիգոր Մըսրեան .....	12550 —	5000 —
		401242 20	401242 20



Գ Լ Ո Ւ Խ Գ .

Ը Ն Գ Հ Ա Ն Ո Ւ Ր Հ Ա Շ Ո Ւ Ե Կ Շ Ի Ռ

Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ո Ւ Փ Ի Ի Ն

Ինչպէս որ պարզ խանութպան մը տարեգլխան իւր վիճակը կամ դրամագլխը գիտնալու համար՝ խանութը գտնուած ասրանքները զատ զատ իրենց տեսակովը կը կռէ, եւ իւրաքանչիւրոյն գին մը գնելով տեղ մը նշանակելէ յետոյ՝ ունեցած պատրաստ դրամն եւ զանազաններէ ունեցած առնելիքն ասրանաց արժողութեան գումարին վրայ կ'աւելցընէ . եւ վերջը ունեցած պարտքը գլխացը գրելով՝ այս երկու գումարներուն կշիւրը կընէ, եւ ունեցած դրամագլխը կը հասկընայ . այսպէս ալ վաճառական մը, իւր վիճակը հասկընալու համար, վերոյիշեալ եղանակաւ գործողութիւն մը կընէ, որ կըսուի Ընդհանուր հաշուեկշիւ . Ընդհանուր հաշուեկշիւը տարեգլխէ տարեգլուխ եւ երբեմն վեց ամսէ վեց ամիս կ'ըլլայ, եւ կամ անանկութիւն, վաճառականի մահ, կամ ընկերութեան լուծումն պատահած ատեն :

Ընդհանուր հաշուեկշիւ միջոցաւ վաճառականն իւր ըրած տարեկան կամ վեցամսեայ գործողութիւններէն ունեցած զուտ շահն ու փասքը, իւր ստացուածքը, առնելիքը, տալիքը, վերջապէս իւր կացութիւնը կը գիտնայ :

Ընդհանուր հաշուեկշիւ ստեն վաճառականն իւր համարձակութենէն կամ աննախադուշութենէն յառաջ եկած փասքները կը տեսնէ եւ ըստ այնմ կը շարժի . այսինքն՝ աւելի չափաւոր կամ աւելի համարձակ կըլլայ իւր գործին մէջ, եւ կամ՝ աւելի ընդարձակ կամ աւելի խնայող կ'ըլլայ իւր ծախուցը մէջ :

Արդ՝ մենք ալ մեր երկամսեայ գործողութեանց Ընդհանուր հաշուեկշիւը պատրաստելու համար, նախ պէտք է որ մթերագիրն առնելով անձամբ ստուգենք չի ծախուած ասրանաց քանակութեան ճշդութիւնը, եւ իւրաքանչիւր ասրանքի համար օրուան ընթացիկ գնոյն համեմատ գին մ'որոշելով առջեւնին նշանակել . Արդ՝ վաճառատան մէջ պատրաստ գտանք հետեւեալ ասրանքները, որք մթերագիրն հետ հաւատար են .

Մ Թ Ե Ր Ա Ն Ո Յ Ը Պ Ա Տ Ր Ա Ս Տ Ա Պ Ր Ա Ն Ք

50 ծրար սրամա .	գին 92 . . . . .	4600
50 » ճերմակ մատամբօլ .	» 88 . . . . .	4400
4 պարկ խահուէ, 190 հօխ .	» 18 . . . . .	5420
1 անտուկ Պէնկալի լեղակ, 108 »	» 90 . . . . .	9720
5 » Սենեկալի խէժ .	» 2052 . . . . .	10260
5 պարկ աճառ, 240 հօխա .	» 4 . . . . .	960
		<u>55560</u>

Թե ինչպիս պիտի է ընդհանուր հաշուեկշիւոյ յորուածները Օրհաշիւը անցնել .

Շ Ա Հ Ը Ն Գ Հ Ա Ն Ո Ւ Ր Ա Պ Ր Ա Ն Ք Ի Ն

Փետրուար ամսոյ փորձակշռոյն մէջ ընդհանուր ասրանաց պահանջքին կողմը կը տեսնեմք գումար մը՝ որ ծախուած ասրանքները կը ցուցընէ . . . . . 61246 1/2

Պարտքին կողմն ալ սուրիշ գումար մը, որն որ պարանաց գնման գինը կը ցուցընէ . . . . . 91050

Այս գումարէն պիտի իջնեմք մթերանոցը զըտնուած պատրաստ ասրանաց արժէքին գումարը . 55560

57690

5556 1/2

Ըսել է թէ՛ մեզի 57690 զրուշ արժող ասրանքները 61246 1/2 զրուշի ծախեր ենք, ուսկից 5556 1/2 զրուշի շահ մը ունեցանք . այս շահը պիտի աւելցընենք Շահ եւ Զէնի հաշուոյն վրայ, Օրհաշուին մէջ գրելով՝

ԸՆԳՀԱՆՈՒՐ ՀԱՇՐԱՆՔ ՇԱՀ ԵՒ ԶԷՆԻՆ 5556 1/2

(Տես Օրհաշիւ երես 6) .

Շ Ա Հ Գ Ր Ի Գ Ռ Մ Ը Ս Ը Ր Ե Ա Ն Ի Ք Ո Վ Ա Պ Ր Ա Ն Ք Ն Ե Ր Ի Ն

Նոյնպէս կը տեսնենք որ փետրուար ամսոյ փորձակշռոյն մէջ՝ Գրիգոր Մըսրբեանի քով եղած ասրանաց հաշուոյն պահանջքին գումարն է . . . . . 12550

Իսկ պարտքին գումարն է . . . . . 11971

Ըսել է թէ՛ այս ասրանքներէն ալ շահ ըրեր ենք 559 զրուշ, զոր դարձեալ Շահ եւ Զէնին վրայ կ'աւելցընենք գրելով՝

ԳՐԻԳՐ ՄԸՍԸՐԵԱՆԻ ՔՈՎ ԱՊՐԱՆՔ ՇԱՀ ԵՒ ԶԷՆԻՆ 559

(Տես Օրհաշիւ երես 6) .

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

## ԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ Վ.Ա.ՃԱՌԱԿԱՆԻ

ԳՈՅՔ (ACTIF)

ի 29 Փետրուար 1876

ՊԱՐՏՔ (PASSIF)

ԴՐԱՄ ՅՄՐԿԵՂ			ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿՔ Ի ՇՐՋԱԲԵՐՈՒԹԵԱՆ		
Սնտուկը գտնուած պատրաստ դրամ .....	30522	20	Իմ տոմսակս հ/ Գ. Արշակեանի ի 1 Մարտ .....	20000	»
<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ Ի ՎԱՃԱՌԱՏԱՆ</b>			<b>ԴՐԱՄԱԳԼՈՒԽ</b>		
Պատմա 50 ծրար գին 92 .....	4600		Ձուտ դրամագլուխս .....	101138	20
Մասամբօլ 50 » » 88 .....	4400				
Խահուէ 4 պարկ 190 հօխ. » 18 .....	5420				
Լեղակ Պէնկալի 1 սնս" 108 » » 90 .....	9720				
Խէժ Սենեկալի 5 » » 2052 .....	10260				
Անառ 5 պարկ 240 » » 4 .....	960				
	33360	»			
<b>ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿՔ Ի ԳՐԱՊԱՆԱԿԻ</b>					
Փոխանակագիր թիւ 104 ի վերայ Ավրամ Նիկոյի 1 2 Մարտ ..	4600	»			
<b>Կ Ա Ր Ա Ս Ի Ք</b>					
Կարասեացս արձէք .....	3000	»			
<b>Պ Ա Ն Ք Օ Ք Օ Մ Ա Ն</b>					
Յիշեալ պանֆայէն ունեցած առնելիս ..	42326	»			
<b>Գ Ր Ի Գ Ո Ր Մ Ը Ս Ը Ր Ե Ա Ն</b>					
Մնացած պարտք .....	7330	»			
	121138	20		121138	20

### ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընդհանուր ապրանք .....	33360	»	Վճարելի տոմսակք .....	20000	»
Դրամարկղ .....	30522	20	Դրամագլուխ .....	101138	20
Ընդունելի տոմսակք .....	4600	»			
Կարասիք .....	3000	»			
Պանք Օքօման .....	42326	»			
Գրիգոր Մըսրեան .....	7330	»			
	121138	20		121138	20

(Տե՛ս էջ 145)

Ներկայ հաշունկշտոյն սեփականուս հետ համաձայն ըլլալը կը հաստատուի:  
Կ. Պօլիս 29 Փետր 1876. ԱՐՇԱԿ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ահա այսպէս բոլոր շահ ցուցընող հաշիւները գոցելէ վերջը, վաս ցուցընող եւ զանազան ծախուց հաշիւները՝ որոց փոխարէն բան մը ստանալիք չունինք, ինչպէս են՝ պաշտօնէից ամսականք, վաճառատան վարձք, եւն, պահանջող՝ եւ Շահ եւ Զէնը պարտական կընենք :

ՀԱՇՈՒՅՓԱԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՈՒՅ

Այս հաշիւը փետրուարի փորձակշռոյն մէջ պարտքին կողմը 800 զրուչի գումար մը կը ցուցընէ, որուն փոխարէն ստանալիք մը չունենալնու համար՝ Շահ եւ Զէնը պարտական պիտի ընենք, գրելով՝

ՇԱՀ ԵՒ ԶԷՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՈՒՅ 800

(Տէս Օրհաշիւ երես 6).

ՀԱՇՈՒՅՓԱԿ ՏԱՆ ԾԱԽՈՒՅ

Այս ալ նոյնպէս 120 զրուչի գումար մը կը ցուցընէ, զոր Շահ եւ Զէնի հաշուով կը գոցենք գրելով՝

ՇԱՀ ԵՒ ԶԷՆ ՏԱՆ ԾԱԽՈՒՅ 1200

(Տէս Օրհաշիւ երես 6).

ՀԱՇՈՒՅՓԱԿ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԽՈՒՅ

Այս հաշիւն ալ փետրուար ամսոյ փորձակշռոյն մէջ պարտքին կողմը 600 զրուչի գումար մը կը ցուցընէ, զոր նոյնպէս Շահ եւ Զէնով կը գոցենք գրելով՝

ՇԱՀ ԵՒ ԶԷՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱԽՈՒՅ 600

(Տէս Օրհաշիւ երես 6).

ՀԱՇՈՒՅՓԱԿ ՇԱՀ ԵՒ ԶԷՆԻ

Այս հաշուոյն մնացորդին միջոցաւ պիտի հասկընանք թէ՛ մեր ըրած գործողութիւններէն շահ ըրինք թէ՛ վաս այս հաշիւը գոցելու համար հետեւեալ խորհրդածուծիւնը կ'ընենք :

Փետրուար ամսոյ փորձակշռոյն մէջ Շահ եւ Զէնի պահանջքին կողմը տեսանք գումար մը . . . . . 825

Այս գումարին վրայ աւելցուցինք.

1°. Ընդհանուր ապրանքէն ըրած շահերնիս . . . 5556 1/2  
2°. Գ. Մըսրեանի ֆոլի » » » 359 5915 1/2  
Ըսել է թէ՛ պահանջքին գումարն եղաւ . . . . . 4758 1/2

Դարձեալ այս հաշուոյն պարտքին կողմը տարինք,

1°. Ընդհանուր ծախուց հաշուեփակը . . . . . 800  
2°. Տան » » » . . . . . 1200  
3°. Անձնական » » » . . . . . 600 2600  
Որով պարտքին գումարն եղաւ . . . . . 2600

Զոր պահանջքին ընդհ. գումարէն հանելով ունեցանք 2158 1/2

զրուչի գումար մը, որ մեր երկամսեայ գործողութիւններէն ունեցած զուտ շահերնիս կը ցուցընէ, այս գոյացած շահը մեր Դրամագլխոյն վրայ կ'աւելցընենք, գրելով՝

ՇԱՀ ԵՒ ԶԷՆ ԴՐԱՄԱԳԼՒՅՆ 2158 1/2

(Տէս Օրհաշիւ երես 6).

Հիմա որ բոլոր շահ ու վաս ցուցընող հաշիւները գոցեցինք, եւ Օրհաշուին բոլոր գործողութեանց ճշդութեանը համոզուեցանք, կը մնայ մեզ մեր վիճակը գիտնալ Ընդհանուր հաշուեկշռոյ միջոցաւ, զոր պատրաստելու համար, ինչպէս որ առաջ ըրինք, երկու երես թղթի վրայ՝ ձախ կողմը պէտք է գրել գոյքերնիս (actif) կազմող իրերը, ինչպէս են՝

- 1°. Մթերանոցը գտնուած ապրանքները .
- 2°. Դրամարկը » պատրաստ դրամը .
- 3°. Ընդունելի տոմսակները .
- 4°. Շարժուն եւ անշարժ ստացուածքները .
- 5°. Զանազան պարտականները .

Իսկ աջ կողմը՝ պարտքերնիս (passif) կազմող իրերը, ինչպէս են՝

- 1°. Վճարելի տոմսակները .
- 2°. Զանազան պահանջողք .

Սկսինք այժմ շինել մեր երկամսեայ գործողութիւններէն վերջը՝ մեր վիճակը յայտնող Ընդհանուր հաշուեկշիռը : (Տէ՛ էբ՛ 140, 141)

ԾԱՆՕԹ. Ընդհանուր հաշուեկշիռը նախ պարզ թղթի վրայ ընելու է, եւ վերջը երբ հաշիւները ճիշդ ըլլան՝ էնվանթի տետրակը անցընելու է :

ՀԱՇԻՒՆՆԵՐԸ ԳՈՑԵԼ ԵՒ ԲԱՆԱԼ

Հաշիւները գոցելու եւ բանալու համար երկու տեսակ հաշիւներ կը գործածուին, այսինքն՝ Ելից կշիռ, որ ընդհանուր հաշուեկէտոյ ատեն հաշիւները կը գոցէ, եւ Մտից կշիռ, որ սոյն գոցուած հաշիւները վերստին կը բանայ:

ԵԼԻՑ ԿՇԻՌ

Ընդհանուր հաշուեկէտ ըրած ատեննիս տեսանք որ՝ մէկ քանի պահանջող եւ պարտական չի գոցուած հաշիւներ մնացին, սոյն հաշիւները կը գոցուած համար, այսինքն՝ պարտքին եւ պահանջքին գումարները հաւասարեցնելու համար, պէտք եղած գումարը նուազ կողմը աւելցնելու է:

Չի գոցուած հաշիւները գոցելու համար պիտի ենթադրենք որ՝ Ելից կշիռ անուն մէկուն կը յանձնենք մեր գործը, ուստի իրեն կը թողունք մեր ընդհանուր հաշուեկէտոյն պարունակութիւնը, այսինքն՝ սնտուկը պատրաստ դրամը, ընդունելի տոմսակները, զանազաններէ սնեցած առնելիքնիս, միով բանիւ ընդհանուր հաշուեկէտոյն Գոյժը նաեւ ընդհանուր հաշուեկէտոյն Պարսիք կազմող իրերը, այսինքն՝ վճարելի թուղթերնիս, զանազաններու ունեցած պարտքերնիս եւ Դրամագլուխնիս:

Արդ՝ ընդհանուր հաշուեկէտոյն գոյքը Ելից կշիռն յանձնած ատեննիս՝ զայն պարսակաւ պիտի ընենք հետեւեալներուն

- 1<sup>o</sup> Ընդհանուր ասորանաց.
- 2<sup>o</sup> Դրամարկղին .
- 3<sup>o</sup> Ընդունելի տոմսակաց .
- 4<sup>o</sup> Կարասեաց .

5<sup>o</sup> Զանազան պարտականաց, որք են՝ Պանք Օթօման, Գ. Մըսըրեան եւ: Իսկ պարտքը յանձնած ատեննիս՝ զայն Պահաւնջող պիտի ընենք հետեւեալներէն

- 1<sup>o</sup> Վճարելի տոմսակներէն.
- 2<sup>o</sup> Դրամագլխէն՝

Եւ այս յօդուածներն Օրհաշուին մէջ գրելով եւ Մայր-հաշիւ տանելով բոլոր հաշիւները կը գոցուին:

Ըսածնիս աւելի լաւ հասկընալու համար՝ ուսանողը կրնայ Օրհաշուոյ 6<sup>րդ</sup> եւ 7<sup>րդ</sup> թիւերն աչքէ անցընել, ուր մեր երկամսեայ գործողութեանց Ելից կշիռը շինած ենք:

ՄՏԻՑ ԿՇԻՌ

Ելից կշիռն ընելէ վերջը տեսանք որ Մայր-հաշուին բոլոր հաշիւները գոցուեցան, սոյն գոցուած հաշիւները վերստին բանալու համար՝ Մտից կշիռ անուն հաշիւը կը գործածուի, որն որ առաջնոյն հակառակն ըլլալով՝ հաշիւները նորէն կը բանայ եւ տոմարները վերստին կ'սկսի Ելից կշիռն պէս պիտի ենթադրենք դարձեալ որ Մտից կշիռ անուն անձ մը իւր գործոց սկզբնաւորութիւնը մեզ կը յանձնէ, բայց այս ենթադրութիւնն առաջնոյն հակառակն ըլլալով, Մտից կշիռը պարտական պիտի ըլլայ ընդհանուր հաշուեկէտոյ Պարսիք կազմող հաշուոյ՝ որոնցմէ Ելից կշիռը պահանջող եղաւ, եւ պահանջող պիտի ըլլայ ընդհանուր հաշուեկէտոյ Գոյժը կազմող հաշիւներէն՝ որոց Ելից կշիռը պարտական եղաւ:

Արդ՝ հաշիւները նորէն բանալու համար Օրհաշուին մէջ յօդուածով մը պէտք է Մտից կշիռը պահանջող ընել տուածներուն համար.

- 1<sup>o</sup> Վաճառատունը դտնուած ասորանքէն.
- 2<sup>o</sup> Դրամարկղը » ստակէն.
- 3<sup>o</sup> Ընդունելի տոմսակներէն.
- 4<sup>o</sup> Զանազան պարտականներէն.
- 5<sup>o</sup> Կարասիներէն .

Ուրիշ յօդուածով մ'ալ Մտից կշիռը պարտական պիտի ընենք.

- 1<sup>o</sup> Վճարելի տոմսակաց.
- 2<sup>o</sup> Դրամագլխոյն.

Եւ այս յօդուածները Մայր-հաշիւ տանելով հաշիւները վերստին բացած կ'ըլլանք: Ըսածնիս լաւ հասկընալու համար ուսանողը կրնայ աչքէ անցընել Օրհաշուոյ 7<sup>րդ</sup> թիւը, ուր մեր երկամսեայ գործողութեանց Մտից կշիռը շինած ենք:

ՕՐՀԱՇՈՒԻՆ ՄԷՋ ՍՊՐԴԵԱԼ ՍԵԱԼՄՈՒՆՔՆ ՌԻՂՂԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Օրհաշուին մէջ անուշադրութեամբ շատ տեսակ սխալմունք կըրնան սպրդիլ. այսինքն՝ կրնայ ըլլալ որ 1<sup>o</sup> մասնաւոր գումարները կամ ընդհանուր գումարը սխալ ըլլայ. 2<sup>o</sup> հաշուոյ մը տեղ ուրիշ մը պարտական կամ պահանջող ըլլայ. 3<sup>o</sup> հաշիւ մը պարտական ըլլալու տեղ՝ պահանջող, եւ պահանջող ըլլալու տեղ՝ պարտական ըլլայ, եւն: Վաճառականական Օրինագրքին 5<sup>րդ</sup> յօդուածոյն տրամադրութեանը համեմատ՝ չենք կրնար վերոյիշեալ սխալմունքը քերթելով ուղղել, այլ օրինաւոր ըլլալու համար՝ ուրիշ յօդուած մը գրելով կրնանք ուղղել:

1°. Դիցուք թէ մեր Օրհաշուին 5<sup>րդ</sup> երեսին վրայ

ԴՐԱՄԱՐԿՂ ԳՐԻԳՈՐ ՄԸՍԸՐԵԱՆԻ

գրած յօդուածնու 5000 շրջի գումարը սխալմամբ սխալակին մէջ 5000 շրջ անցուցած ըլլանք . այս սխալն ուղղելու համար Օրհաշուին մէջ կրկին յօդուածով մը կը սենք ,

ԴՐԱՄԱՐԿՂ Գ. ՄԸՍԸՐԵԱՆԻ 2000 շրջ .

Փետր. 10 յօդուածոյն գումարի սխալն ուղղելու համար :

2°. Օրինակի համար՝ Պօղոսէն արդէն ապրանք առած ըլլալով , քանի մ'օրէն վերջը փոխարէն տոմսակ մը տուած եմ . այս յօդուածը սխալմամբ Օրհաշուին մէջ այսպէս անցուցած եմ ,

ԸՆԴՀ. ԱՊՐԱՆՔ ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՑ

Բայց որովհետեւ ապրանքն առած՝ ատեննիս անգամ մը Ընդհ. ապրանքը պարտական ըրած էինք , եւ Պօղոսը պահանջող , մինչդէռ վերոյգրեալ յօդուածով փոխանակ Պօղոսը պարտական ընելու , (որովհետեւ տոմսակն առաւ) Ընդհ. ապրանքը կրկին պարտական ըրինք . ուստի այս սխալն ուղղելու համար կը գրենք յօդուած մը

ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԻ ԸՆԴՀ. ԱՊՐԱՆՔ

Օրհաշուին այնինչ յօդուածոյն սխալմունքին համար :

Ա. յս յօդուածով Ընդհ. ապրանքին սխալը կուղղուի , եւ կը գրենք՝

ՊՕՂՈՍ ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՑ

3°. Դիցուք թէ Գրիգորին ծախած ապրանքիս գումարը սխալմամբ Յակոբին հաշուոյն անցուցած ըլլամ . զայս եւս ուղղելու համար նախ կը գրեմ՝

ԸՆԴՀ. ԱՊՐԱՆՔ ՅԱԿՈԲԻՆ

Օրհաշուին այսինչ երեսի սխալ յօդուածն ուղղելու համար :

Ա. յս յօդուածով Ընդհ. ապրանքը պահանջող ըրինք , որով ըսել եղաւ թէ ապրանք ծախած չեղանք :

Արդ սխալը ուղղելէ վերջը , ուղիւր գրելու համար ուրիշ յօդուած մը կը գրենք՝

ԳՐԻԳՈՐ ԸՆԴՀ. ԱՊՐԱՆՔ

ՄԱՅՐ-ՀԱՇՈՒԻՆ ՄԷՋ ԵՂԱԾ ՍԽԱԼՄՈՒՆՔՆ ՈՒՂՂԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Երբ Մայր-հաշուին մէջ թուանշանաց սխալմունք ըլլայ , կրնայ սխալ թիւը քերթուիլ եւ տեղը ձիւղը գրուիլ . վասնզի Մայր-հաշուին մէջ , որ օրինաց պահանջած տետրակներէն չէ , այս տեսակ քերթուածք ապօրինաւոր չեն համարուիր , բայց եւ այնպէս աւելի լաւ կըլլայ որ տոմարակալն ուշադրութիւն ընելով այս տեսակ սխալմունք չընէ :

Երբ հաշիւ մը սխալմամբ փոխանակ Պանակոյֆին՝ Պարսֆին կողմն անցած ըլլայ , նոյն հաշիւը կը տարուի պահանջքին կողմը՝ եղած սխալմունքն ուղղելու համար . վերջը երկրորդ անգամ պահանջող կընեն նոյն հաշիւը կամ անձը որ առաջ պիտի ըլլար :

ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՏԵՏՐԱԿՆԵՐԸ ՍԿՍԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Վաճառակալի մը տետրակները բանալ

Վաճառականական տետրակները բանալ կամ սկսելը Տոմարակալութեան առաջին գործողութիւնն է , որոյ համար դժուարութիւն չի կայ : Դիցուք թէ այսօր վաճառականութեան սկսելով 2000 լիւրա դրինք իբրեւ գրամագլուխ , եւ տետրակներնիս կ'ուզենք կրկնատոմարի ձեւով բանել . ուստի կ'ըսենք՝

- Հ. Ո՞ր հաշին առաւ .
- Պ. Դրամարկդ :
- Հ. Ո՞ր հաշիւը տուաւ .
- Պ. Դրամագլուխ (վաճառականի անուան տեղ) :

Հետեւաբար Օրհաշիւը կ'սկսինք այս առաջին յօդուածով եւ կ'ըսենք՝

ԴՐԱՄԱՐԿՂ ԴՐԱՄԱԳԼԻՌՑՆ

Վաճառականութեան սկսելով դրած դրամագլուխ . 200000

Կրնայ ըլլալ որ մէկը վաճառականութեան սկսած ատեն՝ իբրեւ գրամագլուխ՝ տտակ եւ զանազան վաճառելի իրեր ունենայ , այսինքն՝ ապրանք , ընդ . տոմսակներ , եւն :

Օրինակի համար՝ Գէորգ Մկրտիչեան վաճառականութեան ձեւնարկելով հետեւեալները դրաւ իբր գրամագլուխ .

Պատրաստ գրամ . . . . .	100000
Ապրանք (տեսակը եւն նշանակէ) . . . . .	80000
Ընդ . տոմսակներ . . . . .	70000
	<hr/>
	250000

Ուստի կ'ըսենք .

- Հ. Ո՞ր հաշիւներն առին .
- Պ. Դրամարկդ , Ընդհ. ապրանք եւ Ընդ. տոմսակը :
- Հ. Ո՞ր հաշիւը տուաւ .
- Պ. Դրամագլուխ :

Հետեւաբար Օրհաշուին առաջին յօդուածը պիտի ըլլայ՝

ՋԱՆԱԶԱՆՔԻ ԳՐԱՄԱԳԼԽՈՅՆ

Վաճառականութեան սկսելով հետեւեալները դրի իրրեւ դրամադրուիս

ԳՐԱՄԱՐԿՂ

Պատրաստ դրամ.....	100000	
ԸՆԳՀԱՆՈՒՐ ԱՊՐԱՆՔ		
(Հոս ապրանքին տեսակը եւ նշանակէ).....	80000	
ԸՆԳՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿՔ		
(Ասոնց ալ մանրամասնութիւնքը գրէ).....	70000	250000

Արդիւն վաճառականութեամբ զքաղող, բայց կրկնասումարի ձեւով սեռակներ չունեցող վաճառականի մը սեռակները կրկնասումարի վերածել.

Վաճառական մը երբ Դրամարկը պատրաստ դրամ, կարասիք, վաճառատունն ապրանք, գրապանակն ընդունելի տոմսակներ, զանազանաց վրայ առնելիքներ, փոխարէն վճարելի տոմսակներ կամ փոխանակագրեր, եւ զանազանաց սրտոք ունենայ, այն ատեն այսպիսի վաճառականի մը տեւորակները կրկնատոմարի վերածելու համար, այս վաճառականին գոյքը եւ պարտքը կազմող իրերն իրենց տեսակովը գրելով՝ պէտք է ընդհանուր հաշուեկշիռը պատրաստել հետեւեալ կերպիւ.

ԸՆԳՀԱՆՈՒՐ ՀԱՇՈՒՆԵԿՇԻՈՒ

ԳՐԻԳՈՐ ՍԱՀԱԿԵԱՆ ՎԱՃԱՌԱԿԱՆԻ

Գ Ո Յ Ք

Սնտուկը պատրաստ դրամ.....	50000	
Կարասիք.....	5000	
Զանազան ապրանք (տեսակովը գրէ).....	65000	
Ընդունելի տոմսակք (մանրամասնութիւնքը դիր).....	5000	
Զանազան պարտականք, վնդներէ առնելիք..	125000	250000

Պ Ա Ր Տ Ք

Վաճառատան լրացեալ եռամսեայ վարձք.....	2000	
Վճարելի տոմսակք ի շրջաբերութեան.....	58000	
Զանազան պահանջատարք.....	60000	100000
Ուստի վաճառականին զուտ դրամադրուին է.		150000

Կրկնատոմարի ձեւով տեւորակներն սկսելու համար երկու յօդուած պիտի շինենք. այսինքն՝ պիտի ենթադրենք որ Դրամադրուիս անուն մէկը իւր ինչքերը մեկի ձգեց. ուստի նախ Դրամադրուիսը պահանջող պիտի ընենք 250000ի գոյքը կազմող իրաց համար. յետոյ պարտական պիտի ընենք՝ իւր սրտոքը կազմող 100000ի իրաց եւ 150000ի զուտ դրամադրուիսը համար:

Ուստի պիտի ըսենք Ա. յօդուածոյն համար,

- Հ. Ո՞ր հաշիւներն առին.
- Պ Դրամարկը, Կարասիք, Ընդհ. ապրանք, Ընդ. տոմսակք, Զանազան պարտականք:
- Հ. Ո՞ր հաշիւը տուաւ.
- Պ. Դրամադրուիս:

ՋԱՆԱԶԱՆՔԻ ԳՐԱՄԱԳԼԽՈՅՆ

ԳՐԱՄԱՐԿՂ.....	50000	
ԿԱՐԱՍԻՔ.....	5000	
ԸՆԳՀ. ԱՊՐԱՆՔ.....	65000	
ԸՆԳՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿՔ.....	5000	
ՋԱՆԱԶԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՔ.....	125000	250000

Բ. յօդուածոյն համար պիտի ըսենք,

- Հ. Ո՞ր հաշիւն առաւ.
- Պ. Դրամադրուիս:
- Հ. Ո՞ր հաշիւները տուին.
- Պ. Ընդհ. ծախք կամ վաճառատան վարձք, Վճարելի տոմսակք, Զանազան պահանջատարք:

ԳՐԱՄԱԳԼՈՒԽ ԶԱՆԱԶԱՆԱՑ

ԸՆԳՀԱՆՈՒՐ ԾԱԽՈՒՑ.....	2000	
ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԱՑ.....	58000	
ՋԱՆԱԶԱՆ ՊԱՀԱՆՋԱՏԵԱՐՑ.....	60000	100000

Ահաւասիկ հոս կը դնենք իրրեւ հրահանգ զանազան յօդուածներ պարունակող Ձեռատետր մը, զորս ուսանողը ուշադրութեամբ պէտք է որ լուծէ եւ անցընէ Օրհաշիւն ու Մայր-հաշիւը եւ երկրորդական տեւորակները: Բոլոր յօդուածները լուծելէ եւ Օրհաշիւը փոխադրելէ վերջը՝ պէտք է որ Ընդհ. հաշուեկշիռը պատրաստէ եւ հաշիւները գոցէ եւ վերստին բանայ: Որպէսզի ուսանողին դիւրութիւն ըլլայ, եւ կերպով մը իւր լուծած խնդրոց ճշդութեանը համոզուի, ուստի այս Ձեռատետրին Ընդհ. հաշուեկշիռը մեք շինեցինք տեւորակին վերջը. ուսանողն ալ երբ Ընդհ. հաշուեկշիռը շինելու ըլլայ, պէտք է որ մեր շինածին հետ բաղդատէ, եւ եթէ ճիշդ գտնելու ըլլայ, ըսել է թէ ուղիւ են գործողութիւնները. եթէ համաձայն չըլլայ, սխալ գրուած են, հետեւաբար ըրած գործողութիւնները պէտք է որ վերստին աչքէ անցընէ:

# Չ Ե Ռ՝ Ա Տ Ե Տ Ր

## Վ Ա Հ Ա Ն Ա Ր Շ Ա Կ Ո Ւ Ն Ի Ո Յ

Ի Կ. Պոլիս Ղալաթիա, Բերեմսլե-բազար, քիւ

1 Մայիս 1876	
Վաճառականութեան սկսելու համար հայրս ինձ տուաւ, իբր նուէր, իւր նախկին տանը հետեւեալ գոյքերը, որն որ իմ դրամագլուխս կը կազմէ. Պատրաստ դրամ 1600 Լ. Օսմ. 160000 Հետեւեալ ապրանքները. Թիւ 70—79, 10 տկա՝ Պօւտոյի կարմիր գինի 20000 » 10—54, 25 սարկ աճառ, 2500 հօ. գին 4 10000 Տոմսակ Ն. Յակոբեանի 18 Յունիս 10000 Իւր վաճառատան զանազան կարասիները 1000	201000
Նոյն	
Նստած վաճառատանս եւտմանայ վարձքը վճարեցի	1500
2 Մայիս	
Գնեցի կանխիկ մէկ անտ. ստտիներս պահելու համար	1000
5 Մայիս	
Ծախեցի Բիւզանդ Եսայեանի հետեւեալները, վճարելի 91 օրէն. Թիւ 10-19, 10 սրկ՝ աճառ, 980 հօ/ս. գ. 4 <sup>5</sup> / <sub>4</sub> 4655 » 70, 1 տակառ գինի Պօւտոյի 2445	7100
4 Մայիս	
Գռէտի Լիօնէի հետ ընթացիկ-հաշիւ մը բացինք, տարեկան 6% տակառով. այսօր զրկեցի յիշեալ դրամանոցին 200 լիրա	20000
5 Մայիս	
Տան ծախուցս համար վճարեցի սպասուորիս	750
6 Մայիս	
Այսօր շարժ սնտուկի հաշիւս նայելով տեսայ որ մէկ լիրա պակաս կու գայ. պէտք եղած հաշիւներն	

աչքէ անցընելէ վերջը՝ պակասը չի կրցի գտնալ. ուստի այս սխալը ուղղելու համար, պարտաւորեցայ սոյն յօդուածը գրել.	100
8 Մայիս 76	
Այսօր վաճառատանս բեռնակիրը ինձ տուաւ մէկ լիրա, զոր աւելու ժամանակը գտած էր. ասի շարժ օրուան սխալն է, զոր ուղղելու համար այս յօդուածը գրեցի.	100
Նոյն	
Գնեցի Մ. Եւ Օ. Յակոբեաններէն, վճարելի ամսոյս մէջ, թիւ 504 մէկ հակ պասմա 250 ծրար, 7500 մէթր. գին 2 <sup>1</sup> / <sub>2</sub> .	18750
9 Մայիս	
Գնեցի կանխիկ 100 ծրար շալաքի 4950 եարտա. գին 4 <sup>1</sup> / <sub>2</sub> .	22275
Նոյն	
Ծախեցի Եօրկաքի Փափազ օղլու խանութարանին 40 ծրար շալաքի, 1970 եարտա. գին 5 <sup>1</sup> / <sub>2</sub> 10855 Փոխարէն ինձ տուաւ իմ / հ. իւր տոմսակը 2/ ամսուան.	10855
10 Մայիս	
Ծախեցի հետեւեալներուն հետեւեալ ապրանքները Մկրտիչ Յէրմանեան կարնեցիին 50 ծրար պասմա, 1505 մէթր. գին 5 զրուշ. փոխարէնը կանխիկ վճարեց. 4515 Պօղոս Աստարճեան Էտիրնէցիին Թիւ 20-22, 5 սարկ աճառ, 190 հ. գ. 5 950 50 ծրար պասմա, 1495 մէթր. » 5 <sup>1</sup> / <sub>8</sub> 4672 5622	10157
11 Մայիս	
Ամսոյս 8ին Մ. Եւ Օ. Յակոբեաններէն գնած ապրանագս գումարը վճարեցի.	18750
12 Մայիս	
Պօղոս Աստարճեանի ծախած ապրանագս փոխարէն ասի իրմէ հետեւեալները.	

Կանխիկ ստակ.	622		
Ավրամ Նիկոի վրայ փոխանակագիր մը ի 15 Յուլիս.	5000	5622	
<hr/>			
12 Մայիս 76			
Բիւզանդ Եսայեան ինձ ունեցած պարտքը այսօր վճարել ուղեւով 5% զեղչել ուղեց, որուն ես ալ հաճեցայ եւ առի .			
Կանխիկ վճարածը.	6745		
Վար դրած զեղչը.	555	7100	
<hr/>			
14 Մայիս			
Գնեցի 100 ծրար սեւ սաթէն եռնուր, 4768 եարտա. գին 6 1/4 .			
	29800		
Փոխարէնը վճարեցի հետեւեալ կերպով .			
Կանխիկ ստակ.	4800		
Խմ/ տոմսակա թիւ 1, 41/ օրուան	15000		
Հրամանագիր մը Գոէտի Լիօնէի	10000	29800	
<hr/>			
15 Մայիս			
Ծախեցի 2 ամիս պայմանաժամաւ Պաղտասար Թիւրքեան Տրապիզոնցիին, թիւ 71—73, 3 տակառ Պոստօի գինի. գին 2500 դրուչէն 7500, սակայն ինքը 4% , այսինքն 500 դրուչ զեղչելով վճարեց .			
Թէեւ ծախած ապրանքնիս 7500 դրուչի էր, բայց որովհետեւ 300 զեղչ եղաւ, ըսել է թէ 7200 դրուչի ծախած եղանք. հետեւաբար Նոյնչափ գումարի համար Գրամարկը պարտական պիտի ըլլայ:			
<hr/>			
16 Մայիս			
Իրենց հրամանին համեմատ զրկեցի Կարին Ա. եւ Գ. Երկանեանի հետեւեալները .			
100 ծրար պատմա, 5002 մէթր. գին 5 1/4 5	9756 1/2		
20 » շալաքի, 945 » » 6	5670		
Թիւ 25-24, 2 պարկ աճառ 125 հ. » 5	625		
	16051 1/2	16051	20
Փոխարէն քաշեցի իրենց վրայ 5/ ամսուան փոխանակագիր մը, զոր դրի դրոպանակս .			
<hr/>			
17 Մայիս			
Քոէտի Լիօնէի զրկեցի ընթացիկ-հաշուով 500 լիրա Օսմանեան .			
		50000	

17 Մայիս 76			
Գնեցի Ֆոթիատիէն 10 ծրար չուխա գունաւոր, ընդամենը 450 մէթրո. գին 70 դրուչէն .			
	51500		
Զանազան ծախք .			
	100	51600	
Վճարեցի հետեւեալ կերպով .			
Թիւ 2. Խմ տոմսակա, 51/ օրուան	10000		
» 5. » » 61/ »	10000		
Կանխիկ վճարեցի .	6500		
Մնացեալն ալ ուզած ատենը պիտի տամ .	5000		
	51500		
<hr/>			
18 Մայիս			
Եօրկաքի Փափազ օղլու խանութպանին տոմսակը զեղչել տուի % 4 ով եւ ստակն առի կանխիկ .			
	10402		
Զեղչ 4% , 2 ամսուան համար .			
	455	10855	
<hr/>			
19 Մայիս			
Ղրկեցի Քոէտի Լիօնէի ընթացիկ-հաշուով .			
		50000	
<hr/>			
Նոյն			
Ծախեցի հետեւեալներուն հետեւեալները .			
Գրիգոր Թորոսեանի 1/ ամիս պայմանաժամաւ 20 ծրար սեւ սաթէն, ընդամենը 945 մէթրո . գին 7 1/2 դրուչէն .			
	7087 1/2		
Կարնեցի Տրդատ Նէրկիլեանին 2/ ամսուան համար, 50 ծրար պատմա 1498 մէթրո .			
	4494	11581	20
<hr/>			
21 Մայիս			
Պրուսացի Յակոբ Պօղոսեանի հետ համաձայնեցանք որ՝ իւր հաշուոյն 2% յանձնարարականաւ ծախեմ իւր մետաքսները, եւ մէջերնիս հաստատեցինք տարեկան 9% առկասի հաշուով ընթացիկ-հաշիւ մը .			
Այսօր ստացայ յիշեալէն իւր հաշուոյն ծախելու համար՝ հետեւեալները .			
Թիւ 15. 1 հակ մետաքս 120 հօխա զուտ .			
» 16. 1 » » 122 » »			
Յիշեալ երկու հակաց փոխադրութեան ծախքերը վճարեցի .			
		50	



<p>(Որովհետև հիմնադրել է ներ գիտեր ապրանքներն ինչ գին ծախելիս՝ հետևարար ծախուելուն պիտի սպասենք Յակորը պահանջող ընելու համար, միայն թէ «Յակոր Պողոսեանի մետաքսը» ըսելով հաշիւ մը կը բանանք, և զայն պարտական կ'ընենք ըրած ծախքերնու համար) :</p>	
<p>22 Մայիս 76</p>	
<p>Ծախեցի Կարնեցի Գ. Մըրըրեանին Հետեւեալները.          5 ծրար չուխա, 220 եարտա, 88 զրուէն. 19360          Թիւ 25—54. 10 պարկ աճառ, 1527 հօխա          գին 5 զրուշ. 6655</p>	
	25995
<p>Փոխարէնը վճարեց Հետեւեալ կերպով.          Իւր տամակը իմ/հ. ի 22 Յուլիս. 15000          9 սնտուկ ըստարմաշէթ, 1050 քիւօ. գին 10. 10500          Կանխիկ. 495</p>	25995 —
<p>Նոյն</p>	
<p>Պրուսացի Յակոր Պողոսեան ինձ հրաման ըրաւ որ՝          իւր հաշուոյն հոս վճարեմ Գէորգ Սարաֆեանի 80          լիրա Օամանեան, որուն համար տուի հրամանագիր          մը Բոէտի Լիօնէի վրայ .</p>	8000 —
<p>23 Մայիս</p>	
<p>Պրուսացի Յակոր Պողոսեանի մետաքսներէն ծախեցի Միհրան Եղիազարեանի մէկ հակ թիւ 15,          120 հօխա. գին 175 զրուշ 21000</p>	
<p>Փոխարէն քաշեցի յիշեալին վրայ Հետեւեալ փոխանակագրերը, զորս ընդունել տալով՝ գրապանակս գրի.          Փոխանակագիր իմ/հ. ի 21 Յունիս 5000          » » ի 31 Յունիս 5000          » » ի 25 Յուլիս 5000          » » ի 25 Օգոստոս 6000</p>	21000 —
<p>24 Մայիս</p>	
<p>Պրուսացի Յակոր Պողոսեանի մետաքսէն ծախեցի Մարտիրոս Կարապետեանի, 91/ օր պայմանաժամաւ,          Թիւ 16. մէկ հակ 125 հօխա. գին 180.</p>	22140 —
<p>Նոյն</p>	
<p>Գրիգոր Թորոսեան սնանկանալով՝ ունեցած առնե-</p>	

<p>լիքիս % 70 ը տուաւ. 4961 1/2          Ըրած վիսսս. 2126</p>	7087 20
<p>(Սնտուկը 4961 1/2 զրուշ մտաւ, եւ Գրիգոր Թորոսեան տուաւ, ուստի պէտք է որ սնտուկը պարտական ըլլայ. բայց որովհետեւ Գրիգոր Թորոսեան արդէն 7087 1/2 ի պարտական եղած էր. ուստի մնացած 2126 զրուշը վիսսս մը ըլլալուն՝ յիշեալին հաշիւն ալ գոցելու համար Շահ եւ Զէնը պարտական կ'ընենք նոյն գումարին համար):</p>	
<p>25 Մայիս 76</p>	
<p>Պրուսացի Յակոր Պողոսեանի մետաքսներուն վաճառումէն ինձ վերաբերեալ 2 % յանձնարարականս          ի վերայ 45140 զրուշի.</p>	865
<p>Նոյն</p>	
<p>Պրուսացի Յակոր Պողոսեանի զրկեցի իւր մետաքսներուն վաճառման հաշիւը, այսպէս.          Թիւ 15. հակ 120. հօխա. գին 175 21000          » 16. » 125. » » 180 22140          Գումար. 45140</p>	
<p>Զանազան ծախք 50 }          Իմ յանձնարարականս 2 % 865 } 895</p>	
<p>Զուտ գումար՝ որ իւր ընթացիկ-հաշուոյն          անցաւ 51 Յուլիս թուականաւ . 42247</p>	42247 —
<p>26 Մայիս</p>	
<p>Հետեւեալ փոխանակագրերը զեղջել տալով ստակներն առի.          Ա. եւ Գ. Երկանեանի փոխանակագիրը 16051 1/2          Միհրան Եղիազարեանի » 5000</p>	
	21051 1/2
<p>Կանխիկ առի. 20420          Զեղչ 5 % 651 1/2</p>	21051 20
<p>27 Մայիս</p>	
<p>Ղրկեցի Բոէտի Լիօնէի .</p>	50000 —
<p>29 Մայիս</p>	
<p>Զեղչելով ծախու առի Ավրամ Նիկօի 50 լիրանոց մի փոխանակագիրը ի 29 Յունիս .          վճարածս. 4900          վար զրած զեղչս 2 % 100</p>	
	5000

51 Մայիս 76		
Ամուսյա մէջ ըրած ծախքերս վճարեցի .		
Վաճառատան զանազան ծախք (¹) .	700	
Տան ծախքերս .	500	
Անձնական »	500	1500 —
(¹) Ընդհ. ծախսը հաշուոյն պիտի անցնի .		
1 Յունիս		
Գնեցի Գէորգ Մկրտիչեանէն մէկ ամիսէն վճարե- լու պայմանաւ՝ հետեւեալ ապրանքները .		
50 զամբիւղ բրինձ Եգիպտոսի 1500 հ. 2	5000	
թ. 90—109, 20 տակառ շաքար 1700 » 4 1/4	7225	
	10225	
Յիշեալ ապրանաց փոխադրութեան ծախք .	155	10360 —
2 Յունիս		
Ծախեցի կանխիկ Միհրան Մալխասեանի, թիւ 74- 79, 6 տակառ Պօռտօի գինի. գին 2400 շրուշ .		14400 —
3 Յունիս		
Ծախեցի Մարտիրոս Գրիգորեանի հետեւեալները , որուն փոխարէն աւելի 2/ հ. 2/ ամսուան իւր տոմսակը .		
20 ծրար շալաքի 1005 եար" գին 5 3/4	5778 3/4	
20 » սեւ սաթէն 950 1/2 » » 7 1/4	6891 1/4	12670 —
Նոյն		
Գնեցի Բուսէլի երկաթուղեաց բաժիններէն 10 հատ . գին 45 Փրանքէն, 450 Փրանք .		1980 —
4 Յունիս		
Լոնտրայէն Բերսիան շոգենաւով ստացայ Օ. Մա- նուկեանէն £ 56. 1—ի արժողութեամբ		
թիւ 170—179, 10 պարկ խաչվէ, ընդամենը 508 հօխա. գին 12	6096	
Յիշեալ ապրանաց համար վճարեցի մաքս եւ զանազան ծախք .	404	6500 —
5 Յունիս		
Ղրկեցի Բուէտի Լիւնէի վրա Օսմանեան 200 .		20000 —

5 Յունիս 76		
Ղրկեցի Ճումա տօնավաճառին հետեւեալները .		
20 ծրար շալաքի 1028 եարա. գին 5 1/2	5654	
50 » սեւ սաթէն 1440 » » 6 5/4	9720	
5 » չուխա 250 » » 78	17940	55514 —
(Որպէս զի հասկընամ այս տօնավաճառը զրկած ապրանքներէս ընկիր շահս, ուստի զատ հաշիւ մը կը բանամ «Ճումաի տօնավա- ճառ» անունով) :		
6 Յունիս		
Ծախեցի Սարգիս Թաղտորեանի հետեւեալ ապ- րանքները .		
15 զամբիւղ բրինձ, 750 հօխա. գին 2 1/2	1875	
5 անտ. ըսպարմաչէթ 585 քիւօ. » 11	6455	
	8510	
Փոխարէնը վճարեց հետեւեալ կերպով .		
կանխիկ .	2214	
Լոնտրայի Յ. Փափաղեան եւ Ընկ. վրայ £ 56.		
1—; վարկ մը բանալով ի գին 108 3/4 .	6096	8510 —
Նոյն		
Լոնտրայի վրայ փոխանակագրոց աժանութենէն օգտելու համար՝ գնեցի այսօր Բասթէլի միջնորդին ձեռօք Տ. եւ Կ. Գարակէօղեան ազաներէն՝ £ 400.		
5/ ամսուան ի վերայ Շուստըր սըն եւ Ընկերու- թեան ի Լոնտրա. գին 108 1/2	45400	
Փոխարէն վճարեցի կանխիկ .	15400	
Մնացեալը 4—5 օրէն .	50000	45400 —
24 Յունիս		
Մօրեղբայրս մեռնելով ժառանգեցի իրմէ հետեւ- եալները .		
Պատրաստ դրամ .	50400	
100 հատ երկաթուղեաց բաժին , որն որ օրուան գնով 58 Փրանքէն՝ կ'ընէ	16720	
Բերա Թաղտորեանի ետին տուն մը թիւ 71, որուն արժէքն է այսօր .	25000	
Իւր կարասիները .	1880	
Չանազաններու վրայ ունեցած առնելիքը .	8000	
	100000	100000 —

Այս գումարէն պիտի վճարեմ իւր մէկ քանիներու ունեցած պարտքը.	20500	
Նաեւ իւր ըրած կտակը Ազգային Հիւանդանոցին.	9500	50000
<p>(Որովհետեւ ըրած ժառանգութիւնս միայն մէկ տեսակ բան չ'ըլլալով՝ մէկ քանի տեսակ իրերէ կը բաղկանայ, նոյնպէս նաև նոյն իրաց դէմ վճարումներ ունինք ընելիք, ուստի սոյն ժառանգութեան արդիւնքը լաւ հասկընալու համար՝ «Ժառանգութեան հաշիւ» ըսելով հաշիւ մը կը բանանք, և ժառանգած իրերնուս իւրաքանչիւրին համար նոյն հաշիւը պահանջող, իսկ փոխարէն վճարածներնուս համար ալ պարտախախտ կ'ընենք. վերջը երբ բոլոր առնելիքներն առնուին և տալիքները տրուին, այն ատեն այս հաշուոյն մնացորդը պիտի ըլլայ մեր զուտ ժառանգութիւնը :</p> <p>Սա ևս յիշենք որ 8000 զրուշի առնելիքին համար «Զանազան պարտականք ժառանգութեան» անունով հաշիւ մը բանալու է):</p>		
9 Յունիս 76		
Ծախսեցի կանխիկ 4 մնասկ ըսպարմաչէթ.	465	
բիւր. գին $11\frac{1}{2}$	5547	20
Նոյն		
Ղրկեցի Քոնստի Լիօնէին ընթացիկ-հաշուով.	50000	
10 Յունիս		
Ժառանգած տանս զանազան նորագութեանցը համար վճարեցի.	1500	
Նոյն		
Ժառանգած տանս եռամսեայ վարձքը կանխիկ առի 25 լիրա Օսմանեան .	2500	
11 Յունիս		
Տ. եւ Կ. Գարակէօղեանս ազաներէն ամսոյս 6 ին զնած £ 400 ի փոխանակազրի հաշուէն մնացած պարտքս վճարեցի այսպէս.		
կանխիկ վճարեցի.	20000	
Հրամանագիր մը Քոնստի Լիօնէի վրայ.	10000	50000
12 Յունիս		
Մօրեղբորմէս ժառանգած կարասիներս ծախսեցի.	2000	
Նոյն		
Մօրեղբորս Ազգային Հիւանդանոցին համար ըրած կտակը վճարեցի.	9500	

13 Յունիս 76		
Մօրեղբորս ունեցած առնելիքներն ամբողջ առի.	8000	
Նոյն		
Լոնտրա Յ. Փալազեան եւ Ընկերութեան հրաման ըրի որ իմ հաշուոյս համար վճարէ հոն Օ. Մանուկեանի՝ իմ վարկս £ 56, 1— ի .	6096	
14 Յունիս		
Լոնտրայի փոխանակազրաց գիները բարձրացած ըլլալով՝ գրաստանակս ունեցած £ 400 ի փոխանակազրիս ծախսեցի. գին $109\frac{1}{4}$ .	45700	
Նոյն		
Մօրեղբորս զանազաններու ունեցած պարտքը ամբողջ վճարեցի .	20500	
Նոյն		
Գնեցի Գ. աղա Մուրատեանէ հետեւեալ ապրանքները .		
1 հակ պասմա 205 ծրար, 6150 մէթր. գ. $2\frac{5}{8}$	14606	
1 » » 245 » 7500 » » $2\frac{1}{2}$	18250	
Փոխարէն տուի ի/հ. իմ տամակներս.		
Թիւ 4 վճարելի ի 14 Յունիս.	10000	
» 5 » ի 13 Օգոստոս.	10000	
» 6 » ի 14 Սեպտեմբեր.	10000	
կանխիկ .	2856	52856
16 Յունիս		
Ղրկեցի Ճոնսն տօնավաճառին 1 հակ պասմա, 205 ծրար, 6150 մէթրո. գին $2\frac{5}{8}$ .	16145 $\frac{3}{4}$	
Յիշեալ հակին համար ծախք .	56 $\frac{1}{4}$	16200
17 Յունիս		
Մօրեղբորմէս ժառանգած 100 բաժին երկաթուղիներս ծախսեցի ի գին 40 Փրանք .	17600	
Նոյն		
Ղրկեցի Քոնստի Լիօնէին.	50000	
18 Յունիս		
Պայմանաժամն այսօր լրացեալ Ն. Յակոբեանի տամակը գանձեցի.	10000	

18 Յունիս 76		
Այսօր դարձեալ ստացայ Պրուսացի Յակոբ Պողոսեանէն իւր հաշուոյն ծախելու համար հետեւեալները.		
Թիւ 20. 1 հակ մետաքս Պրուսայի . 105 հօխ		
» 21. 1 » » » 105 հօխ.		
Յիշեալ ապրանաց փոխադրութեան համար վճարեցի	40	—
19 Յունիս		
Ծախեցի կանխիկ հետեւեալները, իմ հաշուոյս.		
50 ծրար սաթէն, 1452 եարտա . գին 7 10024		
Յակոբ Պողոսեանի հաշուոյն.		
Թիւ 21. 1 հակ 105 հօխ. մետաքս. գին 448 47040	57064	—
Նոյն		
Ղրկեցի Քոնստանտին Լիօնէի ընթացիկ-հաշուով.	50000	—
20 Յունիս		
Գնեցի Օտէսա Մկրտիչ Եանըզեանէն 40 սարկ ալիւր առաջին տեսակ, ընդամենը 1608 հօխա. գին 1 3/4 զրուչէն, մէկ ամիսէն վճարելի . 2814	2814	—
Այս 40 սարկը ձգեցի Օհան Մովսէսեանի քով իմ հաշուոյս ծախելու համար.		
<p>(Պերտրեալ խնդիրը լուծելու համար՝ նախ ապրանքները Մկրտիչէն առած ատեննիս պիտի գրէինք Ընդհանուր ապրանք = Մկրտիչ Եանըզեանի . վերջը Օհան Մովսէսեանի քով ձգած ատեննիս պիտի ըսէինք Օհան Մովսէսեանի քով ապրանքս = Ընդհանուր ապրանքին. ըսել է թէ Ընդհանուր ապրանքը առաջնոյն մէջ պարտական, երկրորդին մէջ պահանջող ըլլալով հաւտարութիւն մը կազմեց, զոր չնչելով կ'ունենանք մինակ Օհան Մովսէսեանի քով ապրանք = Մկրտիչ Եանըզեանի :</p>		
21 Յունիս		
Ծախեցի Սմբատ Ներսէսեանի հետեւեալները .		
15 զամբիւղ բրինձ 750 հօխա. գին 2 1/2 1875		
Թիւ 90—94. 5 տակառ խոշոր շաքար 450 հօխա. գին 5 2150		
	4025	—
Փոխարէնը հետեւեալ կերպով վճարեց.		
Իմ / հ. իւր տոմսակը 2 / ամսուան համար . 2025		
կանխիկ վճարեց . 1920		
» վճարուած 2000 ին վրայ 4 % զեղջ . 80	4025	—

22 Յունիս 76		
Պրուսացի Յակոբ Պողոսեանի վրաս քաշած հետեւեալ փոխանակագրերն ընդունեցի.		
Թիւ 7 ի/հ. փոխանակագիր, ի 25 Յունիս. 20000		
» 8 » » ի 30 » 50000		50000
25 Յունիս		
Գնեցի Կիւմրուչկերտան եւ Ընկերութենէն		
Թ. 408. 1 հակ ճերմակ մտմբօլ 150 ծր. գ. 65 8450		
» 460. 1 » 6/բպնոց սվչպր" 400 » » 25 9200		
	17650	—
Փոխարէնը վճարեցի հետեւեալ կերպով.		
Ավրամ Նիկօի փոխանակագիրը ի 29 Յունիս. 5000		
» » » ի 15 Յունիս. 5000		
կանխիկ վճարեցի . 7420		
Վար դրած զեղջս 5 % ի վերայ 7650 ի . 250		17650
Նոյն		
Անցեալ ամսոյ 17ին Ֆոթիատիէն գնած չուխա-յիս համար տուած թիւ 2 տոմսակիս գումարը վճարեցի . 10000		
Նաեւ մնացած առնելիքը . 5000		
Նաեւ սաթէններուն փոխարէն տուած տոմսակս ալ վճարեցի . 15000		50000
24 Յունիս		
Յակոբ Պողոսեանի մետաքսներէն մնացած մէկ հակը ծախեցի 1 / ամիս սլայմանաժամաւ Գէորգ Յակոբեանի, թիւ 20. 105 հօխա. գին 450.		47250
25 Յունիս		
Պայմանաժամն այսօր լրացեալ Յակոբ Պողոսեանի վրաս քաշած թիւ 7 փոխանակագիրը վճարեցի.		20000
Նոյն		
Մօրեղբորմէս ժառանգած Բերայի տունս ծախեցի կանխիկ . 26000		26000
Նոյն		
Հետեւեալներուն ծախուած .		
Տրդատ Ներկիպեանի		

100 ծրար պատմա, 5050 մէթրօ. գին 5 1/4	9912 1/2		
Փոխարէնը վճարելի 41 օրէն.			
Յակոր նշխանի.			
45 ծր. պատմա, 1500 մէթր. գին 5 1/2	4550		
50 » մատամբօլ.	» 72	2160	
100 » 6/ր. սավաշար.	» 25	2500	9210
Փոխարէնը կանխիկ վճարուած .			
Ետքար Շէքէրճի օղլուին			
200 ծրար սավաշար. գին 24 1/2		4900	24022
Փոխարէն տուաւ իմ   4. իւր տոմակը 51 օրուան.			
<hr/>			
26 Յունիս 76			
Օհան Մովսէսեանէն ստացայ իւր քով ունեցած 40			
պարկ ալիւրներուս վաճառման հաշիւը .			
40 պարկ ալիւր, 1605 հօխա. գին 2		5210	
իւր յանձնարարականը 2 %		56	
Բեռնակրութիւն եւ զանազան ծախք.	44	100	
		5100	5100
Յիշեալ գումարը իմ տրամադրութեան ներքեւ է:			
<hr/>			
27 Յունիս			
Ղրկեցի Քոէտի Լիօնէի .			
50000			
<hr/>			
28 Յունիս			
Առի Քոէտի Լիօնէին.			
40000			
<hr/>			
Նոյն			
Գնեցի հետեւեալներէն .			
Տիմիթրաքի Գամարզ օղլուէն			
Թիւ 28. 1 հակ բամպակ, 250 հօխ գին 5.		1250	
Փոխարէն տուի թիւ 9 իմ տոմակս 1 Յունիս.		1250	
Պախարացի Ապտիւլէքէրիմ աղայէն			
Թիւ 19. 1 հակ մետաքս, 100 հօխ. գին 220		22000	
Որուն կէսը կանխիկ վճարեցի, իսկ միւս			
կէսը 1/ ամսուան թիւ 10 տոմակաւ մը .			
Մ. եւ Օ. Յակոբեանէն			
Թ. 419. 1 հակ ալ պէշ, 250 ծրար. գին 42.		10500	
Փոխարէնը կանխիկ վճարեցի զեղջերով.			
վճարածս.		9975	
5 % վար զրած զեղջս.		525	35750

<hr/>			
28 Յունիս 76			
Յակոր Պօղոսեանի մետաքսներուն վաճառման հա-			
շիւը Ղրկեցի իրեն, որ է այսպէս			
Թիւ 20. 105 հօխ. գին 450. ի 24 Յունիս.		47250	
» 21. 105 » » 448. ի 19 Յունիս.		47040	
Իմ յանձնարարականս 2 % .	1886	94290	
Ըրած ծախքս.	40	1926	92564
Այս գումարին կէսը 24 Յունիս եւ կէսը 19 Յունիս			
Թուականներով անցան իւր ընթացիկ-հաշուոյն :			
<hr/>			
29 Յունիս 76			
Աւետիս Մելքօնեան Օտեսա ճանրորդերուն համար			
ուղեց որ իրեն վարկ մը բանամ հօն, զոր կատարե-			
ցի Օհան Մովսէսեանի վրայ վարկագիր մը տալով.			
փոխարէնը կանխիկ առի իրմէ .			
5100			
<hr/>			
Նոյն			
Յակոր Պօղոսեանի մետաքսներուն վաճառումէն			
իմ յանձնարարականս 2 % .			
1886			
<hr/>			
30 Յունիս			
Քոէտի Լիօնէին առի 200 լիրա.			
20000			
<hr/>			
Նոյն			
Պայմանաժամս սյսօր լրացեալ Միհրան Եղիազար-			
եանի տոմակին գումարը ստացայ .			
5000			
<hr/>			
Նոյն			
Հետեւեալ վճարումներն ըրի .			
Յակոր Պօղոսեանին վրաս քաշած թիւ 8 փոխա-			
նակագիրը վճարեցի .			
		50000	
վաճառատանս այլեւայլ ծախուց համար.		1000	
Տան ծախուցս համար.		800	
Անձնական » »		500	52500
<hr/>			
1 Յունիս			
Անցեալ ամսոյ Վին Գէորգ Մկրտիչեանէն գնած			
ապրանացս գումարը վճարեցի .			
10225			
<hr/>			
Նոյն			
վճարեցի նաեւ Տիմիթրի Գամարզ օղլուին տուած			
թիւ 9 տոմակս .			
1250			

<b>2 Յուլիս 76</b>		
Ճուճա տօնավաճառի հաշուոյն համար ստացայ թերհաշիւ հետեւեալները .		
Կանխիկ ստակ կապոցով .	10000	
Փոխանկազիր Ա. վրամ Նիկօի վրայ ի 16 Յուլ .	15000	25000
<b>Նոյն</b>		
Ղրկեցի Տրապիզօն Ս. և Յ. Կիրեղեաններուն հետեւեալ սպրանքները իմ հաշուոյն 2 օ/ո յանձնարարականաւ ծախելու համար ,		
100 ծր. սրսմա, 2930 մէթր. գին $5\frac{1}{4}$	9587 $\frac{1}{2}$	
50 » մատամբօլ .	» 75 3750	
100 » ալ սէգ .	» 45 4500	
	<u>17857<math>\frac{1}{2}</math></u>	
Յիշեալ սպրանաց հակի համար զնգն՝ ծախք .	80	
Նաւագին եւայլն .	82 $\frac{1}{2}$	18000
<b>4 Յուլիս</b>		
Գնեցի այսօր Գարրիէլ Գէորգեանէն 50 ծրար ֆանէլա եռնլու. 1949 եարտա. գին $6\frac{1}{2}$		
	12668 $\frac{1}{2}$	
Փոխարէն տուի .		
Թ. 95-99. 5 տկո՞ շաքար, 425 հ. գին $4\frac{5}{4}$	2018 $\frac{5}{4}$	
Եաքար Շէքէրճի օղլուին տոմսակը ի 25 Յուլ .	4900	
Իսկ մնացածին համար իմ վրաս 61/ օրուան փոխանակազիր պիտի քաշէ .		5749 $\frac{5}{4}$
	<u>12668</u>	20
<b>Նոյն</b>		
Յակօր Պօղոսեան 10000 ֆրանք Մարսիլիոյ վրայ փոխանակազրի պէտք ունենալուն՝ ինձ գրեց որ զրկեմ, զորն որ կատարեցի Քոնտի Լիօնէէն առնելով ընթացիկ-հաշուով մէկ փոխանակազիր Քոնտի Լիօնէի վրայ ի Մարսիլիա 22,80 ֆրանքէն վրա Օսմանեան .		45860
<b>5 Յուլիս</b>		
Ծախեցի Մկրտիչ Ղուկասեանին		
50 ծրար մատամբօլ. գին 72 զրուչէն	5600	
100 » սափաչալուր . » 24 $\frac{1}{2}$ »	2450	
	<u>6050</u>	
Փոխարէն վճարեց հետեւեալ կերպով .		

Կանխիկ .	5868	
5 օ/ո զեղչ կանխիկ տալուն համար .	182	6050
<b>6 Յուլիս 76</b>		
Ծախեցի կանխիկ թիւ 28 մէկ հակ բամբակ . 250		
Հօխա . գին $5\frac{1}{2}$ զրուչէն, միջնորդի ձեռօք .	1575	
Միջնորդին վճարեցի 2 օ/ո .	25	1550
<b>Նոյն</b>		
Ճուճա տօնավաճառը ըմբած ըլլալով՝ զրկած սպրանացս զուտ գումարն եղած է հետեւեալը .		
20 ծր. շալաքի, 1028 եարտ. գին $6\frac{5}{4}$	5911	
50 » սեւ սաթէն 1440 » » 7	10080	
5 » չուխա, 229 » » 80	18520	
205 » պասմա, 6148 մէթր. »	17675 $\frac{1}{2}$	
	<u>51986<math>\frac{1}{2}</math></u>	
Այս գումարին դէմ արդէն ստացած գումարս էր .		25000
Մնացորդ գումարը կը կազմեն .		26986 $\frac{1}{2}$
Կանխիկ ստակ .	7986 $\frac{1}{2}$	
Փոխանակազիր Լէպէի վրայ 9/ օրուան	19000	26986 20
<b>10 Յուլիս</b>		
Առի Քոնտի Լիօնէէն .		50000
<b>11 Յուլիս</b>		
Գարրիէլ Գէորգեանի 61/ օրուան վրաս քաշած փոխանակազիրը ինձ ներկայանալով այսօր ընդունեցի .		5749 50
<b>Նոյն</b>		
Գնեցի Պօղոսի և Սարգսի հետ $\frac{1}{5}$ ընկերութեամբ 55000 զրուչի ցորեն, փոխարէնը կանխիկ վճարեցի .		55000
(Վերոյգրեալ խնդիրը լուծելու համար՝ նախ Սնտուկը պահանջող պիտի ընենք ըրած 33000ի վճարումներնու համար, յետոյ Պօղոսը և Սարգիսը նաև (գիս) ընդհանուր ապրանքի անունով իրենց բաժիններուն համար պարտական) :		
<b>12 Յուլիս</b>		
Վերոյգրեալ սպրանաց համար փոխադրութեան ծախք .		500
(Այս գումարը պիտի անցնի $\alpha \frac{1}{3}$ ի հաշուով ապրանքի հաշուոյն պարտքին) :		

13 Յուլիս 76		
1/3 ի հաշուով գնած ցորեններս ծախեցի	36000	36000
14 Յուլիս		
Պայմանաժամն այսօր լրացած Գ. Մուրատեանի տուած թիւ 4 տոմսակս վճարեցի.	10000	10000
Նոյն		
1/3 ի հաշուով գնած ապրանքներնիս ծախուած ըլլալով՝ ասոր հաշիւը պէտք է գոցենք այսպէս.		
Ապրանաց վաճառման գումարը .	36000	
Այս գումարէն պիտի իջնանք յիշեալ ասորանաց համար ըրած ծախքերնիս.	500	
	35700	
Հետեւաբար այս գումարն ունեցանք, որն որ պիտի բաժնուի հետեւեալ կերպով.		
1/3 ը Պողոսին, որ է.	11900	
» Սարգսին, »	11900	
» Իմս, »	11900	35700
(« 1/3 ի հաշուով ընդհանուր ապրանք » ը պարտական պիտի ընենք. Պողոսը, Սարգիսը, իրենց. և ընդհանուր ապրանքը մեր բաժնին համար պահանջող. նոյնպէս նաև Շահ և Զէնը 900 զրուշի համար՝ այս գործողութենէն իմ ըրած շահուս համար ) :		
16 Յուլիս		
Պայմանաժամն այսօր լրացեալ Ավրամ Նիկիօի փոխանակազրին ստակն աւի.	15000	15000
17 Յուլիս		
Պայմանաժամն այսօր լրացեալ Ֆոթիատիին տուած թիւ 5 տոմսակս վճարեցի.	10000	10000
Նոյն		
Պայմանաժամն այսօր լրացեալ Լէպէի փոխանակազրը գանձեցի.	19000	19000
18 Յուլիս		
Տրգատ Ներկիզեան իւր հին հաշիւը վճարեց.	4494	4494
19 Յուլիս		
Ծախեցի կանխիկ 20 ծրար եուն ֆանէլա, 775 եարտա. գին 7 1/4 զրուշն.	5618	5618 30

20 Յուլիս 76		
Տրապիզոն զրկած ապրանացս վաճառման հաշիւն ստացայ.		
100 ծրար պամա, 2950 մէթրո. գին 5 1/2	10525	
50 » մատամբօլ.	5850	
100 » ալ պէզ.	4550	
	18725	
2 % իրենց յանձնարարականը.	575	
	18550	18550
Այս գումարին դէմ ուղած ատենս փոխանակազիր պիտի քաշեմ :		
22 Յուլիս		
Պայմանաժամն այսօր լրացեալ Գ. Մըսըրեանի տոմսակին գումարն ստացայ.	15000	15000
23 Յուլիս		
Պայմանաժամն այսօր լրացեալ Միհրան Եղիազարեանի փոխանակազրը գանձեցի.	5000	5000
24 Յուլիս		
Ղրկեցի դարձեալ Բուէտի Լիօնէին 500 Լ. Օ.	50000	50000
Նոյն		
Գէորգ Յակոբեան իւր պարտքը վճարեց.	47250	47250
25 Յուլիս		
Ստացայ Էտիրնէցի Պողոսիկ Կարապետեանէն իւր հաշուոյն 2 % յանձնարարականու ծախելու համար.		
Թիւ 190. 1 հակ մետաքս, 70 հօխա.		
» 191. 1 » » 80 »		
Այս ապրանաց փոխադրութեան համար վճարեցի գանազան ծախք.	40	40
26 Յուլիս		
Ծախեցի կանխիկ Էտիրնէցի Պողոսիկին մետաքսները		
Թիւ 190. 1 հակ մետաքս, 70 հօխ. գին 160	11200	
» 191. 1 » » 80 » » 162	12960	
	24160	24160

27 Յուլիս 76		
Պողոսիկ Կարապետեանի մետաքաներուն վաճառումէն ինձ վերաբերեալ 2 % յանձնարարականս վար դրի .		484
Նոյն		
Էտիրնէցի Պողոսիկ ինձ հրաման ըրաւ՝ որ իւր հաշուոյն վճարեմ Պողոսիկ Աստարճեանի 200 Լ. 0 .		20000
28 Յուլիս		
Էտիրնէցի Պողոսիկին մետաքաներուն հաշիւը զըրկեցի, որուն գումարը հասած է .	24160	
2 % իմ յանձնարարականս .	484	
Ծախքս .	40	524
		25656
Պողոսիկին վճարածս .		20000
		5656
Մնացեալը ուզած ատենը սխտի վճարեմ :		3636
Նոյն		
Պուխարացի Աստիւլքէրիմէն գնած մետաքսիս հաշիւէն թիւ 10 տոմսակս վճարեցի .		11000
30 Յուլիս		
Քուէտի Լիօնէի հետ ըրած գործողութիւններնու ընթացիկ-հաշուոյն տոկոսները հաշուելով գումարին համար այս յօդուածը շինէ մինչեւ 30 Յուլ .		5066
31 Յուլիս		
Նոյնպէս նաեւ Յակոբ Պողոսեանի հետ ունեցած ընթացիկ-հաշիւնու տոկոսը <sup>(1)</sup> .		278
Նոյն		
Ամսագլխոց առթիւ հեռեւեալ վճարումներն ըրի .		
Վաճառատանս սաշտօնէից համար .	1000	
Տան ծախուց համար .	500	
Անձնական » »	500	1800
<p><sup>(1)</sup> Այս և վերի ընթացիկ հաշուոյն տոկոսներն 30 և տարին 360 որ հաշուելու է :</p>		



# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՈՒԵԿՇԻՌ

## Վ.Ա.Հ.Ա.Ն ԱՐՇԱԿՈՒՆԻՒՆՑ Վ.Ա.ՋԱՌԱԿԱՆԻ

ԳՈՅՔ (ACTIF)

յ 31 Յուլիս 1876

ՊԱՐՏՔ (PASSIF)

ԴՐԱՄ ՅՈՐԿԵՂ		ՎՃԱՐԵԼԻ ՏՈՄՍԱԿԻ Ի ՇՐՋԱԲԵՐՈՒԹԵԱՆ	
Սնունդը գտնուած պատրաստ դրամ .....	79594	20	Տոմսակ, քիւ 5. հ/ւ. Գ. Մուրատեանի ի 14 Օգոստոս . 10000
ԱՆՎԱՋԱՌ ԱՊՐԱՆՔ Ի ՎԱՋԱՌԱՏԱՆ			» » 6. » » ի 14 Սեպտեմբ. 10000
Թիւ 100—109. 10 պարկ շաքար, 845 հոխ. գին 4 5580			» » 11. » Գ. Գեորգեանի ի 11 » 5749 <sup>5</sup> / <sub>4</sub>
» 170—179. 10 » խահուէ, 508 » » 10 5080			ԶԱՆԱԶԱՆ ՊԱՇԱՆՋԱՏԵԱՐՔ
» 49. 1 հակ մեախ, 100 » » 210 21000			Յակոբ Պօղոսեան. իւր առնելիքը ընթացիկ-հաշուէն. 52475
150 ծրար ալ պէզ . » » 40 6000			Պօղոս Կարապետեան. » » 5656
50 » եռնլու ֆանէլա, 1174 եւրա. » 6 7044	42504	»	Մկրտիչ Եանրգեան. » » 2814
ԸՆԴՈՒՆԵԼԻ ՏՈՄՍԱԿԻ Ի ԳՐԱՊԱՆԱԿԻ			Պօղոս Գրիգորեան. » » 900
Տոմսակ Մարտիրոս Գրիգորեանի իւ/հ. 5 Օգոստ. 12670			Սարգիս Մինասեան. » » 900
» Սմբատ Ներսէսեանի » 21 » 2023			40723
Փոխանակագիր Միհրան Եղիազարեանի » 25 » 6000	20695	»	ԳՐԱՄԱԳԼՈՒԽ
ԿԱՐԱՍԻՔ			Զուտ դրամագլուխս .....
Կարասեացս արժէքը .....	2000	»	314909
ԱՐԺԷՔՈՒՂՔՔ			
Բումէլիի երկարուղեաց 10 հաս արժէքը գինը .....	4980	»	
ԶԱՆԱԶԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՔ			
Քուէի Լիօնէ. յիշեալ պանֆային ֆոլ ունեցած սակս 181206			
Մարտիրոս Կարապետեան. յիշեալէն առնելիս 22140			
Ս. Ե. Յ. Կիւրեղեան ի Տրապիզոն. » » 18550			
Տոկոս Ներկիգեան. » » 9912 <sup>1</sup> / <sub>2</sub>	231608	20	
	378382	»	378382

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընդհանուր ապրանք .....	42504	»	Վհարելի տոմսակք .....	25749	30
Գրամարկը .....	79594	20	Զանազան պահանջատեարք .....	40723	»
Ընդունելի տոմսակք .....	20695	»	Գրամագլուխ .....	314909	40
Կարասիք .....	2000	»			
Բումէլիի երկարուղեաց բաժինք .....	4980	»			
Զանազան պատրաստանք .....	231608	20			
	378382	»			

Ներկայ հաշուկշռոյն միշտ եւ ճշտակերտու հետ համաձայն ըլլալը կը հաստատուի:

Կ. Պօլիս, 31 Յուլիս 1876.

Վ.Ա.Հ.Ա.Ն ԱՐՇԱԿՈՒՆԻՒՆԻ

Վ Ր Ի Պ Ա Կ Ք

Երես	Տող	Սխալ	Ուղղիչ
7	14	Կրկնատումարը	Կրկնատումարը
29	15	manufactures	manufactures
55	19	jusqu' a	jusqu' à
»	20	debiterez	débiterez
58	15	au 9	au 29
146	1	5 <sup>րդ</sup>	4 <sup>րդ</sup>



723



« Ազգային գրադարան



NL0297308

4

24.871